

Այունայաց երկիր

Հիստորիկ եվ զրուսարված
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇՆԱՐԿ»
 ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ԳԱՏԱՍՆԱՏՎՈՒԹՅԱՄ
 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
 ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

№ 24-25 (160-161) • 10 սեպտեմբերի 2008թ. • էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru • Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am



1600

ամյա Կաղանք

70 տարի անաջ վերսին սացավ Բաղափ կարգավիճակ

«... Կահանն իր անունով վանքը կոչում է Կահանավանք, որը այնուհետև օրըսօրե ճոխանում է որպես բազմամարդ քաղաք: ... Սուրբ վանքի կառուցումը կարարվել է հայոց 360 թվականին»:

ԱՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ



ԴԵՎՈՒՂ ԱՆԻՃԱՆ | Հայոց երկրում բուն հայկական, ինքնատիպ պարկերները ոչ մի տեղ, բացի Արարա-
 րյան բնաշխարհից, այնպես ճշգրիտ չեն երեւում, ինչպես Սիսական աշխարհում: Ու թեպետ Տուրուբե-
 րանը կենտրոնագույնն է, սակայն Սյունիքն է ամենահամառոտագույնը եղել ազգային ոգու եւ ավանդների
 պահպանության մեջ՝ մշտապես ունենալով նախնայաց նշխարներն ու հուշարձանները՝ գրավոր եւ անգիր:
 Եվ զարմանալին այն է, որ վաղ ժամանակներում, սերտ կապեր չունենալով ժողովուրդների համաշխար-
 հային հանրության հետ, այլ միայն հարելով Նրան, ավելի հարազատ է պահել ազգային ոգին: Եվ սա, ան-
 շուշտ, բնակչության ազատասեր ծագումնաբանության, կորովի ու քաջության շնորհիվ, որով եւ երկար
 ժամանակ դիմակայեցին օտարների բռնություններին՝ օգնական ունենալով եւ իրենց երկրի բնական
 ամրությունն ու դիրքը...
 Եվ գլխավորն այն է, որ Հին Հայկազյան իշխանության եւ անվան անկումից, նաեւ Արշակունիների եւ
 Բագրատունիների թագավորությունից առաջ է հետո, միայն Սյունյաց իշխաններն են կոչվել ՀԱՅԿԱ-
 ԶՈՒՆՆԵՐ:

Դուռդ բաց արա,
 Հայրենի իմ տուն,
 Թող վաղնջական
 Խորհուրդդ շնչեմ,
 Եվ ինձ ճանաչեմ
 Եվ ինձ նվաճեմ
 Մի կրկին անգամ:

ՀԱՍՈՍ ԱՄՅԱՆ

ՀԱՄԱՐՈՒՄ

- «Դինո գոլդ մայնինգ ֆամիլենի» ՓԲԸ գլխավոր սնօրեն Ռոբերտ Ֆալեթսան հավաստիացնում է. «...Եթե մեր ծրագրերն իրականանան այնպես, ինչպես կանխատեսել ենք, ապա երեք-հինգ տարվա ընթացքում Կապանը գրավիչ ու ազդեցիկ վայր կդառնա ապրելու, աշխատելու համար» → 05
- «Վերջին երկու տարում մոտ երեք հազար մարդ է վերադարձել Կաղանք», - հայտարարում է քաղաքապետ Արմեն Կարապետյանը «Այունայաց երկիր»-ում փակած հարցազրույցում → 06
- Հայ ժողովրդի անվանի զավակներից շատերն են տարբեր ժամանակներում այցելել Կաղանք: Նորահայր մի շարք փաստաթղթերի հիման վրա Ռոբերտ էջանյանին հանգել է եզրակացության, որ 1844 թվականին Հերման Աբիխի հետ Կապան է եկել նաեւ Խաչատուր Աբովյանը → 09
- 1881 թվականին Րաֆֆին փորձեց Հալիձորում գտնել Դավիթ Բեկի գերեզմանը, բայց ինչդեպ ինքն է նշել, «...ցավոք սրտի ինձ չհաջողվեց այդ սրբազան դամբարանը տեսնել» → 24
- «Կաղանքի բարբառային միավորները միջին դիրք են գրավում Գորիսի եւ Ղարաբաղի խոսվածքների միջև», - կարծում է բանասիրական գիտությունների թեկնածու Ժաննա Միքայելյանը → 24
- Մոտ 200 տարի (X-XII դարեր) Կաղանք եղել է Սյունիքի թագավորության մայրաքաղաք: Սյունիքի կամ Կապանի թագավորության վեց թագավորների մասին տեղեկություններ է տալիս պատմիչ Ստեփանոս Օրբելյանը → 25

DENO GOLD

Թերթի սույն՝ միացյալ համարի հովանավորն է Կապանի «Դինո գոլդ մայնինգ քամինի» ՓԲ ընկերությունը (գլխավոր տնօրեն՝ Ռոբերտ Ֆալեթսա), որի սեփականատեր խմբին, տնօրինությանն ու աշխատավորական կոլեկտիվին շնորհակալություն ենք հայտնում:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆՂ ԿԱՊԱՆ

ՀՀ Նախագահ ՍԵՐՃ ՍԱՐԳՍՅԱՆԻ ուղերձը կապանցիներին Կապանին քաղաքի կարգավիճակ շնորհելու 70-ամյակի առիթով



Սիրելի կապանցիներ,
1600-ամյա Կապանը նշում է իր վերածննդի 70-ամյակը: Նշանակալից այդ տարեդարձի կապակցությամբ հղում եմ ամենբիզ իմ ջերմ ողջույններն ու շնորհավորանքը:
Վաղուց ի վեր լինելով Այուրյաց աշխարհի հզոր քաղաքական, տնտեսական ու վարչական կենտրոններից մեկը՝ Կապանը դարձել է շարունակ մնաց հայոց պետականության հուսալի հենասյունը, ունեցավ իր ծաղկման ու անկման ժամանակաշրջանները, քանիցս ավերվեց ու կրկին շենցազվ, եւ բազմիցս դարձավ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի դրոշակակիրը:

Քաղաքն իր երկրորդ ծնունդն ապրեց 20-րդ հարյուրամյակի սկզբին. այս անգամ՝ որպես լեռնահանքային արդյունաբերության կենտրոններից մեկը: Ընդհինիվ մեր ժողովրդի զավակների աշխատասիրության ու մեծ նվիրումի, այն ձեռք բերեց իր ներկա տեսքը:
Վերջին տարիներին հաճախ եմ եղել Կապանում եւ հանգամանորեն տեղեկացել եմ քաղաքի ու տարածքի հիմնախնդիրներին: Համոզված եմ, որ բոլոր այդ խնդիրները լուծելի են եւ աստիճանաբար լուծվում են: Հաճելի է նկատել, որ գրեթե վերացել են պատերազմի հետեւանքները: Կառավարության հոգատարության հետ մեկտեղ, կարծում եմ, ավելի արդյունավետ պիտի օգտագործվեն տեղական ներուժն ու հնարավորությունները:

Այսօր Կապանը մեր երկրի տնտեսական, հասարակական-քաղաքական, մշակութային, կրթական կյանքի կարեւոր գարկերակներից մեկն է: Եվ ես վստահ եմ, որ գալիք տարիները Կապանի համար նշանավորվելու են նորանոր նվաճումներով:
Մեկ անգամ ես ուղջունում եմ բոլոր կապանցիներին քաղաքի տարեդարձի առթիվ եւ ասում. շնորհավոր տոնդ, Կապան:

Հայաստանի
Հանրապետության Նախագահ
ՍԵՐՃ ՍԱՐԳՅԱՆ

Կապանի ծննդյան վկայագիր (առաջին գրավոր հիշատակությունը)

... Եվ Կապանից այստեղ եկավ հայր Հովհաննեսը, վանականներին վերցնելով գնաց գետի ափը, տիրոջից խնդրեց վանականների կարիքների համար ծուկ շնորհել:
Տեսիլքով մի լուսավոր տղանարդ երեւաց, որ քայլում էր գետափով, գավազանը կախել էր ջուրը, եւ

գավազանի ծայրից դուրս էին գալիս ձկների անբավ ու անհամար խմբեր. ինքն էլ նրան բացատրում էր որսի հանգամանքները: Եվ այսպես վանքին արտոնվեց գետի ծուկ որսալ:
Մ.թ. 5-րդ դարի վերջին քառորդ, ըստ Ստ.Օրբելյանի «Այուրյացի պատմություն» երկի

Կապան քաղաքի նոր ծնունդը՝ 1938թ. հոկտեմբերի 1-ին

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության 1938թ. հոկտեմբերի 1-ի հրամանագրով՝ ստորագրված նախագահության նախագահ Մ.Պապյանի եւ նախագահության քարտուղարի պաշտոնակատար Ռ.Գյանջեցյանի կողմից, Ղափանի շրջանի Ղափան բանվորական ավանը փոխակերպվեց քաղաքի՝ պահպանելով նախկին անունը: Ավելի վաղ՝ 1928թ. հուլիսի 26-ին, Հայաստանի կենտրոնական նախագահությունը մերժել էր Ձանգեզուրի գավառի մասին եւ Ղափանի գործկոմի առաջարկը՝ Ղափանի գավառակը եւ կենտրոնը Մարտունավան վերանվանելու մասին: Իսկ ահա 1963թ. հունվարի 12-ին Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի Նախագահության որոշմամբ՝ ստորագրված ՀՍՍՀ Գերագույն Սովետի Նախագահության նախագահ Շ.Ա.Մուշակյանի եւ Նախագահության քարտուղար Ա.Գալստյանի կողմից,

շրջանային ենթակայության Ղափան քաղաքը դասվում է հանրապետական կատեգորիայի քաղաքների շարքին: 1930թ. սեպտեմբերի 5-ը մինչեւ 1995թ. դեկտեմբերի 5-ը Ղափանը համանուն շրջանի վարչական կենտրոնն է: Այդ մասին իմանում ենք ՀՍՍՀ կենտրոնական նախագահության «ՀՍՍՀ գավառները վերացնելու հետեւանքով նոր շրջանների կազմակերպման հիմնական սկզբունքների մասին» որոշումից:
1991թ. Ղափանը վերանվանվել է Կապան:
1995թ. դեկտեմբերի 4-ից Կապանը Այուրյացի մարզկենտրոնն է: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ ընդունվեց ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», ըստ որի՝ Կապանի, Գորիսի, Սիսիանի եւ Մեղրու նախկին վարչական շրջանների հիման վրա կազմավորվեց Այուրյացի մարզը:

Կապանի գինանշանը

2003թ. սեպտեմբերի 30-ին Կապան քաղաքի ավագանին ընդունեց եւ հաստատեց քաղաքի գինանշանը:
Որոշումն ընդունվեց այդ նպատակով հայտարարված մրցույթի հիման վրա:
Կապանի գինանշանը ներառում է քաղաքին բնորոշ խորհրդանիշներ: Այն հավերժությունն եւ արիականությունն խորհրդանշող կլոր շրջանակ է, որի երկնագույն ֆոնի վրա պատկերված է խուստուփ լեռը՝ արեւի նարնջագույն ճառագայթներով ողողված: Շրջանի վերին մասը շրջափակված է Վահանավանքի քարե կամարով (կարմիր գույնի)՝ որպես Կապան



քաղաքի պատմամշակութային անցյալի խորհուրդ: Ներքեի մասուն կարմիր գույնով պատկերված են յոթ բերդեր (համաձայն Կապանի նախկին «Յոթնաբերդ» անվան), իսկ ամենամեծը՝ քաղաքի պատմամշակութային տառերով գրված է «Կապան» բառը:
Ձինանշանի կարմիրը, կապույտը եւ նարնջագույնը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ճառագույն դրոշի երանգներին:
Ձինանշանի հեղինակն է կապանցի գեղանկարիչ Լորիկ Մինասյանը:

Կապան-Ղափանի երկրորդ վերածնունդը

Հնամենի Կապան քաղաքը 15-րդ դարի սկզբում ավերվելուց հետո այնտեղ չկարողացան վերականգնվել ու ջնասկեցվեց եւ ինչպես արդեն նշվել է, նրա անունը թուրքական աղավաղմամբ սկսեց արքատանվել Ղափան, որը երկրի խնամար էր արքայապետին: Այդ Ղափան անունն էլ ժառանգեց 19-րդ դարի 50-ական թվականներին այսօրվա քաղաքի փարածքում ձևավորվող նոր բնակավայրը, եւ հենց այս ժամանակաշրջանին է վերաբերվում մերօրյա Կապանի վերածնունդը:

ՍՄՔԱՏ ԱՏԵՓՈՒՆԱՆ

19-րդ դարի կեսերից սկսեցին գործել Կավարտի, Բարաբաբուրի, Ղափանի, Սյունիքի, Հալիձորի հանքավայրերում կառուցված պղնձածուխական գործարանները: Մինչ այդ, Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո երկրամասի բնակչության թիվը կտրուկ ավելացել էր Պարսկաստանի, Սալմա, Սալմաստ, Մաղարայի եւ Թավրիզի շրջաններից հարյուրավոր պարսկահայերի ներգաղթի շնորհիվ: Պղնձածուխական գործարանների կառուցումից հետո այստեղ աշխատանքի էին գալիս բացի տեղացի հայերից, նաեւ ռուսներ, հույներ, պարսիկներ, թուրքեր, որոնց համար գործարանների տարածքներում կառուցում էին նոր բնակավայրեր: Ընդ որում, հանքագործներն ապրում էին առանձին քաղանասերում՝ կտրված հիմնական բնակչությունից:
Ղափանն աստիճանաբար վերածվում էր բանվորական ավանի՝ կոպիտ կառուցված գործարանային հանրակացարաններով, նրանց սպասարկող խանութներով եւ արհեստանոցներով: Աշխատուժի ներհոսքը դեպի նոր գարգացող արդյունաբերական շրջան հանգեցրեց բնակչության թվաքանակի զգալի ավելացմանը. այսպես, եթե 1831 թվականին Ղափանն ուներ 3612 բնակիչ, ապա 1873թ.՝ 10785 բնակիչ, իսկ այդ թիվը 1897 թվականի տվյալներով հասավ մինչեւ 26137 մարդու: Բնակչության հիմնական զբաղմունքը դեռեւս մնում էր երկրագործությունն ու անասնապահությունը: Ձարգացող հանքարդյունաբերության հետ միասին ստեղծվում էին նաեւ արտադրության նոր ճյուղեր, ծնունդ առան բրուտագործությունը, թիթեղագործությունը, ոսկերչությունը, ջուլիակությունը: Ղափանում, տնայնագործական պայմաններում արտադրվում էին նաեւ երկրամասի սահմաններից դուրս: Գործարաններում արտադրված պղնձից պղնձագործները պատրաստում էին կենցաղային իրեր՝

կժեր, ամանեղեն, զարդարանքներ եւ վաճառում բնակչությանը:
Չափազանց վատ էին բնակչության կենցաղային պայմանները: Ամբողջ Ղափանում ընդամենը հինգ-վեց քարե շենքեր կային, որոնք պատկանում էին տեղական ավագանուն: Այդ շենքերը շրջապատված էին մանր առետրականների ու արհեստավորների բազմաթիվ կացարաններով եւ այդ պատճառով վայրը ստացել էր «բազար» անվանումը: Մշակույթի միակ օջախը Բաքվում աշխատող հայրենակից բանվորների միջոցներով հավաքված համեստ գրադարանն էր, որն ուներ ընդամենը 250 կտոր գիրք: Ավանային կյանքի միապաղաղ առօրյան երբեմն խախտում էին հազվադեպ երեսուցող թափառական աշուղներն ու լարախաղացները: Երեկոներն ավանը թաղվում էր մթության եւ լռության մեջ:
Դանդաղորեն էր զարգանում նաեւ արտաքին աշխարհի հետ փոստ-հեռագրային կապը: Փոստը նամակատարի միջոցով հասցվում էր մինչեւ Շուշի, եւ միայն 1904թ. Գորիս-Ղափան 66կմ երկաթուղային խճուղու կառուցումից հետո բացվեց Ղափանի փոստային բաժանմունքը, իսկ կանոնավոր հեռագրական կապ ստեղծվեց 1911թ: Նույն ժամանակին է վերաբերում նաեւ Ղափանում առաջին 12 համարանոց հեռախոսային ցանցի աշխատանքի սկիզբը:
Քաղաքի զարգացմանը մեծապես խոչընդոտում էր հաղորդակցության ուղիների եւ տրանսպորտի բացակայությունը: Այդ խնդիրը լուծվեց հետագայում, խորհրդային կարգերի հաստատումից հետո: 1924թ. կառուցվեց Ղափան-Միլնցեւան խճուղային ճանապարհը, իսկ 1928թ. կառավարության որոշմամբ սկսում է կառուցվել Ղափան-Միլնցեւան երկաթուղային ճանապարհը:
1930թ. սեպտեմբերին կառավարության որոշմամբ վերացվեց Ձանգեզուրի գավառը, Ղափանի շրջանը ձեւավորվեց որպես ինքուկուրյան վարչական միավոր, որի կենտրոնը Ղափանը 1938թ. դարձավ շրջանային ենթակայության քաղաք:

ՂԱՓԱՆ

Երկնքին մուր - անբառներից
Դեղին լեռներ գահավիժող,
Նրանց դեղին պատարանները
Ես տեսնում եմ - թե՛ արթմնի, թե՛
երազում:

Դեղին գույները չեն մեղմվում
Աշուն ճերմակ սավաններից,
Որ հասել են լեռնակողեր:
Լվացքաբան փոթ կա այստեղ
Ու սավաններ շոյող քամի:

Քաղաք, քարե քո պարբերի,
Քո ուղղաձիգ սահմանների
Ներսն եմ թողել - ինձ ու սերս:

Երկրիս քարե սրբում - քաղաք:
Քաղաք - որ ձույլ երակներով
Անուր կառչել է այս երկրի
Առողջ սրբին - մոլիբդենե
եղունգներով -
Ու պղնձե կաթ է ձծում - կաթ
առնական:

Իմ մանկության քաղաքն ահա -
Խտաբաղեն է ու մանկաղեն:
Եվ պղնձե մարմին ունի - կանաչ
մազեր:

Երկու ճամփա գիպի միայն - որ
մանկանը
Հեռացնում են - փանում հեռու,
Այլ աշխարհներ -
Մի գույգ այրվող, երկաթյա աչք,
Նաեւ մի հին,
Մի փաթ երկինք.

Որի ասպրեղը ցերեկով են երեսում:
Իսկ գիշերը - դեղին գույներն
Արքայազնվում են լեռներից -
Թե՛՝ երկնքից:

Քո երկինքը կայծակներ ու
օրհնանքներ է
Հեղում -
Կախված ձեր Խուսափուփի մի
հայացքից:

Ես հիշում եմ լեռն առնական
Ու ծածկում եմ հոգիս մի փաթ
Կախարհիչով,
Որ դրված էր իմ քաղաքին,
Որպես փանիք, որպես երկինք,
Որպես սահման -
Իմ սիրտ եւ հիշողության:

ՈՍՏԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

«Կապանի օրը Սուրբ Էջմիածնի պատմության մեջ» եւ Աստուծո փան կառուցումը



Հավատքը անցյալին չի պատկանի



Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը Կապան այցելեց 1996թ. նոյեմբերի 26-ին պատմական առաքելությանը: Նա մասնակցեց Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հիմնարկեցին: Հավաքվածներին նա դիմեց օրհնության խոսքով, որից մի հատված ներկայացնում ենք ստորև:

Այսօր ես ի խորոց սրտի փառք եւ գոհություն եմ ընծայում բարձրյալն Աստծուն, որ ինձ շնորհեց իմ մոտավորապես 45 տարիների հոգեւորական կյանքումս, առաջին անգամ լինելով, ձեզ տեսնել, որպես հավատարիմ վկաները չնեմնիլ գիտցող մեր ժողովրդի:

Սիրելի կապանցի իմ հայրենակիցներ, ես եղել եմ Այոնյաց աշխարհում, բայց առիթ չեմ ունեցել գտնվելու Կապանում: 1989 թվականին իմ առաջին այցելությունն եմ տվել Այոնյաց աշխարհին, երբ տակավին Ամենայն հայոց կաթողիկոս չէի: Եկել եմ իմ երջանկահիշատակ Վազգեն Առաջին նախորդ կաթողիկոսի հետ: Եղել էի եղեգնածորում, Վայոց աշխարհում, Սիսիանում, Գորիսում, գնացել էի մինչեւ Շաքիի ցրվեծը, մինչեւ Տաթևի վանքը, անցել էի Սասնայի կամուրջը, բայց առիթ չէի ունեցել գալու Այոնյաց աշխարհի բարեխոսը այս սիրտը:

Եկել եմ, ահա, մի պատմական դեպք ձեզ հետ միասին ապրելու: Դա պիտի լինի եկեղեցու հիմնօրհների արարողությունը: Եվ այսօր սուրբ Էջմիածնում օրհնված մեռուց պիտի խառնվի ձեր քարերին, Աստված երկնքից պիտի միանա ձեր հոգիներին: Եվ այսօր պիտի արձանագրվի ոսկի տառերով Կապանի պատմության մեջ այն տողը, որ ես ինձ եմ վերապահում իրավունքը գրելու ձեր բոլորի ստորագրությամբը: Մենք անցյալ ունենք, բայց մենք անցյալ չենք, մենք ապրող ժողովուրդ ենք եւ ոչ թե հիշող ժողովուրդ ենք: Ոչ թե անցյալով մխիթարվող ենք, այլ ներկայով եռացող ժողովուրդ ենք եւ ապագային պայծառությամբ նայող, ավելի մեծ իրագործումներու հայող ժողովուրդ ենք:

Այս եկեղեցու օրհնությունը, նոր եկեղեցու կառուցումը փաստն է, շոշափելի փաստն է, պերճախոս վկայությունն է, թե մենք միայն չենք ունեցել եկեղեցի, ունենում ենք այսօր եւ պիտի ունենանք վաղը, որովհետեւ մենք հավատք ունենք, եւ հավատքը անցյալին չի պատկանի: Հավատքը մարդ էակի հոգու ծաղկումն է եւ եթե հավատքը թառամի, մարդու հոգին կչորանա: Եվ այսօր եկեղեցու հիմնարկեցը պիտի լինի մի նոր մկրտություն բոլորիս համար, մի նոր սուրբ հոգու ուժի, Աստծու ուժի միացումը մեր ուժերին: Այսօր երկինք եւ երկիր Կապանում համբուրվելու են: Այսօր երկինք եւ երկիր միանալու են եւ մեր հոգիներից բխած հավատքը պիտի թանձրական, շոշափելի արտահայտություն գտնի այս եկեղեցու կառուցումով:

Ահավասիկ, անցնող մեկ եւ կես տարիներու ընթացքին ես առիթ եմ ունեցել շրջելու մեր հայրենի աշ-

խարհի բոլոր անկյունները: Տեսել եմ հնավանդ, քարակերտ շենքեր... շենքեր... Բայց ինչ շենքեր՝ հուշարձան են ասում Հայաստանում: Տաթևը հուշարձան չէ, Տաթևը եկեղեցի է, Նորավանքը քար չէ, հոգի է, եկեղեցի է... Բայց լռել էին մեր եկեղեցիները: Լռեցվել էին մեր վանքերը...

Այսօր մեր ժողովուրդ, մեր նոր, ազատ ու անկախ հանրապետությանը նոր ծայրի են կոչվել, եւ այլևս պետք է դադարեցնեք անցյալի հուշարձաններ ասելու նրանց, պետք է դառնան գործող եկեղեցիներ՝ նոր հոգեւորականներով օժտված: Հայոց եկեղեցու շարակալները, «Առավոտ լուսոյ»-ները, «Փառք ի բարձունս»-ները, «Սուրբ-սուրբ»-երը հայոց պատարագին, Նարեկացու աղոթքը, Ներսես Շնորհալու շարակալը պիտի հնչեն ճառագայթուն այս փոքրիկներու շուրթերից: Այդ շարակալները պետք է երգվեն, նրանց ուժը նրանց երգվելու մեջն է, ոչ թե նրանց հիշվելու մեջն է:

Սիրելիներ, արեւմտյան մեր գրականության պատկանող մի մեծ բանաստեղծ Վահան Թեքեյան, որ ջարդերից, թուրքերի կողմից մեր վրա գործադրված ցեղասպանությունից ազատված, գրեց մի բանաստեղծություն: Նա ասում է.

Հարության շունչն է ահա, ջարդակտոր ազգս իմ,

Հորիզոնն է ծայր տված, որ կփչե մարմնույդ վրա...

Նոր շունչ է, հարության շունչ է: Մեր Հայաստանի ճանապարհները խաչելության ճանապարհներ եղան, գողգոթաներ եղան հաճախ, բայց միշտ հարության տեսիլքով, վերակենդանության, անմահության տեսիլքով զինվեցին մեր հայրերը եւ դրա համար արքեպիսկոպոս: Այսօր Հայաստանը մի նոր Հայաստան է, զգացեք դա եւ միացեք եւ ոչ թե մնացեք պատահ-պատահ:

Ես հաճախ ասում եմ մենք պատահիկներ չենք. մեկս՝ կապանցի, մեկս՝ արարատցի, մեկս՝ դարբասացի, մեկս՝ ապարանցի, մեկ ուրիշը՝ լիբանանահայ, մեկ ուրիշը՝ պարսկահայ, մեկ ուրիշը՝ ռուսահայ... Մենք կտորտանքներ չենք: Մենք բաղարջ ենք, բաղարջ բայց ոչ կտոր-կտոր:

Մի ոսկի թել է անցնում մեր բոլորիս հոգիներից, որ կազմված է երեք տարրերից՝ Լուսավորչի հավատքից, Մեսրոպ Մաշտոցի գիրից եւ քաջն Վարդանի, Սարգսրապատի եւ Արցախի հերոսների սուրբից: Այս է մեր սրբությունը: Այդ է, որ մեզ միացնում է: Այդ ոսկի թելը, որ մեզ կկապի, ամբողջական հայությունն է, միասնական հայությունն է: Ուրեմն՝ բաղարջն ենք պահելու:

Մի քանի օր առաջ, երբ համախմբվել էր մեր պետության ավագանին, հավաքվել էին օտար երկրների դեսպանները քաղաքամայր Երեւանում, եւ նորընտիր նախագահը իր երդման արարողությունն էր անում, գնացել էի օրհնելու նախագահին, մի խոսք հիշեցի մեր պատրիարքներից մեկի. «Ամնիաբանության մեծերը կփոքրանան, միաբանությամբ փոքրերը կմեծանան»: Երբեք մի թողեք, որ մեր ազգի պառակտվածությամբ մեր թշնամիներին ժպիտ, ուրախություն պատճառենք:

Բարեկամներ, եղբայրներ, քույրեր, կյանքում առաջնահերթություններ կան, երկրորդական արժեքներ կան: Որտե՞ղ է մեր առաջնահերթությունը, ո՞րն է մեր գերագույն արժեքի, շահին գիտակցությունը, այնտեղ է մեր հաղթանակին գաղտնիքը:

Այս գաղափարով եմ եկել եւ ուզեք թե չուզեք, այս գիշերը ես այստեղ կմնամ: Չեմ ուզում տեսնել միայն Կապանի ցերեկը եւ արելը: Ուզում եմ վայելել նաեւ Կապանի գիշերը: Եւ ադոր համար էլ այսօր Էջմիածնի տարեգրություն մեջ, տոմարների մեջ պիտի արձանագրվի. «Կապանի օրը սուրբ Էջմիածնի պատմության մեջ»:

Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Երկրորդի խոսքը

/հարված/



Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու նախկին տեղի ունեցավ 2001թ. դեկտեմբերի 1-ին: Համոզեց հայրապետական ներկայությամբ պատվեց Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Երկրորդը:

Ամենայն Հայոց կաթողիկոսը հրապարակեց նաեւ Էջմիածնի Մայր աթոռի օրհնության գիրը՝ ուղղված նրանց, ովքեր անմիջականորեն իրենց ներդրումն են ունեցել, նախածեմնել են եկեղեցու շինարարությունը եւ ավարտին հասցրել: Վեհափառ եկեղեցուն նվիրեց մի սկիւն:

Այս պահին մենք զգում ենք այն բերկրանքն ու ցնծությունը, որ համակել է մեզ, որ պատել է ձեր սիրտն ու հոգին: Կապանում երկար տարիների տքնությունից հետո բացվել են նորակառույց Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու դռները, այս առիթով հրավիրել եք նաեւ ձեր հայրապետին, որ բերի իր օրհնությունները Մայր աթոռ Սուրբ Էջմիածնից, որպեսզի գա եւ կիսի հիշարժան օրվա ուրախությունը: Չե՞ր հայրապետի սիրտը վարակված է ձեր ցնծությամբ ու ուրախությամբ, քանզի ձեր ուրախությունը զորությունն է մեր եկեղեցու եւ զորությունն է մեր կյանքի: Մենք մեր գնահատանքն ենք բերում ձեզ, սիրելի կապանցիներ:

Ամցնող տասնամյակում լայն թափով իրականացվեց եկեղեցաշինություն, կառուցվեցին բազում մատուռներ, սրբատեղիներ, եկեղեցիներ՝ մեծ ու փոքր, կառուցվեցին առաջին հովանավորների շնորհիվ, առաջին բարերարների ազնիվ նկրտումներով: Կապանի եկեղեցին թերեւս այն առաջինն է, որ կառուցվել է ձեր ազնիվ կամատակով, յուրաքանչյուրիդ անձնական ներդրումով: Այս եկեղեցին վկայությունն է ձեր հավատքի՝ հանդեպ ձեր սուրբ հայրերը, հանդեպ ձեր անցյալի նվիրական պատմությունը: Այսօր Հայաստանյայց սուրբ եկեղեցին տոնախմբում է սուրբ Թադեոս եւ սուրբ Բարդուղիմեոս առաքյալների տոնը, որոնք հիմնադիրները եղան Հայ առաքելական եկեղեցու: Նրանց սերմանած հունդերը հայոց պարարտ հողում աճեցին ու բարի, առատ բերք տվեցին: 301թ. մեր երկրորդ լուսավորիչ սուրբ Գրիգորի ջանքերով եւ հայոց Տրդատ Արքայի որոշումով Հայաստանում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն:

Այս տարի տոնախմբեցինք եւ շարունակում ենք տոնախմբել մեր հավատքի պետականորեն հռչակման 1700-ամյակը, որն ուղեկցվեց նաեւ ցնծությամբ, բերկրանքով եւ ուրախությամբ, հայոց պետականության վերահաստատման տասնամյակում: Մեր ժողովրդի ուրախությունն այս տարի բազում էր՝ զանազան միջոցառումներ, ցուցահանդեսներ, գիտաժողովներ, մատուռների եւ եկեղեցիների վերաբացումներ, մեր հայրենական կյանքում նորանոր իրագործումների եւ ձեռնարկումների սկիզբ: Այս ամենը երկնքից, մեր երկնավոր հորից իջնում է մեր ազգին որպես վարձատրություն, 1700-ամյա հաստատուն հավատի համար, իրենց աշխատասիրության, իրենց հավատարմության համար դեպի մեր տերը՝ Հիսուս Քրիստոս: Մեսրոպ Մաշտոց անունն է կրում Կապանի այս նոր եկեղեցին, մենք հավատում ենք, որ այս եկեղեցու մանրակերտը պիտի կառուցեք եւ կերտեք ձեր հոգիներում, որ յուրաքանչյուր հայրորդի, Կապանի յուրաքանչյուր զավակ ապրի մեսրոպաշունչ հոգով եւ իր կյանքն անմնացորդ կերպով նվիրաբերի հայրենիքի շինության, մեր երկրի բարգավաճման, մեր ժողովրդի նորոգ կյանքի կերտման նվիրական գործին:

Մասնավոր՝ Գ. Վահանյանի

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ. «Տեր կանգնենք մեր նվաճումներին եւ ավանդույթներին»

ՀԱՐՅԱԶՐՈՒՅՅ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ



Ստանդարտ: Ստանդարտ

Ապանը նշում է քաղաքի կարգավիճակ ստանալու 70-ամյակը: Ի՞նչ խորհուրդ ունի այդ հոբելյանը Չեզ համար:

– Նախ՝ երախտագիտությունս պիտի հայտնեն «Այոնյաց երկիր» թերթի ողջ անձնակազմին, որը հատուկ համարով լուսաբանում է Կապանի՝ յոթ տասնամյակով չափվող ուղին:

Կապանի հոբելյանը շատ լավ առիթ է՝ հայացք ձգելու դեպի նրա պատմական անցյալը, երախտագիտության տուրք մատուցելու այն մարդկանց, ովքեր կառուցել են սերունդներին եւ ժառանգություն թողել գեղեցիկ այս քաղաքը: Տոնակատարությունն առիթ է մեկ անգամ եւս քննելու մարզկենտրոնի օգնիչ-ունտեսական կացությունը, վերահանելու հիմնախնդիրներն ու որոնելու ուղիներ՝ դրանք լուծելու համար: Իսկ ցանկացած տոնակատարություն, առհասարակ, միմյանց հասկանալու, միմյանց սիրելու, համախմբվելու, համերաշխության դրոշմ ծածանելու լավագույն հնարավորությունն է:

Հարավային Հայաստանում վերջին յոթ տասնամյակում Կապանը լուրջ դերակատարություն է ունեցել: Այսօր, իհարկե, քաղաքը նախկին փայլը չունի: Բայց ժամանակին Սյունիք-Ջամգեզուրն արտաքին աշխարհի հետ կապող հանգրվանն էր: Դեռ ավելին, Սյունիք ներկայումս ժողովրդատնտեսական բեռների մեծ մասը տեղափոխվում էր երկաթուղով՝ Կապանով: Երկաթուղու շնորհիվ կառուցապատվեց մի ողջ երկրամաս: Կապանը ճանաչված էր նախկին հորիզոնային Միության սահմաններից դուրս, որովհետեւ նրա արդյունաբերական ձեռնարկությունները, մասնավորապես, Կապանի լեռնահարստացման կոմբինատի արտադրանքը լուրջ համարում ունեցր: Ի դեպ, կոմբինատի եւ քաղաքի մյուս արդյունաբերական ձեռնարկությունների շնորհիվ Կապանում ծեփավորվել էր խոշոր արդյունաբերական կենտրոններին բնորոշ ինժեներատեխնիկական մտավորականություն, զարգացած բանվոր դասակարգ:

Կապանն ունի հնօրյա ավան-

դույթներ, քաղաքի պատմության արձանները գնում են դարերի խորքը: Չնոռանանք, որ Կապանը եղել է Սյունիքի թագավորության մայրաքաղաքը, 18-րդ դարակազմին բռնկված ազատագրական պայքարի կենտրոնը: Իսկ Արցախյան գոյամարտի օրերին քաղաքը շատ զրկված էր սեփական, զոհեր եղան նաեւ խաղաղ բնակչության շրջանում, քանզի քաղաքը պարբերաբար իրեն ստիճանում էր, եղան ավերածություններ:

– Հինգերորդ տարին է, ինչ պաշտոնավարում եք, մարզկենտրոնում մոտիկից չփվում եք կապանցիների հետ, ինչպե՞ս կրնա թագործի Կապանն ու կապանցիներին:

– Կապանի ու կապանցիների հետ շփումներ են եղել դեռես խորհրդային տարիներից, շատ ընկերներ են ունեցել: Արցախյան պատերազմի տարիներին եւս Կապանի հետ առնչություններ են ունեցել: Իսկ հասարակության լայն շերտերի հետ շփվեցի, երբ 2003-ին առաջադրվել էի Աժ պատգամավորի թեկնածու, ու այն ընտրատարածքը, որտեղից պիտի ընտրվեի, ընդգրկում էր Կապան քաղաքի մի մասն ու շրջակա գյուղերը: Մոտիկից շփվելով կապանցիների հետ՝ զգացի, որ նրանք մեղմ, բարյացակամ բնավորության տեր մարդիկ են, նաեւ պետական մտածելակերպ ունեցող: Ասում են, չէ՞, ժողովուրդը տարածքին է արժանի, տարածքն էլ ժողովրդին... Մի խոսքով, Կապանում իրաշալի ժողովուրդ է ապրում:

– Կուզեի, որ Դուք՝ որպես մարզի ղեկավար, ներկայացնեիք կառավարության որդեգրած քաղաքականությունը մարզկենտրոն Կապանում:

– Միշտ արտահայտել եմ այն միտքը, որ ճանաչարից նորոգելիս ոչ թե առաջին փուլը լցնելիս պիտի ուրախանալ, այլ վերջին: Կապանում բացթողումներ շատ կան, իմ պաշտոնավարության օրոք լուրջ գործեր նախաձեռնվեցին Կապանում: Կան նաեւ կոնկրետ ծրագրեր, որոնք հաստատվել են կառավարության կողմից: Որոշները քննարկման փուլում են, որոնց էլ լուծման ճանաչարիները, եւ ֆինանսավորման աղբյուրները կան: Քանի որ տարին հոբելյանական է Կապանի համար, որոշել ենք բարձրացնել այն խնդիրները, որոնց

լուծմանը կապանցին սպասում է: Խնդիր չի իմնախնդիր լուծման վերջը, կարծես, երեւում է: Մոտ 20 տարի քաղաքային տնտեսության համար ցավոտ հարց է եղել 260 բազմաբնակարան շենքերի հարթ եւ լանջավոր տանիքների նորոգումը: Ծարուհակվում է փողոցների բարեկարգումը, Վաչագան տանող ճանապարհը հիմնովին նորոգվել է, հիմնադրման օրվանից Կապանի մշակույթի կենտրոնը հիմնովին չէր նորոգվել, ինչն այսօր ընթացքի մեջ է: 2008-ի պետությունով նախատեսվել էր շարունակել Կապանի թիվ 11, 13 դպրոցների եւ թիվ 3 հատուկ դպրոցի հիմնանորոգման աշխատանքները: Շուտով այդ աշխատանքներն ավարտին կհասցվեն: Սկսված են 150 մլն դրամ նախագծանախահաշվային արժեքով Կապան քաղաքի 8 հարթ եւ 18 լանջավոր տանիքների հիմնանորոգման, ինչպես նաեւ Արամ Մանուկյան եւ Գրիգոր Արզումանյան փողոցների ասֆալտապատման աշխատանքները՝ 185 մլն դրամ նախագծային արժեքով, որն ընդգրկում է Հունան Ավետիսյան փողոցի կենտրոնական կամրջից մինչեւ Կապանի ճարտարագիտական քոլեջն ընկած ճանապարհահատվածը: Եվ այսպես շարունակ: Կառավարությունը հնարավորն ամուս է, բայց պիտի նշեմ՝ Կապանը չեն ու բարեկարգ տեսնելու համար պիտի նախաձեռնախնդիր լինեք բոլորս, նաեւ տեղացի գործարարների ներուժն օգտագործելով: Ի վերջո, այն Սյունյաց աշխարհի կենտրոնն է: Օտարերկրացի հյուրերը, մարզ այցելելով, առաջինը Կապան են ժամանում եւ առաջին տպավորությունը մարզկենտրոնից են ստանում: Եվ ոչ միայն: Տարվա ընթացքում մարզի հեռավոր բնակավայրերի ղեկավարները երեք-չորս անգամ (եթե ոչ ավելին) գործի բերումով այցելում են մարզկենտրոն: Ամեն անգամ Կապան գալով՝ նրանք մի ուսանելի բան պիտի տեսնեն:

– Եվ ամենից շատ ի՞նչն է մտահոգում Ձեզ Կապան քաղաքում:

– Մարզկենտրոնի մշակույթային զարկերակը համաչափ չի բարբախում: Սա, կարծում եմ, լուրջ բացթողում է: Ըստ իս, Կապանի մշակույթի կենտրոնը նորոգելուց հետո որոշ չափով այդ քաղաքը կարող է ծաղկել է, որ շատ-շատերը երես են թեթել մշակույթից, մինչդեռ այդուհետեւ մշակույթից մեք հզոր եղել: Եվ Կապանի այցեքարտը մշակույթն է եղել ու պիտի լինի: Եվ երբ մարզպետարանի մշակույթի բաժինը որեւէ ծրագիր է ներկայացրել, դրա ֆինանսավորման համար կարողացել ենք գումար հայթայթել: Մի խոսքով, մշակույթի մարդիկ էլ նախաձեռնություն պիտի դրսևորեն: Ինքս էլ, զուցե բացթողումներ են թերացումներ ունեն, չեն ուզում ամեն ինչ բարդել ուրիշների վրա: Պարզապես ասում եմ այն մասին, ինչը պակասում է մեր կյանքում: Հավանաբար շեղվելու են հարցից, բայց այս համատեքստում չեն կարող չնշել, որ Կապանն ավելի քան քաղաքականացված է: Մի այլ մտահոգություն էլ կան ինչ եվրոպականացնելը, համաշխարհայնացնելը մեզ լավ հանգրվան չի հասցնի: Մեր պատմության վերջին երկու տասնամյակում մենք նաեւ ձեռքբերումներ ունեցանք, ուրեմն տեր կանգնեք մեր նվաճումներին եւ ավանդույթներին: Սյունցիներս հարուստ կենսագրություն ունենք, պարզապես տեր պիտի կանգնենք այդ կենսագրությանը: Դարեր ի վեր պետականություն չենք ունեցել, բայց հայ ընտանիքի անրության,

եկեղեցու եւ մշակույթի շնորհիվ հասել ենք մեր օրերը:

– Իսկ կարելի՞ է մարզկենտրոնում կատարվածը ներկայացնել թվերի տեսքով:

– Այդ թվերը կներկայացնեմ մարզի մասշտաբով, որպեսզի հասկանալի լինի Կապանում կատարվածը: 1996-ից 2004-ն ընկած ժամանակամիջոցում կապիտալ շինարարությանը հատկացվել է 730 մլն դրամ, 2004-ի առաջին եռամսյակում միայն այդ թիվը կազմել է 1 մլրդ 300 մլն դրամ: Լուրջ աշխատանքներ են տարվել նաեւ միջազգային կազմակերպությունների միջոցով, 2004-ին նրանց միջոցներով 28 բնակարան ենք գնել բռնագաղթած մեր հայրենակիցների եւ զոհված ազատամարտիկների ընտանիքների համար: Իսկ հիմա միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ մարզում 700 բնակարան պիտի կառուցենք: Կատարված աշխատանքների զգալի մասը բաժին է ընկնում մարզկենտրոնին:

– Ըստ Ձեզ՝ ո՞րն է կամ որո՞նք են հրատապ խնդիրները մարզկենտրոնում:

– Ինձ՝ որպես մարզպետի, նախառաջ մտահոգում է կանանց զբաղվածության խնդիրը: Կապանում այս հիմնահարցը սուր բնույթ է կրում: Մարզկենտրոնի որոշ փողոցներ պարզապես անանցանելի են դարձել, ինչը հարուցում է բնակչության արդարացի բողոքը: Այսօր մարզկենտրոնի աղբահանությունը հեռու է բավարար լինելուց: Մշակույթային կյանքի բացակայության մասին արդեն մշտնապես:

– Պարոն մարզպետ, ես մի կարեւոր հարց չենք կարող շրջանցել: Բանն այն է, որ տարբեր ժամանակներում քաղաքը եթե առանկա բնակավայրերը՝ Կավարտ, Բարաբաթուն, Բարաբաթուն, Վաչագան, Բեխ, մտցվել են Կապանի շրջագծի մեջ, դրանք այսօր քաղաքի քաղամասեր են, բայց մի տեսակ անտեսված են, օրինակ՝ Վաչագանը կամ Կավարտն ինչո՞վ են շահել՝ միանալով Կապանին: Մինչդեռ եթե առանձին գյուղի կարգավիճակ ունենային, համայնքի ղեկավար կունենային, որն իր բնակավայրի հարցերը կբարձրացներ տարբեր առարկաներում:

– Ընդունում եմ հարցի դրական եւ բացասական կողմերը: Եթե մտովի մի քանի տարի հետ գնանք, պիտի փաստենք, որ 1960-70-ական թվականներին Ղափանի գյուղական համայնքներից մարդկանց տեղափոխեցին շրջկենտրոն, որովհետեւ լեռնահանքային արդյունաբերության մեջ եւ մյուս ձեռնարկություններում աշխատուժի կարիք կար, գյուղերը դատարկվեցին, գյուղերը ծերացան: Բայց այսօր այդ աշխատատեղերը վերացել են, քանի որ լուծարվեցին կամ սեփականաշնորհվեցին արդյունաբերական ձեռնարկությունները՝ փաստորեն փակվելով իրենց դռները: Նախկին գյուղաբնակն այլևս գյուղ չկերտարձակ, քանի որ հետ է վարժվել հողի վրա բանելուց: Երիտ էք, այսօր ձեր նշած բնակավայրերի մասին լրջորեն հոգ տանող չկա: Նվազել է քաղաքային համայնքի բյուջեն, եւ եղածով մտածում են կենտրոնական, տեսանելի հատվածների հոգսերի մասին:

Քաղաքի այդ արվարձանների մասին հիշում եմ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ: Ընտրություններից հետո դրանք մոռացվում են մինչեւ մյուս ընտրություն: Առաջիկայում այս հիմնախնդիրը կփոր-

ծենք ուսումնասիրել հանձնաժողովի միջոցով եւ, հարկ եղած դեպքում, առաջարկություններ կներկայացնենք կառավարություն:

– Կուզեի, որ անդրադառնայիք կոմբինատ-Կապան փոխհարաբերությանը: Վերջին մի քանի տարում այդ կապը միանշանակ չի ընկալվում: Ձեռնարկության սեփականատիրոջ փոփոխությունից հետո, ի՞նչ եք կարծում, նոր ղեկավարությունն ինտեգրվե՞լ է քաղաքի մերթին կյանքին:

– Ղափան բնակավայրը դեռես 1850-ական թվականներից կառուցվել է կոմբինատի շուրջը եւ նրա հիմքի վրա: Վերջին յոթ տասնամյակում էլ քաղաքի կառուցապատումը մեծապես կոմբինատով էր պայմանավորված: Բայց պիտի նաեւ խոստովանենք, որ վերջին հինգ տարում կոմբինատը Կապանի մերթին կյանքով չի հետաքրքրվում: Բանն այն է, որ ձեռնարկության սեփականաշնորհումից ոչ միայն փոփոխություններ եղան արտադրական հարաբերություններում, այլև ձեռնարկության ղեկավարությունը ստանձնեցին արտասահմանցիներ, որոնց հետ մոտեցման, հարաբերվելու նոր ձեւեր պիտի ընտրեինք: Եթե հիշում եք, կոմբինատի նախկին սեփականատերերի հետ խնդիրներ ծագեցին: Կոմբինատի աշխատակիցները գործադուլ էին հայտարարել չվճարված պարտքերի համար, հանդիպումներ ունեցանք թե՛ գործադուլավորների, թե՛ ձեռնարկության ղեկավարության հետ, հարցը հանգուցալուծելու համար դիմեցինք նաեւ կառավարություն: Ի վերջո, պարտքերի մի մասը փոխհատուցվեց: Առիթ են ունեցել մի քանի անգամ հանդիպել կոմբինատի նոր սեփականատիրոջ հետ: Այն համոզմունքն ունեմ, որ կոմբինատի վիճակը բարելավվում է, նոր սեփականատերերը Կապանում սոցիալական լուրջ խնդիրներ լուծելու մտադրություն ունեն, ինչի ուղղությամբ որոշակի քայլեր են արվում, որը ողջունելի է:

– Ձեր պատկերացրած վաղվա Կապանը:

– Կուզեի Կապանը տեսնել այնպիսի, ինչպիսին 20-30 տարի առաջ էր: Հիշում եմ՝ տարիներ առաջ, երբ գալիս էինք Կապան, ոգեւորություն կար, քաղաքը լիարյուն կյանքով էր ապրում: Ուզում եմ Կապանը տեսնել իր նախկին փայլով: Ուզում եմ՝ կապանցի շրջաբարձի սուլոց լսել: Ցանկանում եմ տեսնել այսպիսի, որ կառավարությունում աշխատանքներ են տարվում, որ Կապանի օդակայանը վերագործարկվի: Իսկապես, կապանցի ղեկավարություն է քաշում ավտոտրանսպորտով երեսան հասնելու համար: Կապանցու վիճակը, կարծում եմ, մեծապես կբարելավվի այն ժամանակ, երբ գնացքը մտնի Կապան:

– Գրեթե պատմություն ունեցող Կապանն իր 70-ամյա հոբելյանն է տոնում: Ձեր բարեմաղթանքներն այդ առիթով:

– Բոլոր կապանցիներին հաջողություններ եւ քաջառողջություն եմ մաղթում, ցանկանում նրանց բոլոր նվիրական ցանկությունների իրականացում: Մարզի ղեկավարությունն էլ կարելիւյն չափ նպաստելու է, որ այդ ցանկությունները հնարավորինս շուտ իրականանան: Ուզում եմ ի սրտե շնորհավորել բոլորին՝ հոբելյանի առթիվ: Պարզապես ուզում եմ ասել՝ ծնունդը շնորհավոր, Կապան:

Ջրույցը՝ ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ

ՀՅՈՒՐԱՍՐԱՀ

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. «ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՎՐԱՐՈՒՄ ՄՈՎ ԵՐԵՔ ԽԱՂԱՐ ՄԱՐՈՂ Է ՎԵՐԱՊԱՐԾԵԼ ԿԱՎԱՅԱՆ»

Կապան քաղաքի այսօրվա ու վաղվա, հիմնախնդիրների, ձեռքբերումների ու զարգացման հեռանկարների մասին է զրույցը քաղաքապետ Արմեն Կարապետյանի հետ:

– Պարոն Կարապետյան, հե՛շտ է, թե՞ դժվար Կապան քաղաքը ղեկավարելը:

– Կապանը բավականին հեռու է մայրաքաղաքից... Մինչդեռ հասկանալի է, որ բոլոր ոլորտներում՝ տնտեսական, քաղաքական, սպորտային, մշակութային եւ այլ, խնդիրներ կարգավորելիս ամեն ինչի սկիզբը երեւանն է: Ու, բնականաբար, մենք չունենք այն հնարավորությունները, որ ունեն մայրաքաղաքին մոտիկ քաղաքները: Միայն այն է, որ բազմաթիվ դժվարություններ է առաջացնում՝ ժամանակի, տարածության եւ ֆինանսական առումով:

– Վեց տարի է՝ ղեկավարում եք Կապանը. ինչի՞ն էք ամենամեծ ուշադրությունը դարձնում Ձեր աշխատանքի ներկա փուլում:

– Քաղաքը լեռնահանքային կենտրոն է, այսօր էլ նոր հանքավայրեր են հետազոտվում, հայտնաբերվում: Եթե մինչեւ այժմ մեր առջեւ նպատակ էինք դրել առօրեական խնդիրներ լուծել, այսօր արդեն քաղաքապետարանը պետք է լուրջ ուշադրություն դարձնի բնապահպանությանը: Այսպիսի հոգի լեռնային արդյունաբերություն ունենալը ստիպում է լուրջ վերաբերմունք ունենալ այս հարցին: Բնակչության մեջ այսօր կան հասուն խոսակցություններ կան. Շահումյանի բաց հանքի վերանշակումն է, Կապանի կոմբինատի պրոցեսների թողարկումն է, Քաջարանի կոմբինատի ծավալների ավելացումն է, նոր ծուլարանի կառուցումն է, ուրանի հանքերի շահագործման մասին լուրերն են եւ այլն... Նման գրույցներ մարդկանց մեջ անհանգստություններ են առաջ բերում:

– Եվ ինչո՞ւ մեծան համայնքում քաղաքապետարանը բնապահպանության բաժին չունի:

– 2009թ. բյուջեում նախատեսել ենք ունենալ բնապահպանության եւ իրավաբանական բաժիններ: Եվ չնայած դեռ բաժին չկա, ոլորտի մասնագետներ ունենք, եւ այդ ուղղությամբ աշխատանքներ տարվում են:

– Վերջին տարիներին ի՞նչ ուղղություններով են ներդրումներ կատարվել քաղաքում:

– Եթե երկու-երեք տարի առաջ ներդրումներն ամբողջովին ուղղված էին բնակֆոնդի պահպանմանը, վերականգնմանը, պատուհանների, ռմբակոծված շենքերի վերականգնմանը եւ սնանկատեղի այլ խնդիրների լուծմանը, այսօր արդեն լուրջ ներդրումներ են կատարվում սպորտի, մշակույթի ուղղությամբ: Երեսուհից ավելի տարիներ այս բնագավառներում ոչինչ չէր կատարվել: Այսօր արդեն հիմնադրվել են մշակույթի կենտրոնը, հասկապես կարելու է, որ լուծվել է ջեռուցման խնդիրը, նախկինում ձմռանը հնարավոր չէր միջոցառումներ անցկացնել: Ավարտին է հասցվել սպորտդպրոցի հիմնադրումը, որտեղ 16-ից ավելի մարզաձեւեր ունենք:

– Սպորտ եւ մշակույթ ստելով՝ չհասկանանք միայն շինությունները, քաղաքապետարանն ունի՞ հնարավորություններ՝ զարկ տալու դրանց զբաղմունքին:



Նամակապետ Ա. Կարապետյան

– Թվում է, թե մի տանիք վերանորոգելու համար բավականին զուժար է պետք: Բայց առավել լուրջ զուժարներ են պետք լինում մեկ սպորտային կամ մշակութային միջոցառում պատշաճ մակարդակով կազմակերպելու, այստեղից տարբեր մրցույթների խմբեր ուղարկելու համար: Իհարկե, քաղաքապետարանն այսօրվա դրությամբ այդ հնարավորությունները ունի, բայց հովանավորներ միշտ լինում են: Հատկապես «ԶՊՄԿ» ՓԲԸ-ն է միշտ աջակցում: Եվ ուրախալի է, որ վերջերս Կապանի կոմբինատն էլ է ինչ-որ ձևով (հիարկե, ոչ նույն ծավալով, ինչ Քաջարանի ձեռնարկությունը) արդեն ներդրումներ կատարում: Առանց նրանց օգնության հնարավոր չէ իրականացնել այդ միջոցառումները:

– Ինչպե՞ս եք պատրաստվում մեծ Կապանի քաղաքի կարգավիճակ տալու հորեյանը:

– Հունիսին քաղաքապետարանում խորհրդակցություն եղավ, եւ համապատասխան աշխատանք է հանձնարարվել քաղաքապետարանի բաժիններին: Տոնը կնշենք սեպտեմբերի 14-ին, աշխատանքների կազմակերպման համար նաեւ ստեղծել ենք հանձնաժողով: Չեմ ցանկանում մինչեւ վերջ բացել փակագծերը, թող անակնկալներ էլ լինեն: Այնուամենայնիվ, նախատեսված են բազմաթիվ միջոցառումներ, հուշակոթողներ կբացվեն, քաղաքին վերաբերող նոր ձեռնարկումներ կլինեն: Աշխատում ենք տեղական ուժերը ներգրավել, բայց կընդգրկվեն նաեւ դրսի ուժեր, կլինեն հյուրեր: Հիմա Սփյուռքի մեր բոլոր համաքաղաքացիներին էլ ենք ձգտում տեղեկացնել տոնի մասին եւ նրանց եւս ընդգրկել:

– Ի վերջո, տարիների ընթացքում խնդիրներ են լուծվում, եւ դրանք առաջնահերթությունները փոխվում են: Որո՞նք եք համարում այսօր Կապանի առջեւ ծառայած հիմնախնդիրները:

– Գիշտ է, տարիների ընթացքում փոփոխություններ են լինում, խնդիրը, որ կար 2003-ին, այսօր իսպառ վերացել է: Հարցեր էլ կան, որ մեկ տարում, մեկ ամսում հնարավոր

չէ լուծել, որովհետեւ դրանք վերջ չունեն, շարունակական են: Օրինակ, տանիքները վերանորոգել ենք, բայց 5-6 տարի հետո նույն տանիքն արդեն նորից պիտի վերանորոգել: Եվ մեծ խնդիրների լուծումն արդեն բնականոն ռեյտերի վրա է: Տարի չկա, որ, օրինակ, 200 մլն դրամի սահմաններում տանիքի վերանորոգման հարց չլուծվի:

Ամենաառաջնահերթ խնդիրն այսօր մեր քաղաքում համարում են այն, որ ստեղծվի այնպիսի մի ձեռնարկություն, որտեղ 200-300 կին կաշխատի: Այսօր Կապանում տղամարդու աշխատատեղի խնդիր չկա: Գիշտ է, կարող է չկարողանան ըստ մասնագիտության իրենց տեղը գտնել, բայց փոխարինող գործ անպայման կգտնեն:

– Ի՞նչ միտումներ կան քաղաքի զարգացման ընթացքում, դեպի ո՞ւր է գնում Կապանը:

– Մեր քաղաքը լիքն էր գործարաններով, որոնցում խորհրդային տարիներին 19 000 աշխատող կար: Հիմա չկան այդ գործարանները, չկա նախկին արդյունաբերական Կապանը: Ի՞նչ ենք արել վերջին 5-6 տարում. մայել ենք՝ ինչ ենք արել նմանատիպ պետություններում, քաղաքներում ու փորձը բերել մեր քաղաք: Նախկինից դատարկ մնացած այն տարածքները, կլինեին դրանք հողատարածքներ թե շինություններ, որտեղ հնարավոր էր որեւէ արտադրություն կազմակերպել, ինչ-որ բան կառուցել, սպասարկման կետ բացել, հատկացրել ենք դիմողներին՝ պահպանելով քաղաքաշինության նորմերը: Ու սկսվեց անընդհատ աճը, վերջին 4-5 տարում 3400-ից ավելի մարդ է ընդգրկվել նման աշխատանքներում: Այսպիսով՝ փոքր ու միջին բիզնեսն է զարգանում:

Գիշտ է, ունենք կոմբինատներ, բայց այդ ոլորտներում էլ տատանումներ հնարավոր են: Դրանք հզոր աճ են ապահովում, բայց հնարավոր պարտապարտի, փոփոխությունների ընթացքում մեր քաղաքը կշնչի փոքր ու մեծ բիզնեսով: Ինչքան մարդիկ կան, որ մինչեւ 2000-2001 թվականները փող էին խնդրում հաց գնելու

համար: Հիմա այդ ընտանքները, երբ մի խանութ, տաղավար են կառուցել, արտադրամաս հիմնել, ուրիշներին են օգնում:

– Եթե մի ցուցանիշ նշեք, պատկերը գուցե ավելի հստակ կլինի: Ամենաշատն ի՞նչ հարցերով էին քաղաքացիները դիմում Ձեզ տարիներ առաջ եւ ի՞նչ՝ հիմա:

– 2002 թվականից, երբ ընտրվեցի, մինչեւ 2004-05 թվականներն անընդհատ գալիս էին փող խնդրելու. հացի պարտքեր ունեն խանութում, էլեկտրոգիտի վարձը չեն կարողանում վճարել, բնակարանը գազիֆիկացնել, երեխայի ուսման համար վճարել եւ այլն... Այսինքն՝ դիմում էին սոցիալական հարցերով: Տարեցտարի դա նվազեց. այսօր քաղաքապետի մոտ եկողներից 100-ից մեկը կարող է մնան խնդրանքով դիմի: Այսօր հիմնականում դիմում են՝ տարածք ու հող վերցնելու համար: Ամբողջ քաղաքապետարանը, քաղաքաշինության բաժինը հիմա այս ուղղվածությամբ է ծանրաբեռնված աշխատում: Մա խոսում է այն մասին, որ քաղաքը կառուցվում է, մարդիկ ցանկանում են իրենք ներդրում կատարել քաղաքում, որ ընտանիք պահեն:

Եթե մարդն ունի գումար ու դիմում է, ուրեմն պիտի հնարավորություն տաս այդ փողը տեղում ներդնի, պատ կառուցի, հաստոց դնի եւ այլն: Եթե աշխատի, մնալու է այստեղ, եթե մարդուն չընդառաջես, հաստատ այդ գումարը հերիքում է, որ թողնի գնա այստեղից: Քաղաքապետարանի վարած քաղաքականությունն այն է, որ մեծ մարդկանց օգնի գործ սկսել քաղաքում: Սրանով նախ՝ մարդիկ աշխատատեղ են ունենում, ու հետո՝ չնոռանանք, որ սահմանի մոտ ենք քաղաքում, եւ շատ կարելու է, որ մարդիկ այստեղից չեն հեռանում, նախկինից պես արտագաղթ երեսույթը չկա, եւ նախկին մեկնածուները վերադառնում են:

– Ինչպե՞ս եք արտագաղթը վերահսկում, ի՞նչ հիմքեր կան ասելու, որ մարդիկ վերադառնում են, հնարավոր է հաշվել եկողների թիվը:

– Ասեմ՝ սա ինչպես ենք հաշվարկում: Եկողներին քաղաքապետարանը տեղեկանքներ է տալիս երեխաների մանկապարտեզի, դպրոցի, ջրամատակարարման վերականգնման եւ այլ աշխատանքների համար: Այսինքն՝ վերադարձողների թիվը ինչ-որ կերպ հնարավոր է լինում վերահսկել: Վերջին երկու տարում մոտ 3000 մարդ է վերադարձել Կապան:

– Պարոն Կարապետյան, վերջին տարիներին քաղաքում տեսանելի է շինարարական բուռնը: Բայց հաճախ դժգոհություններ են հնչում, հատկապես, եթե դրանք կցակառուցված են բնակելի շենքերին կամ բակերից տարածք են խլում: Չե՞ր կարծիքով, հաջողվում է քաղաքի ճարտարապետական տեսքը պահպանել:

– Անկեղծ լինեմ. եթե պիտի մտածեք, որ 50 տարի հետո, 100 տարի հետո այս կառույցը չպիտի լինի... Իրականում չենք կարող պաշտպանվել դրանից: Մենք հաշվի ենք առնում 20-30 տարվա հեռանկարը: Իհարկե, լինում է օրինակներ, երբ ստիպված՝ ոչ թե շինարարական նորմերի խախտմամբ, այլ ճարտարապետական ինչ-ինչ ձեւափոխություններով հողատարածքում ենք լինում: Մա հազվադեպ է լինում, երբ դա էական խնդիր է լուծում, ասենք, հնարավորություն է տալիս մարդկանց աշխատատեղ բացել: Բայց 99 տոկոսը շինարարական նորմերին համապատասխան

տասխանում է: Ի վերջո, գոյություն ունի քաղաքի գլխավոր հատակագիծ: Եթե անգամ ցանկանանք անօրինական հողատարածքում կատարել, կադաստրում չի գրանցվի:

– Վերջին տարիներին Կապանում բավականին մետաղյա տաղավարներ են վերացվել, բայց դրանք էլի կան՝ հատկապես կենտրոնական մասերում ու փչացնում են քաղաքի տեսքը: Ի՞նչ քաղաքականություն եք որոշեցրել այս հարցում:

– Ոչ մեկին չենք պարտադրել, թե տաղավարը հանեք, բայց երբ այսպան հողատարածքում ենք կատարել, եւ դրանց փոխարեն հիմնական կառույցներ են հայտնվել, մեծ խանութներ, բնակիչները առեւտուր չեն կատարում նման տաղավարներից: Դրանց մեծ մասը վճարում է հիմա աշխատում, ուրեմն ինչո՞ւ պիտի աշխատեցնեն: Արդեն 200-ից ավելի տաղավարներ են հանվել: Քաղաքապետարանն այնպիսի քաղաքականություն չի տանում, որ հանվեն: Մենք տալիս ենք ժամանակակից խանութներ կառուցելու հնարավորություն, եւ դրանք ինքնընտրությամբ վերանում են: Իսկ եթե նրանց, ովքեր դեռ շարունակվում են աշխատեցնել, ստիպես հանել, կարող են բողոքել, թե իրենց հացի փողը խլում ենք: Կամ էլ առաջարկում ենք տեսանելի տեղից հանել, այլ վայրում տեղադրել: Միանգամից կոշտություն չենք առնում, սա ավելի ճիշտ քաղաքականություն են համարում. ժամանակը, շուկան իրենք են այդ հարցը լուծելու:

– Շատ կապանցիների համար ներկայիս ամենացավոտ խնդիրը աղբահանությունն է, քաղաքի փողոցների, գետերի կեղտոտ վիճակը: Սազո՞ւմ է մեր քաղաքին մեծ տեսք ունենալ:

– Հազարավոր հարցեր են լուծվում մեր քաղաքում, բայց աղբահանության հարցը չի լուծվում... Վատ վիճակ է, եւ ոչ միայն Կապանում: Մա չեն ասում Կապանի քաղաքապետարանին արդարացնելու համար... Ինչքան մեծանում են առեւտրի ծավալները, ավելանում են սպասարկման կետերը, աղբն էլ է շատանում: Օրինակ, Կապանում 2003թ. աղբ էր տեղափոխվում օրական 2-3 երթուղով: Այսօր 19-20 երթուղի կա, բայց վիճակը շարունակվում է անմխիթար մնալ:

Բացի այդ, 30 տարուց ավելի քաղաքում բնակարան չէին նորոգում: Այսօր բնակչության 60 տոկոսն ի վիճակի է իր բնակարանը նորոգել: Բայց գիշերը ողջ շինարարական աղբը լցնում են աղբամանները, որի իրավունքը չունեն, առավոտյան էլ բնակիչներն են լցնում, եւ այնպիսի արագությամբ է աղբ կուտակվում, որ հնարավորություն չունենք տեղափոխելու:

Այսօր պակասում են մասնագիտացված մեքենաները: Խորհրդային տարիներին քաղաքում 15 մասնագիտացված աղբատար մեքենա էր աշխատում, այսօր ընդամենը չորսն ունենք: Բայց շուտով նոր աղբատար մեքենաներ կբերվեն (հարցազրույցից հետո մեկն արդեն բերվել է), որոնք այսօրվա մեր մեքենաների եռակի ծավալն ունեն: Կարծում են՝ դրանով հարցն ամբողջապես կլուծվի:

– Բայց աղբահանությունից զատ բնակչությունն էլ պիտի ստիպի քաղաքը մաքուր պահել, որեւէ լճակ ունե՞ք վերահսկելու, որ փողոցում, գետում աղբ չթափեն:

– Կապանում մոտ 40 000

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքն իր դիմագիծը ձեռք բերեց 20-րդ դարի 50-ականներին

Քաղաքի կառուցման գործում շատ մեծ էր «Քաջարանշին» տրեստի դերը: Բազմաձևարկ շենքեր, արդյունաբերական ձեռնարկություններ, կրթօջախներ: Արանք կառուցվել են տրեստի կողմից: Իսկ «Քաջարանշինը», որը 55 տարվա կենսագրություն ունի, գործունեություն էր ծավալում ողջ Սյունիքում: Տրեստի գլխավոր ինժեների պաշտոնը 1967 թվականից զբաղեցրել է Սեդրակ ՂԱԶԱՐԱՅԱՆԸ, ում օգնությամբ փորձեցին վերհիշել քաղաքի կայացմանն առնչվող որոշ մանրամասներ:

Սեդրակ Ղազարյանի մասին: Ծնվել ու մեծացել է գյուղացու ընտանիքում: Հայրը դարբին է եղել, ինը տարեկան էր, երբ կորցրեց մորը: Չորս եղբայր են եղել: Նրանցից երեքը մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին: Եղբայրներից մեկը զոհվեց պատերազմում, իսկ մյուսը՝ Արցախյան գոյամարտում: Օխջի միջնակարգ դպրոցում է սովորել: 10-րդ դասարանում էր, երբ սկսվեց պատերազմը: Դասատուներին ռազմաճակատ ուղարկեցին: 10-ամյա կրթություն չունենալու պատճառով նախ սովորեց Երեւանի ինժուստրիալ շինարարական տեխնիկումում: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել «Քաջարանշին» տրեստում՝ սկզբում որպես վարպետ, հետո՝ աշխույժ, ավագ վարպետ: 1953թ. ընդունվել է Նովո-չերկասկի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական բաժինը: Այն ավարտելուց հետո գործուղեցին «Քաջարանշին» տրեստ. աշխատեց որպես տեղամասի պետ, շինվարչության արտարտեսինիկական բաժնի պետի տեղակալ, որից հետո բաժնի պետ: Որոշ ժամանակով տեղափոխվել է Քաջարանի կոմբինատ, աշխատել տնօրենի տեղակալ՝ կապիտալ շինարարության գծով: 1967թ. Սեդրակ Ղազարյանը կրկին աշխատանքի է անցել տրեստում՝ մինչև 1991թ. զբաղեցնելով գլխավոր ինժեների պաշտոնը:

«Սեծ հայրենականի ավարտից հետո Քաջարանում ստեղծվեց շինարարական կազմակերպություն, որը կոչվում էր շինմոնտաժային վարչություն N2: Կապանում ավելի ուշ՝ 50-ականներին ստեղծվեց շինվարչություն, որը կրկին ենթարկվում էր «Քաջարանշինին»: «Քաջարանշինը» որպես տրեստ կազմակերպվեց,

հիմնադրվեց 1957թ.: Մինչ այդ շինմոնտաժային վարչություններ էին: Տրեստն իր ձեռքն առավ Կապան քաղաքի, ինչպես նաև տարածաշրջանի գյուղերի շինարարությունը:

Իսկ ինչպիսի՞ն էր Կապանը մինչև կառուցապատումը: Հրուցակցիս պատմելով՝ Կապանը ցածրահարկ, անշուք շենքերից բաղկացած մի բնակավայր էր: Միայն մի արդյունաբերական ձեռնարկություն էր գործում՝ Կապանի պղնձահանքային կոմբինատը: 50-ական թվականներից սկսած բնակավայրը սկսեց կամաց-կամաց զարգանալ ու քաղաքի տեսք ընդունել: Բարձրահարկ բնակելի շենքեր կառուցվեցին, արդյունաբերական ձեռնարկություններ՝ «Էլեկտրոն», «Ռելե», լուսատեխնիկական գործարան, կրթօջախներ եւ այլ ուսումնական հաստատություններ: «1968թ. նախագծով սահմանված էր միայն քաղաքի տարածքի կառուցումը, հետագայում մոր տարածքներ հատկացվեցին: Գյուղերում կառուցվեցին ակունքներ, կապի, բուժական կետեր եւ այլ շինություններ», - ավելացնում է Սեդրակ Ղազարյանը:

«Քաջարանշինը» է կառուցել Քաջարան-Արծվամիկ թափուկատարը, ինչպես նաև Քաջարանի, Ազարակի, Կապանի պղնձահանքային կոմբինատների մեծածավալ շինությունները:

Բարդ էր տրեստի աշխատանքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սկզբնական շրջանում շինարարական մեխանիզմներ, ձեռքի աշխատանքը թեթևացնող սարքավորումներ չկային, բոլոր աշխատանքներն արվում էին բանվորական անձնակազմի ձեռքի ուժով: Հետագայում տրեստը կամաց-կամաց համալրվեց մեխանիզմներով, աշտարակային



Սեդրակ Ղազարյան

կռուկներ բերվեցին, որոնցով բարձրահարկ շինություններ կառուցելն ավելի էր հեշտանում: 70-80թթ. արդեն տրեստի կազմում կար 6 շինվարչություն, մեկ շինարարական շարժական շարասյուն:

«Կապանն այսօրվա տեսքը ստացել է 50-ականների կեսերից: Այժմյան քաղաքապետարանի, մարզպետարանի շենքերը կառուցվել են 60-ականներին: Շինարարական աշխատանքներին պատերազմից հետո մեծ մասնակցություն են ունեցել նաև ռազմագերիները՝ ռումիններ, լեհեր, հունգարներ, որոնց մի մասն ազատություն ստանալուց հետո անձնացավ, մյուս մասը մեկնեց: Այդ տարիներին աշխատողների մոտ 25 տոկոսն արդեն ցանցներ էին: Կանանց թիվն էլ քիչ չէր: Ուսումնարան էլ կար, որտեղ մասնագետներ էին պատրաստում: Այն տարիներին մասնագետների կարիք շատ էր զգացվում, ուստի սովորական վարորդներից կռուկավարներ

էին պատրաստում, մետաղագործներ եւ այլ մասնագետներ: Շատ դժվար ֆիզիկական աշխատանքներ էին տանում, պատգարակներով էին շինանյութերը տանում-բերում: Դե պատկերացրե՛ք՝ մի բարձրահարկ շենք կառուցելու համար ինչքան շինանյութ էին ձեռքով տեղափոխում: Առաջին աշտարակային կռուկը բերեցին միայն 1952թ, որը հեշտացրեց բանվորների աշխատանքը:

1956թ. մեծ ջրհեղեղ է եղել, որի ժամանակ մեկ վայրկյանում Ողջի գետով հոսում էր 80 խորանարդ մետր ջուր: Հայրց առաջացավ քաղաքում կառուցել այնպիսի հենապատեր, որ ջուրը չցցվի քաղաք հնարավոր մոր հեղեղումների դեպքում: Ենթադրություն կա, որ 100 տարին մեկ անգամ կարող է 200 խորանարդ մետր ջուր հոսել մեկ վայրկյանում: Դրա համար կառուցեցինք 45մ լայնությամբ հենապատ:

Սեդրակ Ղազարյանը պատմում է, որ քաղաքի կառուցման համար հիմ-

նական շինանյութերը բերվում էին այլ քաղաքներից: Քաղաքի միջով հոսող գետերից էլ էին ավագ վերցնում շինարարության համար, հատկապես վարարուններից հետո, բայց դրանով բավարարվել հնարավոր չէր: Շինարարության համար ավագը բերվում էր Եջմիածնի տարածքից: «Ցեմենտը բերում էինք Արարատի ցեմենտի գործարանից, ամեն օր գնացքները բարձած՝ գալիս էին. չէինք հասցնում բեռնաթափել: 10 վագոն ցեմենտը մեզ մի շաբաթ էր հերիքում: Քարը, ցեմենտը, ավագը դրսից էինք բերում: Կարելի էր ասել՝ Կապան քաղաքը կառուցվեց հանքարդյունաբերության հաշվին: Մեծ էր երկաթուղու դերը: Կապանը, ըստ էության, կառուցվել է երկաթուղու շնորհիվ: Օրական տասնյակ վագոններ շինանյութ էր գալիս: Եթե երկաթուղին չլիներ, Կապանը չէր կառուցվի: Մի բարձրահարկ շենքը 5 ամսում կառուցում էինք»:

Իսկ շինարարությունում որակյալ կարեր ունենալու համար բացվել էր շինարարական տեխնիկում, որտեղ եւ աշխատանքին գալիս եւ դասավանդում էր Սեդրակ Ղազարյանը: Աստիճանաբար տեղական կարիքը սկսեցին պատրաստել: «Վեց մոլորու շինարարություն էինք անում տարեկան: Բացի քաղաքից, նաև գյուղերում էինք աշխատում: Ներկայիս գյուղապետարանների շենքերը, դպրոցները եւ այլ շենքերն այն տարիների կառուցածն են: Տարեկան միայն 25 հազար քառակուսի մետր բնակավայրեր էինք կանոնում, որը կազմում էր մոտ 200 բնակարան», - հիշում է Սեդրակ Ղազարյանը:

Լավագույն շինարարներ Կապանի կառուցման համար աշխատանքի հերոսի կոչում էին ստանում: Հինգարար Գառնիկ Մանասյանը, օրինակ, 70-ականներին արժանացավ սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման, ինչպես նաև ընտրվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, արժանացավ վաստակավոր շինարարի կոչման, իսկ բուլղոզերավար Սամիկոն Սահակյանը՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր ընտրվեց: Տրեստը 2000-2200 աշխատող ուներ: Մեծ պատասխանատվությամբ էին բոլորը աշխատում: «Քաջարանշինը» դեռևս շատ անելիքներ ուներ, պետք է շարունակել իր հսկայածավալ գործունեությունը, սակայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո լուծարվեց՝ այդպես էլ չիրականացնելով նախատեսված ծրագրերը:

ՍԵԴՐԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՅՈՒՐԱՍՐԱԿ

մարդ է ապրում, 9 000 մարդ է արքահանության գունար տալիս... Բնակիչը պիտի սովորի արքահանության համար էլ վճարել այնպես, ինչպես գազի, էլեկտրոգալի, ջրի դիմաց է պարտադիր վճարում: Իսկ արքը չսահմանված վայրում նետել է, կարծես, հիվանդություն է մեր բնակչության համար: Բազմիցս նկատողություն ենք արել, հեռուստատեսությամբ կոչեր արել եւ շարունակում ենք անել...

Եթե կենտրոնական փողոցները քիչ քիչ շատ բարեկարգվել են, ապա դեպի ծայրամասային քաղաքներ տանող ճանապարհներն անմխթար վիճակում են. այդ քաղաքների բնակիչները ե՞րբ կկարողանան նորմալ երթևեկել:

Քաղաքի լուրջ խնդիրներից մեկն է դա, բայց ընթացքի մեջ է, լուծվող է: Ցանկացած քաղաքում, նաև բակերում բարեկարգման խնդիր ունենք: Որոշ տեղերում աշխատանքներ կատարվել են, մնացած վայրերում էլ կկատարվեն, քանի որ այդ աշխատանքները ծրագրել ենք: Նախագահին մի քանի կետով խնդրանք ենք ներկայացրել, մեկն էլ դա է՝ բակերի վերանորոգումը: Պետք ունենում փոփոխություններ պիտի կատարվեն, եւ հատկացում

կլինի: Ճանապարհներն ավելի մեծ ներդրումներ են պահանջում, այդ ուղղությամբ մեծ աշխատանք է կատարում «ԶՊՍ կոմբինատը», պետք ունենում ենք որոշ աշխատանքներ կատարում: Տարբեր ուղղություններով ծրագրեր ենք ներկայացրել, տարբեցուցարի բարեկարգվում են:

Ովքե՞ր են ամենաշատն աջակցում Կապանին, ներդրումներ կատարում այստեղ:

Կապան քաղաքում առաջին հերթին խոշոր ներդրում է կատարում կառավարությունը: Եթե նախկինում մարզերն այնքան էլ ուշադրության կենտրոնում չէին, վերջին երկու տարում ավելի մեծ ուշադրություն է նկատվում. այս տարի պետական միջոցներից մոտ 850 մլն դրամի աշխատանք է նախատեսված Կապանում, բայց կա՞մի ու կանց՞ի 1 մլոնը՝ հաշվի առնելով այն, ինչ կրկին ներկայացրել ենք կառավարություն:

Իսկ մշտապես, դեռևս այն ժամանակներից սկսած, երբ պետական մասն աջակցություն քաղաքին չկար, այստեղ ներդրումներ կատարել եւ կատարում է «ԶՊՍ» ՓԲ ընկերությունը: Միջինը տարեկան 600 մլն դրամի է հասնում Քաջարանի կոմբինատի ներդրումը: Սկսվել է նաև Կապանի կոմբինատի նմանատիպ

գործունեությունը, ճիշտ է, ոչ նույն չափով. այն հատկապես ուշադրություն է դարձնում սոցիալական խնդիրներին: 2003-ից սկսած՝ մեծացել էր միջազգային կազմակերպությունների ներդրումը քաղաքում, բայց վերջին տարիներին սկսել է նվազել:

Միջազգային կառույցներից ո՞րն է Կապանում առավել ակտիվ:

Հատկապես նկատելի է USAID-ի ներդրումը: Քաղաքային զբոսայգին վերակառուցվեց, մուտք-մանկապարտեզների վերանորոգումների են օգնել, գազիֆիկացման հարցերի եւ այլն: Նման ծրագրերում, իհարկե, համայնքն անպայման ներդրում է ունենում:

Այսօր էլ պահպանվում է համագործակցությունն այն պայմանով, որ նախկին 10 տոկոսի փոխարեն մինչև 50 տոկոս ներդրում կատարենք: Այդ պատճառով քիչ համայնքներում են շարունակում աշխատել:

Ինչի՞նչ է քաղաքի այս տարվա ցուցեն:

Բյուջեն հաստատվել է 650 մլն դրամ, բայց 800 մլն-ի կիսանի:

Ինչի՞նչ հաշվին է աճը, եկամուտներն են ավելացել:

Այսօր քաղաքում չկա այնպիսի մի բնագավառ, որ պետք է քաղաքապետարանին տեղական տուրք տա

եւ չանի դա: Բոլորը հարկման դաշտում են: Կոշտության չենք դիմում, բայց ամբողջապես հավաքում ենք սեփական եկամուտները:

Անցած տարի հավաքել էինք 87 տոկոսով, տարվա կտրվածքով 100 տոկոսի հասնում էր, բայց հին պատգռներ գոյություն ունեն, դրանք տարբեցուցարի մարում ենք:

Պարոն Կարապետյան, տարիներ շարունակ խոսում ենք զբոսաշրջության մասին, եւ Կապանն էլ այդ առումով ներուժ ունի, բայց տեղաշարժ չկա: Ի՞նչ է արվում այս ուղղությամբ, ինչո՞ւ չենք կարողանում այստեղ զբոսաշրջություն զարգացնել:

Տեղանքը հրաշալի է, բնությունը պատրաստ է, եւ ցանկացած օտարերկրացի, մտնելով քաղաք, զարմանում է, որ զբոսաշրջությունն այստեղ լուրջ զարգացում չի ապրել...

Դրա զարգացման համար ենթակառուցվածքներ են պետք. մենք ունենք լեռներ, անտառներ, մշակութային, պատմական վայրեր եւ այլն... Բայց գործը կազմակերպելու, դրանք ընդգրկելու, պահելու, պատշաճ ներկայացնելու, սպասարկելու հնարավորություններ չունենք: Պիտի նաև հասկանալ զբոսաշրջիկի կարիքները, իմանալ՝ այլ երկրից այստեղ եկողին ինչ է պետք: Դա զբոսաշրջու-

թյան մշակույթ է, որը դեռևս մեր քաղաքում չկա:

Միտոցե դրա համար մի առանձին կառույց է պետք ստեղծել:

Ճիշտն ասած, ստեղծվել էր եւ՝ հենց քաղաքապետարանում, բայց չկարողացավ կատարել իր առջեղ դրված խնդիրները, հասարակական կարգով էր գործում, առանձին հաստիքներ չկային: Ուստի, դա քաղաքապետարանում չպիտի լինի, շահագրգռված մեկը պետք է առանձին մի կառույց ստեղծի, որը մասնագիտորեն կզբաղվի միայն դրանով: Եթե միայն ամառվա ընթացքում հարեան Իրանի հյուրերին կարողանան շահագրգռել ու բերել Կապան, խոշոր գումարներ կմտնեն քաղաք... Պիտի սկսել թեթև ենթակառուցվածքներից ու աստիճանաբար զարգացնել:

Իրերե վերջաբան, ցանկացնում են, որ ամեն մեկն իր ձեռով, իր հնարավորությամբ սահմաններում նպաստի քաղաքի 70-ամյակը նշելուն, թեկուզ իր բակում մի ծառ տնկի... Ով ինչով կարող է, թող օգնի, որ պատշաճ մակարդակով նշենք տոնը, պահպանենք ունեցածն ու կոնկրետ գործերով արտահայտենք մեր սերը Կապանի հանդեպ:

ԱՐՄԻՆ ԱՎԱԳՅԱՆ

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՅՔ

ԸՍՏ ԱՐԵՎԻԻ ԿԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՐԻ

Կապանի հանքարդյունաբերություն. անցած ուղին

Հայ, ֆրանսիացի, գերմանացի, անգլիացի, ամերիկացի, ռուս և այլ երկրների առաջադարձ մասնագետները, որոնք հնագիտական-երկրաբանական ուսումնասիրություններ են կատարել, հանգել են նույն կարծիքին, որ Կապանի հանքերից պղինձ ձուլվել է շարժվող անցյալում: Կապանի հանքերը մասնագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ Կապանի ապարները շարժվում են, և նախնադարյան եղանակներով կատարվող պղինձի արդյունահանումը մեծ դժվարությունների հետ էր կապված, այդ պարագայում կատարվում էր մեծ ընդմիջումներով և փոքր քանակով:



Հանքարդյունաբերության ոլորտում տեղափոխումը հին Կապանում

Երկրամասի հանքավայրերի մասին վկայություններ կան միջնադարի արաբական և պարսկական աղբյուրներում, հայ մատենագիրների մոտ: Կապանի պղնձահանքերի և մասնավոր գործատերերի մասին հիշատակում է 14-րդ դարի արաբ հեղինակ Ղազվինին: Հանքերի ու դրանց շահագործման մասին հիշատակում է նաև Սյունյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանը:

Հնագույն ժամանակներից բազմաթիվ հանքերի հետքեր են պահպանվել Սյունիքում՝ նաև ներկայիս օգտագործվող հանքերի տարածքում: Հին հունական արխիվներում տեղեկություններ կան, որ Ղաթարի, Կավարտի, Բաշքանդի, Գյունիչի մետաղից պատրաստել են սրեր, դաշույններ ու աղեղ, կարճ ու երկար նիզակներ, տեգեր, վահաններ, սաղավարտներ:

Շրջանը Հայաստանում խոշոր հանքային կենտրոն է եղել:

Սյունիքի հանքերի հնության մասին վկայում են նաև հանքավայրերում հանդիպած փորոտները, գտնված հանքահորային սանդուղքները, բարոցած փայտյա գործիքների մնացորդները:

Կապանի հանքերի մասին լեռնային ինժեներ Էռնի 1910թ. ուսումնասիրությունների հետևանքով՝ Կապանի հանքավայրը կարող էր մեծ քանակությամբ պղնձի արտադրություն կազմակերպել միայն երկաթի յուրացումից հետո՝ մ.թ.ա. 5-7 դարերում: Մինչ այդ պղնձի արտադրությունը կատարվել է երկրի մակերեսին մոտ հարուստ շերտերից քիչ քանակությամբ:

Նախնադարյան ժամանակներում պղինձը ձուլել են «Բարաբաթունի» կավահողից պատրաստած վառարաններում փայտի վառելափայտով:

Այստեղ պղնձագործության հեռավոր անցյալի մասին են վկայում շրջանի տարբեր բնակավայրերում հայտնաբերված պղնձե ու բրոնզե իրերը: Հայտնաբերված կաղապարները վկայում են մ.թ.ա. այստեղ եղած ձուլման գործի մասին:

Հին հուշագրություն պահպանվել է, որ Բարաբաթուն գյուղի մոտ 1279-1290-ականներին գործել է բազմամետաղային հանք, որի հանքաքարի մեջ բարձր տոկոս էին կազմում ոսկին և արծաթը: Հանքը դարձրել շարունակ կոչվում էր «Գյունիչ»: Դա այժմվա Շահունյանի հանքն է, որը

շահագործում է Կապանի լեռնահարստացման կոմբինատը (ներկայումս՝ «Դինո գոլդ մայնինգ քամփ-նի»):

Պատմագրական հուշագրությունը նշված է, որ Սյունիքի թագավորությունում 12-13-րդ դարերում կար դրամի առատություն, որը ստացվում էր ձուլված ոսկուց և արծաթից:

Կապանի հանքերում պղնձի արդյունահանումը թափ է ստանում հայկական ազատագրական շարժման նոր ժամակաշրջանում: 1724թ. Ղարաբաղի մելիքների ներկայացուցիչ Իվան Կարապետը ռուս թագավորին գրում է, որ Սյունիքում կան հանքավայրեր, որտեղ հանքաքարի մեջ բարձր պարունակություն են կազմում պղինձը, արծաթը, ոսկին, արծիճը, ցինկը, որոնք բոլորը միասին են միեւնույն հանքում:

Ռուսական կայսրությունը մասնագիտական հանձնաժողովներ է գործուղում Կապան: Պղնձի արտադրությունը, լայն թափ ստանալով, Կապանում դարձավ ռուս և եվրոպացի կապիտալիստների ուշադրության կենտրոնը:

1835թ. Կապան եկավ գերմանացի նշանավոր երկրաբան Հերման Աբիխը: Առաջին անգամ նա մասնագիտորեն, գիտական հիմքով մանրամասնորեն ուսումնասիրեց Կապանի հանքերի հին փորվածքները: Նա գրել է, որ Յակով Ռոզովի հետ միասին Կապանում ուսումնասիրությունների ժամանակ Կավարտ գյուղից ոչ հեռու գտնվող Սայադաղ լեռան ստորոտում հայտնաբերել են 120-ից ավելի հին փորվածքներ (հանքեր): Նա Ռոզովի հետ պայմանավորվում է Կապանում կառուցել պղնձաձուլարան՝ հանքաքարի հանույթը կազմակերպելու համար:

1841թ. Կապան եկավ ԱՄՆ պղնձի տրեստի ներկայացուցիչ իժեներ Ֆեբեյսը: Նա եռամսյակում աշխատանք կատարեց այստեղ կոնցեռն ձեռք բերելու ուղղությամբ, սակայն Սյունիքի մելիքները ցանկանում էին հանքերը տրամադրել ռուս չինով-

նիկներին: 1843թ. Ռոզովի հետ կրկին գալիս է Աբիխը: Նա 1843-1845 թվականներին Կապանից բացի երկրաբանական ուսումնասիրություններ է կատարել նաև Մեղրիում և Քաջարանում:

Յակով Ռոզովի (ռուս արդյունաբերող, Շուշվա բնակիչ) անունը երկրամասի հանքարդյունաբերության և կոմբինատների հիմնադրման պատմության մեջ շատ է կարևորվում: Բայց նա չի եղել Կապանի հանքերի ոչ հայտնագործողը, ոչ պիտները. մինչ նա էլ հանքերը գործել են, սակայն չունենալով հանքավայրերի մշակման համար միջոցներ և ունենալով ռուսական կողմնորոշում՝ տեղացիները Ռոզովին են գիշել իրենց իրավունքները: Նա 1846թ. թույլտվություն է ստանում կառուցել գործարան և շահագործել Կապանի հանքավայրը: Սակայն 1850-ին հանկարծամահ է լինում, և գործը կիսատ է մնում:

Ռոզովի սկսած գործը շարունակեցին հույները՝ Խարլամպի Կոնդուրովի (ուստա Ավարդի) գլխավորությամբ, որոնք 1850թ. Կավարտում, Բաշքանդում և Ղաթարում հանքեր բացեցին և կառուցեցին ձուլարան-գործարան:

1953 թվականին Խ.Կոնդուրովը կառուցեց Կավարտի պղնձաձուլարանը, այն գործեց 10 տարի՝ աստիճանաբար մեծացնելով հզորությունը: Կոնդուրովները ընթացքում բացում են ավելի հարուստ հանքեր, մի ձուլարանը չի բավականացնում, և կառուցում են Հալիձորի ձուլարանը:

Նրանցից հետո Ազուլիսից եկած Խոջամիրյան եղբայրներն են կառուցում հանքեր վարձակալում, բացում և կառուցում Ղաթարի ձուլարանը: Սկսվում է մրցակցությունը, Կոնդուրովները կառուցում են 4-րդ գործարանը:

Մրցակցությունը խթանեց Կապանում պղնձի արդյունահանումը, այն դարձավ ցարական Ռուսաս-

տանի պղնձի արտադրության նշանավոր կենտրոն: Պղնձն ախտեղից արտահանում էին Ռուսաստան, Իրան, Վրաստան, Նախիջևան, Թուրքիա, այնտեղից՝ եվրոպական երկրներ: 1860-ականներին Կոնդուրովը ձեռնամուխ է լինում նաև Բարաբաթունի հանքերի շահագործմանը, կառուցում Բարաբաթունի գործարանը:

Հետագա տարիներին նոր ձեռնարկատերեր են երևան եկել՝ Լազարեի եղբայրներ, Մուրադով, Մելիք-Փարսադանյաններ, Մելիք-Ղարաբաղյան, Աբաջանյան, «Կովկասյան ընկերություն» և այլն: Բացվեցին նոր հանքեր, գործարկվեցին նոր գործարաններ: Խոջամիրյանները և Կոնդուրովները կառուցում են նոր՝ ավելի հզոր և նոր եղանակներով ձուլման գործարաններ՝ մեքենայացված աշխատանքով: Դա զարկ տվեց նաև հիդրոէներգետիկայի զարգացմանը, ձուլարանների կոլեքին նրանք հիդրոկայաններ կառուցեցին: Էլեկտրական էներգիայի օգտագործումը նոր թափով զարգացրեց պղնձարտադրությունը: Հանքատերերը սկսեցին կառուցել բնակելի շենքեր, հիվանդանոց և այլն, ըստ էության սկսեց կառուցվել նաև Կապան քաղաքը:

1897թ. Մելիք-Ազարյանը Ողջի գետի ձախ ափին՝ Բայդաղում, կառուցեց նոր՝ կատարելագործված գործարան, որը կոչվում էր «Սյունիքի գործարան»: Այստեղ հոսքագծեր էին աշխատում, կիրառվում էին պղնձի ձուլման նոր եղանակներ, և ստացված արտադրանքի ինքնարժեքը շատ ցածր էր: Շատ այլ հանքատերեր էլ սկսեցին իրենց պղինձը հալել այստեղ. Մելիք-Ազարյանը կառուցեց նաև հիդրոէլեկտրակայան, որն ավելի զարկ տվեց արդյունաբերությանը: Մանր հանքատերերը չդիմացան մրցակցությանը և իրենց արտադրանքը սալիս էին նրան: Ձուլարանը առաջինն էր Կապանում, որտեղ ձուլումը կատարվում էր շախտային եղանակով: 1900-ա-

կաններին գործարանն անենախոշորն էր Հայաստանում, արտադրում էր Հայաստանում ձուլված պղնձի 50 տոկոսը (Կոնդուրովի հետ միասին՝ 60 տոկոսը):

20-րդ դարի սկզբում Կապանում գործում էին մոտ 16 մանր ու խոշոր արհեստանոց-գործարաններ: 1907թ. «Բիրժելի վեդոմոստի» պարբերականը Կապանում աշխատող բանվորների թվի մասին նշում է՝ 5000:

Դատական, վարչական, մասնագիտական հարցեր լուծելու համար ստեղծվում է «Ղափանի հանքարդյունաբերողների ընկերությունը»: Ընկերության մշակած նախագծով Մելիք-Ազարյանները 1908-ին Կապանում կառուցում են առաջին հարստացուցիչ ֆաբրիկան: Ֆաբրիկայի խտանյութն ուղարկվում էր Սյունիքի ձուլարան: Աստիճանաբար աճում է հանքաքարի պահանջարկը, շահագործվում են նոր հանքեր:

«Ֆրանսիական կովկասյան արդյունաբերական և մետաղագործական ընկերությունը» 1910թ. գնում է Մելիք-Ազարյանի գործարանը և որոշ հանքեր: Հետագայում ֆրանսիացիները գնում են նաև մանր հանքատերերի հանքերը: Նրանց զուգահեռ աշխատում էին միայն Կոնդուրովներն ու Խոջամիրյանները:

Առաջին համաշխարհային ճգնաժամի խոջամիրյանները նույնպես իրենց հանքաքարը հանձնում էին ֆրանսիացիներին, միայն Կոնդուրովներն էին պահում պղնձաձուլարան: Ֆրանսիացիները Կապան են ներմուծում հզորագույն տեխնիկա, մեխանիզմներ ու սարքավորումներ: Վերագինում են տեղի ողջ հանքարդյունաբերությունը: Ֆրանսիացիները նաև մեծ ուշադրություն էին դարձնում երկրաբանական-մետալուրգիական աշխատանքներին:

Կապանը աշխատուժ էր ձգում տարբեր տեղերից. հայերից բացի այստեղ աշխատում էին պարսիկներ, հույներ, վրացիներ, արդեշեցիներ, թաթարներ, մինչև անգամ՝ եվրոպայից եկած բանվորներ: Պղնձի թողարկումն աճեց 15 անգամ, կառուցվեց նոր՝ ավելի հզոր պղնձաձուլարան՝ օժանդակ արտադրամասերով և հիդրոկայան:

Եթե 1890թ. Կապանի հանքերի բոլոր ձուլարանները միասին արտադրում էին 25.900 փուս պղինձ, ապա 1917թ.՝ միայն ֆրանսիացիների կառուցած նոր ձուլարանը՝ դրա կրկնապատկեց:

Տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման շնորհիվ հանքաքարից պղնձի կորզման ցուցանիշը 1913թ. 71 տոկոսի փոխարեն 1917-ին հասավ 90 տոկոսի: Կառուցվեց նոր՝ հզոր դիզելային էլեկտրակայան, արտադրությունը գիտական հիմքի վրա դնելու համար՝ քիմիական լաբորատորիա:

1918թ. տարածաշրջանում սկսված կռիվները և արտադրության միջոցների ազգայնացումը խուճապի մատնեցին սեփականատերերին, հեռացան ֆրանսիացիները, դրսից եկած այլ մանր հանքատերերը: Երկրամասում պատերազմական գործողությունները շարունակվեցին մինչև 1921-ը... Այդ ընթացքում ավերվեցին գործարանները, էլեկտրակայանները, արտադրական օբյեկտները, թալանվեց ամեն ինչ, հանքերը լցվեցին ջրով: Կապանից հեռացան այլ ազգության աշխատողները...

1921թ. նախկին հանքարդյունաբերողների ընկերության նախագահ Սմբատ Մելիք-Ստեփանյանը, որն Ալեքսանդր Մյասնիկյանի կողմից նշանակված էր Ղափանի արտակարգ կոմիսար և լեռնային գործի տեսուչ, Ասքանազ Մռավյանի հանձնարարու-

ԿԱՊԱՆԻ ԵՎ ԿԱՊԱՆՅԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քյամբ կազմում է հանքերի վերականգնման եւ գարգացման առաջին պլանը:

1924թ. Թբիլիսիից հանձնաժողով ժամանեց Կապանի ուսումնասիրությունների: Պղնձի պահանջարկը երկրում այնքան մեծ էր, որ դեռ հանքերը չվերականգնած, օգտագործելով 1917թ. հանքերի դոմենին պահպանված հանքաքարի կույտերը, գործարանի բակում մնացած շլանը եւ խարամները՝ գործարկեցին ձուլարանը: Այդ շրջանում Խորհրդային Միությունում ոչ մի տոննա պղինձ չէր արտադրվում: Նոր կոմբինատը կոչեցին «Կարմիր նոյեմբեր»:

Սկսվեցին հանքերի վերականգնման աշխատանքները, վերանորոգվեցին ձուլարանը, հէկերը, գյուղերից հավաքվեցին ցիրուցան եղած նախկին աշխատողները: 1925թ. «Կարմիր նոյեմբեր» գործարանը երկրին տվեց առաջին պղինձը: Մինչ 1927թ. այն աշխատում էր իր կես հզորությամբ:

1930-ականներին ավարտվեց ֆրանսիացիների ժամանակ աշխատող հանքերի, ձուլարանների, էլեկտրակայանների եւ արտադրամասերի վերականգնումը: Կրկնապատվեց պղնձի ձուլումը:

1930-ից Կապանում սկսվեց նոր հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցումը: Այն (նաեւ ստորգետնյա տրանսպորտային հանքուղին) շահագործման հանձնվեց 1935թ.:

1937թ. կառուցվեց Ալավերդու գործարանը, եւ փակվեց Կապանի ձուլարանը. հանքաքարը հարստացուցիչ ֆաբրիկայում հարստացնելուց հետո խտանյութն ուղարկվում էր Ալավերդի:

Իսկ 1968 թվականին Կապանում սկսեցին գործել նոր ներկայիս հարստացուցիչ ֆաբրիկան, նորակառույց ստորգետնյա տրանսպորտային հանքուղին եւ մյուս ենթակառուցվածքները:

1977թ. ՍՍՄԸ գունավոր մետալուրգիայի մինիստրությունը որոշեց միավորել Կապանի պղնձահանքային կոմբինատը եւ բարձր շահութաբերությամբ աշխատող Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը: Միացյալ ձեռնարկությունը կոչվեց «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»: Միավորումից հետո, փաստորեն, Կապանը դարձավ Քաջարանի կոմբինատի ենթակայության արտադրական միավորում:

1988թ. միավորված կոմբինատները բաժանվեցին, Քաջարանի կոմբինատը կրեց նույն անունը՝ «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ», իսկ Կապանինը՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատ:

2002թ. Կապանի լեռնահարստացման կոմբինատը մասնավորեցվեց՝ վաճառվելով շվեյցարական «Գենո» ընկերությանը: 2005-ին կոմբինատի սեփականատերը դարձավ «Վաթրին Ինվեստմենթ» անգլիական ընկերությունը: 2006-ից «Գինո գոլդ մայնինգ քամփնի» 80 տոկոսի սեփականատերն է կանադական «Dandee Precious Metals» ընկերությունը:

Պարտասպեց ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆԸ



Այցելություն Կաղան ՎԱՐԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Գրառումներ հանքաշխարհից»

Ավետիք Իսահակյանը 1939թ. եկել է Դափան, հիացել նրա բնաշխարհով ու տարիներ անց մամուլում երեւացել է նրա խոսքը:

«Բնությունն այստեղ գործադրել է իր ստեղծագործական բոլոր խղճական, հուռթկ կարողությունները, իր խեղճությունները, իր հուժկությունը, իր անհուն սահմաններով երեակայությունը՝ խորություններ ու բարձրություններ, վիթխարի սարեր, ժայռեր, ձորեր, քարե փոթորկումներ, մրրկումներ, պեկոտումներ:

Անսպասելի անդունդներ, վիհեր... Չոր ձորի մեջ. ձորեր ձորերի մեջ. սար սարի մեջ, սարեր սարերի վրա. անդունդներ անդունդների մեջ. ժայռեր, քերձեր, ժայռեղեն թռչեքներ, ժայռեր երկնքի մեջ...

Գետեր, վիժումներ, ջրվեժներ, փոթորիկներ... Եթե համըր ընկնի այս խղճական վայրը, սքանչացումից, զարհուրանքից, վեհությունից, մեծությունից այնպես կփոթորկվի հոգին, որ տարերային թափով պիտի պոռթկա դուրս, պիտի դրսևորվի, արտահայտվի, եթե ոչ՝ կմեռնի. անհրաժեշտորեն պիտի խոսի եւ լեզու կառնի:

Չի կարող լռել, հոգին բերնից կթռչի, պիտի անպատճառ խոսի»:



Եղե՛լ է Խ.Արմյանը Դափանում ՈՌԵՐՏ ԷԶՆԱՆՑԻ

1844թ. մարտի 18-ին Խաչատուր Արմյանը (Քրիստափոր Ավետիքի Արմյան) Անդրկովկասյան ուսումնարանների տնօրինությունից ծանուցվել է, որ կառավարչի հանձնարարությամբ ինքը, որպես «գիտություններ սիրող եւ իր հայրենիքը լավ ճանաչող անձն», պետք է ուղեկցի բնապատմության արդիֆետոր, արքունի խորհրդական Յերման Աբիխին՝ Յայաստանի երկրաբանական հետազոտություններում: Շուտով Աբիխն ու Արմյանը մտերմացել են: Մի զեկուցագրում կարդում ենք. «... պարոն Աբիխի հետ կատարած ճանապարհորդութան ժամանակամիջոցը տեւեց 5 ամիս եւ 22 օր, սկսած մարտի 28-ից մինչեւ սեպտեմբերի 15-ը»:

Աբիխի դիվանին քաջածանոթ էր Շահազիզը գրել է. «Չետո մեկնում են Գառնի եւ Գեղարդ, ապա Նախիջեւան, Ջուղա, Օրդուբադ, Ազուլիս, Մեղրի եւ պղնձահանքերը»:

Պահպանվել է Աբիխի նամակը, որում նկարագրված է ուղեորությունը Դափան՝ երկրաբանական նկարագրությամբ: Գիտնականն անգամ նկարագրել է Կավարտի մերձակա՝ Ղաթարի եկեղեցու խաչքարը, որի վրա արհեստավորի մուրճի պատկերն է:

Արմյանական մի գրառում. «Պրոֆետորն... իրեն զգեց մերձակա լեռները, իբր չար ոգիներին կախարդելու, այսինքն՝ քարատեսակներ եւ երկրաբանական այլ նյութեր հավաքելու, իսկ ինձ, ծանրաչափը ձեռքիս, թողեց բնակիչների հարցուփորձերի լաբիրինթոսում, որոնց տված իմ պատասխանները կարող են մի ամբողջ գիրք կազմել»:


Արդ, կասկած չունեմ, որ Կապանն էլ Արմյանական վայր է:

ՀՐԱՄԱՆ Դափան-Գենուզգի ռազմական ուժերին

Դափանցիներ ենք մենք, եւ դա նշանակում է՝ որ են մեր խենթ հարուածներից ընկած Օխշու ու Գեղուայ անառիկ ձորերը, որ են մեր գոռ ուռան մաքրեց Որոտանի եւ Յաքարուի ափերը, որ են մենք ենք, մենք, որ եօթն անգամ ուժեղ, մահից էլ ուժեղ գիտենք ատել մեր դարաւոր թշնամուն եւ եօթն անգամ չէ, կենքեքից անելի ուժեղ սիրել մեր հայրենի հողը...

Դափանցիներ ենք մենք, եւ դա նշանակում է՝ որ են մենք էինք, որ մահաշունչ ձմեռուայ կէսին, երբ քաղցած ու թափառ գայլն անգամ սարսափով էր մօտենում Դափառուղին՝ Դափանի այդ փոքր Մասսին, մենք մեր հոգու կրակով հալեցրինք ձիւները, մեղմացրինք բնութեան արհաւիրքը եւ Գողթան իջանք՝ յանուն Քրիստափորի սրտից զարնուած նիւթական ծննդավայրի՝ թշնամու գիւղերի սեւ ու թանձր ծովը բարձրացնելու... Դափանցիներ ենք, եւ դա նշանակում է՝ որ մեր հպարտ ու փառքի մեջ կորած դրօշակի վրայ հարիւրից շատ անելի աներուած թշնամու գիւղերի անուններ կան, որ մեր կռիւները՝ կանոնաւոր թէ անկանոն ուժերի դէմ, մի ձեւ, միայն մի ձեւ են ունեցել՝ «Ուռա՛, յառա՛ջ, հրդեհ՛»:

Ձորավիզ ունենալով Աստծուն ու մեր ընտիր ռազմիկների՝ Դաւիթ-բեգի ու Թորոս-իշխանի հայրենամուտը ու վրիժակ հոգիները՝ դափանցիներ ենք մենք՝ միշտ յարթող ու անպարտ: Դափան-Գենուզգի ռազմական ուժերի հրամանատար՝ ՆՇՂԵՅ



ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ ՆՈՒԲԱՐՅԱՆ 1825-1899թթ. ■ Եգիպտոսի վարչապետ XIX դարի 2-րդ կեսին



ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ 1846-1938թթ. ■ Ազգային քաղաքական գործիչ, Յայ բարեգործական ընդհանուր միության հիմնադիր



ՍՈՎԱՍԵՆ ՏԱԹԵՎԱՏԻ (ՆՈՏՆԱՆԱՆՑԻ) ■ Ամենայն Յայոց Կաթողիկոս 1629-1632թթ.



ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ 1879-1919թթ. ■ Յայ ազատագրական պայքարի ղեկավարներից, Յայաստանի առաջին հանրապետության հիմնադիրներից




ՍՏԵՐՈՂ ՄԱԳԻՍՏՐՈՍ, ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ՏԵՐ ՍՈՎԱՍՅԱՆ 1865-1939թթ. ■ Գիտնական, հոգեւոր, ազգային-քաղաքական գործիչ



ՍՏԲԱՏ ՄԵԼԻԷ-ՍՏԵՓԱՆՅԱՆ 1879-1940թթ. ■ Ազգային գործիչ



ՊՈՂՈՍ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ 1880-1921թթ. ■ Չանգեզուրի 1918-21թթ. գոյամարտի կազմակերպիչներից



ՀՄՅԱԿ ՄԵԼԻԷ-ԱՂԱՍԻՐՅԱՆ 1887-1988թթ. ■ Քիմիկոս, Յայաստանի քիմիական արդյունաբերության հիմնադիր



ԼԵՈՆԻԴ ԿՈՍՏԱՆԿՈՎ 1915-1984թթ. ■ ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ



ԱՆՈՒԷՎԱՆ ԱՐԶՈՒՄՅԱՆ 1904-1965թթ. ■ Ակադեմիկոս, Յամաշխարհային տնտեսության եւ միջազգային հարաբերությունների ինստիտուտի տնօրեն

Իմանալով իսկ ծննդի լեռնային կարգապահը

ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Կապան քաղաքը՝ Սյունիքի մարզկենտրոն

1995թ. դեկտեմբերի 4-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության օրենքը՝ «Հայաստանի Հանրապետության վարչարարածքային բաժանման մասին»: Ըստ այդ օրենքի՝ ՀՀ վարածքը բաժանվեց 10 մարզի եւ մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքի (ՀՀ սահմանադրության մեջ 2005թ. կարգավիճակ փոփոխություններով Երևանին տրվեց այլ կարգավիճակ): Տասը մարզերից մեկը Սյունիքի մարզն է, որի մեջ մտնում են Կապանի, Գորիսի, Մխիթարի եւ Մեղրու նախկին վարչական շրջանները: Սյունիքի մարզկենտրոն հռչակվեց Կապան քաղաքը: 1996թ. փետրվարի 20-ին ընտանակվեց Սյունիքի առաջին մարզպետը, որից հետո սկսվեց մարզպետարանի ու մարզային մյուս կառույցների ձևավորումը:

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՔԵՆՏՐՈՆ



ՍՈՒՐԵՆ ԱՐԴԱՅԱՅԱՆ 1996-1998թթ.



ՈՒՍԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ 1998-2000թթ.



ԼԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ 2000-2004թթ.



ՍՈՒՐԻԿ ՆԱՉԱՏՐՅԱՆ 2004թ. - մ/ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԻԼԵՆ ԲԱՂԱՅԱՆ. «Քաղաքի դեմքին բնորոշ առանձնահատկությունը, նախելառաջ, սոսիներն են»

ԿՐՊԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՆԻՒԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ Է ԶՐՈՒՅՅԸ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻ ՊԵՏ ՎԻԼԵՆ ԲԱՂԱՅԱՆԻ ՀԵՏ

– Պարոն Բաղայան, մի քանի տարի է հաստատվել է Կապան քաղաքի գլխավոր հատակագիծը: Նախ՝ պատմեք, խնդրեմ, գլխավոր հատակագիծ մասին, եւ հետաքրքիր է՝ մինչ այդ Կապանը գլխավոր հատակագիծ ունեցե՞լ է: – Կապան քաղաքի գլխավոր հատակագիծ մշակելու համար «Հայնախագիծ» ԲԲ ընկերության կողմից երեք անգամ աշխատանքներ են կատարվել: Նախավերջին անգամ՝ մոտ 40 տոկոսի չափով: Հետագայում կառավարությունը որոշում ընդունեց, ըստ որի՝ միայն տեղական բյուջեի միջոցների հաշվին այդ աշխատանքը պետք է իրականացվեր. երեւի այս անգամ էլ գլխավոր հատակագիծը նախորդների ճակատագիրը պիտի ունենար: Սակայն կառավարությունը միջոցներ հատկացրեց մի շարք համայնքների, այդ թվում նաեւ Կապանին. «Հայնախագիծ» ԲԲ ընկերությանը պատվիրեցին մոտ 19 միլիոն դրամ արժողությամբ նախագիծ, որի հիմքը կար: Ուղղումներ, ճշգրտումներ կատարեցինք, թերի մնացած աշխատանքներն ավարտեցինք եւ այսօր ունենք Կապանի գլխավոր հատակագիծ՝ հաստատված 2006 թվականին: – Պարոն Բաղայան, ստացվում է, որ Կապանը գլխավոր հատակագիծ չի՞ ունեցել: – Պարզապես մշակվել են առանձին քաղաքների հատակագիծեր, բայց քաղաքն ամբողջական հատակագիծ երբեք չի ունեցել: Քաղաքի վարչական սահմաններում, իհարկե, մասշտաբային աշխատանքներ են անվարձ կատարվում: Բեխ, Կավարտ եւ այլն: Դրանք քաղաքի քաղաքացիներ են, բնականաբար արտացոլված են մեկ վարչական սահմանի մեջ: – Իսկ գլխավոր հատակագիծն ի՞նչ է ամփոփում եւ մինչեւ ո՞ր թվականի համար է նախատեսված: – Մինչեւ 2015 թվականի համար:

Բայց կարող է ծառայել նպատակին մինչեւ նախատեսված ծրագրերի իրականացումը: Բավականին ծրագրեր են ներառված գլխավոր հատակագծում: Այն պատասխանում է բազմաթիվ հարցերի՝ ինչքան՞ով կարող է աճել բնակչությունը, արդյո՞ք մեր քաղաքը հնարավորություն ունի այդքան բնակչություն տեղավորելու: – Իսկ շրջանցիկ ճանապարհների հետ կապված հարցերն ինչպե՞ս են լուծվելու: – Հաշվի առնելով, որ Կապանը մարզկենտրոն է, հետագայի համար նախագծել ենք մեր Կապան-Քաջարան-Մխիթար-Երեւան այլընտրանքային ճանապարհի տարբերակ, որը գոյություն ունեցող ճանապարհից 50-60 կմ կարճ է: Խորհրդային Միության տարիներին քաղաքը շրջանցող ճանապարհի այլ տարբերակ կար, որ պիտի անցներ Կավարտով, սակայն լավագույն տարբերակը չէր դա: Նոր ճանապարհին զուգահեռ նախատեսված է նաեւ քաղաքը շրջանցող երկաթուղի: Ավելացնենք, որ այսօր Կապանի միջով անցնում է միջպետական ճանապարհ: Անվտանգության տեսակետից բանուկ ճանապարհի մայթերից կառուցապատումը պետք է լինի 18մ հեռու: Հունան Ավետիսյան փողոցի բարձրահարկ շենքերը փողոցին, միջպետական ճանապարհին կից են, նման չափանիշ գոյություն չունի, որը լուրջ թերություն է համարում: Կապանի օդանավակայանը նույնպես ժամանակին կառուցվել է սխալներով: Տեղանքն ամենեւին հարմար չէ վայրէջքի եւ թռիչքի համար. դիմացը սարեր են: Թեեւ ժամանակին գործել է, բայց վտանգ միշտ էլ եղել է: – Ի՞նչ եք կարծում, Կապանը մեր օդանավակայանի անհրաժեշտություն ունի՞: – Դեռ Խորհրդային Միության օրոք մեր օդանավակայան կառու-



ցելու համար ծրագրեր, նախագծեր եղել են: Նախատեսվել էին հալաջի վարչական տարածքի հարթ դաշտերը: Հիմա էլ դրա անհրաժեշտություն կա, բայց ամեն ինչ կախված է ֆինանսական հնարավորությունից: – Պարոն Բաղայան, փաստորեն, առաջին խնդիրը, որը գլխավոր հատակագծում որված է, հաղորդակցության ուղիների զարգացումն է: Ուրիշ ի՞նչ խնդիրներ են ընդգրկված գլխավոր հատակագծում: – Բնապահպանական տեսանկյունից ուսումնասիրվել են տարածաշրջանի պոչամբարները, լեռնահանքային արդյունաբերության կողմից հասցվելիք վնասը մարդկանց, բնությանը: Այն, որ պոչամբարները վտանգ են ներկայացնում, գաղտնիք չէ: Նաեւ մանրակրկիտ մեկնաբանված, ուսումնասիրված են, թե որ պոչամբարն ինչ չափի վնաս է հասցնում: Այդ առումով նույնպես առաջարկություններ կան: Կարելու է, որ «ԶՊՄԿ» ՓԲ եւ «Դիմո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերությունները ժամանակակից տեխնոլոգիաներ կիրառեն այդ ոլորտում: – Պարոն Բաղայան, վերջերս հաստատվել է Կապանի մուտքը խորհրդանշող կոթողի նախագիծը: Այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների ընթացքն ի՞նչ փուլում է:

բազալտե եզրաքարեր եւ շրջակա տարածքը կասֆալտապատվի: Մինչեւ սեպտեմբերի 14-ը կոթողը շահագործման կհանձնենք: Այն կարժեանա մոտ 7 մլն դրամ: – Իսկ քանի՞ հեկտար տարածք է զբաղեցնում Կապանը: – 2884,65 հեկտար, որից 2091,5-ը՝ գյուղատնտեսական նշանակության է, 551,76-ը՝ բնակավայրերի հողեր են, 173,96-ը՝ արդյունաբերության, ընդերքի օգտագործման եւ այլ արտադրական նշանակության տարածքներ, 12,3-ը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի եւ կոմունալ ենթակառուցվածքների հողեր, հատուկ պահպանվող տարածքները՝ 52,91 է, իսկ ջրային տարածքները՝ 2,23 հեկտար: – Որո՞նք են, ըստ Ձեզ, քաղաքաչինական մերօրյա հրատապ խնդիրները Կապանում: – Շատ լուրջ խնդիր է քաղաքի կոյուղու մաքրման կայանի հարցը: Նախկինում ունեցել ենք մաքրման կայան, որը գտնվում էր Սյունիք համայնքի տարածքում: Այսօր այդ կայանը գոյություն չունի. ավերված է: Կեղտաջրերը գետն են լցվում, բայց չէ՞ որ այդ գետի մեջ նաեւ կենդանական աշխարհ կա, նաեւ գյուղեր կան, որ այդ ջրից օգտվում են: Իսկ հանրապետությունից դուրս լինելիս ամաչում ենք ասել՝ քաղաքը կոյուղու մաքրման կայան չունի: Նախկինում՝ Խորհրդային Միության տարիներին, քաղաքում թափվող շինարարություն էր ընթանում: Շինարարության համար լավագույն ժամանակներում տարեկան մոտ 25 հազար քառակուսի մետր բնակելի մակերես էր շահագործման հանձնվում: Ընկնելով բնակավայրերի հանձնելու հետեւի՝ կոյուղատարի տարածքի թողունակությունը վրա պատշաճ ուղղություն չէր դարձվում: Հետո թողունակությունը պիտի մեծացվեր. նախագծեր եղել են, բայց... Քաղաքի մի ծայրամասից մյուսը կոյուղատարի խողովակաշարը պիտի փոխվի, թեեւ մեծ ծախսերի հետ է կապված: Այդ բոլոր խնդիրները գլխավոր հատակագծում ներառված են: – Ձեր մտահոգություններից մեկն էլ, կարծում ենք, Կապանի միջով հոսող Ողջի եւ Վաչագան գետերի հունների պահպանման խնդիրը պիտի լինի: Ի՞նչ կասեք այդ առիթով: – Տարածաշրջանը լեռնարդյունաբերության կենտրոն է: «Չանգեգուրի ՊՄԿ» ՓԲ եւ «Դիմո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերությունները պետք է անվտանգ լինեն բնապահպանական եւ բժօգտագործման վճարներ: Նախկինում

Շարունակությունը էջ 27

ԱՐՅԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ԿԱՊԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յերոս է պատերազմական քաղաքը չլքած յուրաքանչյուր կապանցի...

Մինչ թագմական գործողությունների՝ Կապան քաղաքի մարտյուզներին հասնելն արդեն 1988 թվականից սկսած՝ անհանգիստ վիճակ էր հարեան աղբյուրական բնակավայրերին սահմանակից գյուղերում, Կապան-Գորիս ավտոմայրուղում: Եվ մինչև անկախ Հայաստանում պեղականորեն կկազմավորվեին առաջին զինվորական սպորտաբաժանումները, Կապանում առաքելություն ունեին կամավորական սկզբունքով ձեռավորված ինքապաշտպանական ջոկատները...

1988-ի վերջերին, երբ Արցախյան շարժումն օր օրի թեժանում էր, Կապանի լեռնահարատացման կոմբինատում աշխատող Արամայիս Գարությունյանն աշխատանքից հեռու, հոր որսորդական հրացանը «Սովետական Դայաստան» թերթում փաթեթած, ավտոբուսի վերջին երթով գնում էր Ուժանիս գյուղ, զինվորական հեռախոսով սահմանում, առավոտյան աշխատանքի գալիս: Գազիկ Մկրտչյանն էլ նշում է, որ այդ ժամանակ թե՛ գյուղերն էին ինքնապաշտպանական ջոկատներ կազմում, թե՛ քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններն էին ջոկատներով գյուղերում դիրքեր պաշտպանում: «Հավաքվում էին թաղի տղաները, մեր ձեռքի տակ եղած ինքնաշեն զենքով գնում էր Ղազանցիին հարակից տարածքները: Այդ ժամանակ անսանձազորությունն էր շատ տարածված, դա էինք փորձում կանխել»:

ակրիվ: Բացի այդ, Գորիսը հարմար էր», - ասում է Ռ.Ասրյանը: Յետո ստեղծվեց ինքնապաշտպանության խորհուրդը: Կապանի ինքնապաշտպանության խորհրդի նախագահ ընտրվեց Ռաֆայել Ասրյանը: Անդամներ էին Սերժ Մկրտչյանը, Արարատ Կարապետյանը, Գազիկ Արաքանյանը, Համլետ Քոչարյանը, Սերուժան Պատվականյանը, Սամվել Մարտիրոսյանը, Նորիկ Հովհաննիսյանը, Գրիշա Գարությունյանը եւ այլք: 1990-ին ստեղծվեց երկու կառույց՝ «Երկրապահ» կամավորականների միությունը եւ ՆԳ հատուկ զույգը: Փաստորեն, ինքնապաշտպանական ջոկատները միավորվեցին, տղաների մի մասը մնացին «Երկրապահում», իսկ 36 հոգի ընդգրկվեց ՆԳ հատուկ զննի Կապանի վաշտում, որը գլխավորեց Ռ.Ասրյանը: Վաշտը ստացավ առաջին մարտական զենք-զինամթերքը, մեքենաներ:



ՈՐԱՅԱՅԵԼ ԱՍՐՅԱՆ



ԱՐԱՄԱՅԻՍ ՎՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԼԵՆՈՆԻԳ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ԳԱԳԻԿ ՄԿՐՏՅԱՆ

վում էր, բայց զենք-զինամթերքը խիստ սակավ էր. «Ո՛չ փամփուշք կար, ո՛չ թնդանոթի արկ... Կապանցիները երես, ուղղաթիռն ուղղակիորեն սպառնում էր իջավ, եւ երբ 20 հարյուր թնդանոթի արկ տվեցին, այնքան ուրախացա... Ե՛վ ահավոր փխուր օրեր էին, ե՛ւ շատ ուրախ էի, որ վերջապես զենքը տեղ հասավ»:

Իսկ զենք-զինամթերք ձեռք բերելու համար նաեւ Կապանի բնակչությունը երեք անգամ հանգանակություն կազմակերպեց. գումար եւ ոսկեղեն էին հավաքում: Կապանի զինվոր պատերազմյան տարեգրությունից հատկապես երկու օր է շեշտում. «Ներքին Հանդ. գյուղի 1992թ. դեկտեմբերի 13-ի գիշերը, երբ ազերիները խրամապարտ խառնվեցին մեզ հետ, բայց ոչ մի կորուստ չգրվեցին... Եվ Հորադիզի չարաբաստիկ հունվարի 23-ը, որը ե՛ւ շատ վրանգավոր էր, ե՛ւ վիրավորվեցի... Ավելի ճիշտ, բոլորս վիրավորված էինք այդ օրը ոչ միայն ականից, այլեւ նրա համար, որ Կապանի բրիգադով արդեն մտել էինք Հորադիզ կայարան, հրաման եկավ, որ հետ գանք...»:

Մարտիկներն իրենց ընկերների հիշելով հանդերձ, փաստում են, որ բոլորի անունն արժե նշել, դրա համար չեն ուզում որեւէ մեկին առանձնացնել: Հիշում են նաեւ այսօր արդեն Հայաստանում հայտնի գործարարականատարներին, որոնք ղեկավար այդ օրերին օգնել են կապանցիներին կամ անձնապես ներդրում ունեցել քաղաքի անվտանգության ապահովման գործում: Գազիկ Մեղքունյան, Մանվել Գրիգորյան, Սեյրան Մարոյան, Միքայել Գրիգորյան, Յուրի Խաչատրով (դեկտեմբերի 10-ի մարտական գործողությունների հրամանատարն էր), կապանցիներ Մուրադ Սարգսյան, Վլադիմիր Հայրապետյան եւ այլն:

Լ.Գրիգորյանը փաստում է, որ Հայաստանի սահմաններում ծավալված պատերազմական իրավիճակում առաջին մարտական գործողությունը, որ հաղթանակով պարավեց, եղավ Կապանի դեկտեմբերի 10-ի օպերացիան: «Առաջին հաղթանակը եւ ազատագրումը Կապանում էր տեղի ունեցել»:

Բոլորն են նշում, որ այդ տարիների ողբեր հաղթեց, անփորձ հանքազորն ու հողազորն էին երկիր պաշտպանում, առանց նորմալ զենք-զինամթերքի: Մերօրյա հերոսները, ցավով, այսօր չեն զգում այդ ողբեր: «Քսան փամփուշտի համար դարձեցին ինձ: Եվ ինձ նմաններն այսօր շատ են բանտերում, - ասում է Ռ.Ասրյանը: - Ճիշտ է, հիմա նեղացած եմ ու սա առում էմ, բայց Ասրյանը եւ ու արագեց, եթե ուրնգություն լինի, անկախ մեզանից գնալու ենք, որովհետեւ «հիվանդ» ենք»:

Լեոնիդ Գրիգորյանի կարծիքով ողբեր սպանեց նաեւ այն, որ երկրի պաշտպանության գործում իրոք պակաս ունեցած մարդիկ չեն գնահատվել, մինչդեռ գնահատվել են այնպիսի մարդիկ, որ 1997թ. մտել են նախարարություն, երեք ամսում դարձել մայր ու «Մարտական հասցե» կախել: Իսկ այն ազատամարտիկին, որը վիրավորված է, տարին մի քանի անգամ պիտի գնա բուժման, չեն հիշում...

Կապանի Մկրտչյանը Կապանի բոլոր բնակիչներին, որ այդ տարիներին չլքեցին քաղաքը, հերայ է համարում եւ ասում, որ իրենք մրանցով են հարթել...

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Սկզբնական շրջանում որեւէ մեկը չէր համակարգում ջոկատների կազմավորումը, մարդիկ լսելով, որ այսինչը «պոստի է գնում», կամավոր միանում էին նրան. այսպես մեկ հոգին երկուս դարձավ, երկուսը՝ չորս եւ այլն. աստիճանաբար ջոկատներ ձեռավորվեցին: 1989թ. Կապանում ձեռավորված առաջին ջոկատներն էին «Բաղաբերդը», «Չերյունուկյան», «Կեներոնականը», «Շահունյանը»: Յուրաքանչյուր ջոկատում սկզբնականում կար 15-20 կամավոր:

Կապանի «Երկրապահի» հրամանատարը Արամայիս Գարությունյանն էր, Գազիկ Մկրտչյանը՝ «Երկրապահի» շտաբի պետը: Այն վաշտից շատ մարդկային ռեսուրս ուներ՝ 181 հոգի: «Բացի այդ, գյուղերում էլ ջոկատներ ունեցինք, միավորվելուց հետո Կապանի 18 գյուղերն էլ մեր ենթակայության տակ էին: Բոլոր գյուղերում մեր տարածությունն էր կար 15-20 հոգի. կամավորներ էին, որոնք օգնում էին զենք-զինամթերքով», - հայտնեց Ար.Գարությունյանը:

Մարտական ընկերները փաստում են, որ ի տարբերություն այլ վայրերի՝ Կապանում երբեւէ երկրապահի ու վաշտի միջեւ կամ նրանց ու ՆԳ բաժնի միջեւ ընդհարում չի եղել: Նույնիսկ ՆԳ բաժնին օգնում էին, հերթապահում քաղաքում կարգուկանոն հաստատելու համար: «Կապան-Գորիս շարայուն էինք ուղեկցում», - պատմում է Գ.Մկրտչյանը: - Ամեն 10 մեքենայի մի «գինված» մեքենա էր կցվում: Ձինվածն էլ ո՛րն էր, մի ուսումնական ավտոմար էինք դնում ծնկներին...»:

Բեռնատար, մարդատար ավտոմեքենաներն ուղեկցում էին մինչեւ «Թաա» կամ Շուռնուխ, մինչեւ որ հանդիպում էին Գորիսի ազատամարտիկներին եւ շարայունը փոխանցում նրանց: Գորիսն էլ ուղեկցում էր Սեդրի-Կապան շարայունը, որը շարունակում էին իրենք: Ի դեպ, Կապանի վաշտն առաջին զոհն այդ ճանապարհին տվեց... Աստիճանաբար արդիֆեդերալ կազմեր սկսեցին ընդգրկվել բանակաշինության գործում, խորհրդային բանակում ծառայող հայ սպաներն ու զինվորականները սկսեցին վերադառնալ ու օգնել: Ար.Գարությունյանը պատմում է, որ սկզբում բոլորն էլ կամավորականներ էին. «Յերոս, երբ աստիճանաբար վիճակն ավելի

վարացավ, քիչ էինք, ու մասնագետներ հարց էլ առաջ եկավ, երբ սովետական զորքից տեխնիկա վերցրեցինք, մասնագետներ չունեինք, որոնք կկարողանային դրանք աշխատեցնել: Արդեն զինվորականներին միջոցով սկսեցինք մասնագետներ բերել»:

Փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանն ավելացնում է, որ Կապանի վաշտից հետո զինվորական 2-րդ օրինական ստորաբաժանումը ստեղծվեց 1991թ., երբ առաջին անգամ անկախ Հայաստանում գորակող անցկացվեց. «Այդ ժամանակ վերադարձել էի Ռուսաստանից, որտեղ ծառայում էի խորհրդային բանակում: Նոյեմբերի 5-ին 18 փարեկան 60 կապանցի զինվորական ծառայության գորակոչվեց, ու Շղարշիկի այսօրվա դարոցում ռազմական վարժանքներ էինք անցկացնում»: Կազմավորված կառույցը ՀՀ ՆԳ նախարարության Կապանի պահպանության բաժնին կից հրաձգային գումարտակն էր, որտեղ Լեոնիդ Գրիգորյանը դասակի հրամանատար էր: Իսկ գորակոչվածներին օգնում էին երկրապահի տղաները, զենք նրանք ունեին, համագործակցություն կար, փորձով ձեռք բերած գիտելիքները փոխանցում էին նորակոչիկներին: Նոյեմբերի 28-ին Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանի մոտ տեղի ունեցավ կապանցի նորակոչիկների առաջին երդման արարողությունը: Գումարտակի խնդիրը հատուկ նշանակություն ունեցող օբյեկտների պաշտպանությունն էր: Համագործակցություն կար վաշտի եւ երկրապահի հետ եւ հարկ եղած դեպքում պաշտպանություն էին իրականացնում սահմանում:

Առաջին 60 հոգուն ծառայության ուղարկելուց հետո եւս 60 հոգի գորակոչվեց: «Տարիներ հետո առաջին գորակոչվածներն ազատեցինք, բայց նրանք մի մասը մնաց ու միա-

սին տեղափոխվեցինք բրիգադ», - տեղեկացնում է Լ.Գրիգորյանը: 1993-ի հունվարի 1-ին ստեղծվեց 97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադը: Եվ Կապանում գործող գրեթե բոլոր ռազմական ստորաբաժանումները, բացի երկրապահից, մտան բրիգադի մեջ:

1992թ. ապրիլի 24-ին սկսեց գնդակոծվել Կապան քաղաքը, ռազմական գործողությունները մոտեցան քաղաքին: «Շղարշում էի, երբ զանգահարեցին ու հայտնեցին, որ Ղազանցիից կրակում են Բաղաբերդի հուշահամալիրի ուղղությամբ», - ասում է Գ.Մկրտչյանը: Կապանը գնդակոծվում էր Արբեջանի Ջանգելանի եւ Կուբաթլիի շրջաններից:

Ռաֆայել Ասրյանի համար մինչ օրս էլ ամենամաքուր հիշողությունը 1992-ի ապրիլի 25-ն էր, երբ ԵՄԲԻ-ն պայթեց ու միանգամից ինը հոգի զոհվեցին...

Լ.Գրիգորյանի համար տպավորիչ էին լարային ռադիոյով անընդհատ հնչող հայտարարությունները. «Հիմա անհավանական կարող է թվալ, որ երեխա թե՛ մեծ՝ բոլորը նստում էին եւ հայացքները հառում ռադիոյին, տեսնեն՝ ի՛նչ է ասելու. օդային փազնապ, շտապ արյուն է պահանջելու, թե՛ կոչ է անելու հավաքվել այսինչ տեղում: Ու հենց հնչում էր՝ այսինչ գյուղացիները հավաքվե՛ն այստեղ, քաղաքացիները՝ այստեղ, երկիրը վրանգի մեջ է, տեսնում էիր՝ մի կես ժամ հետո հավաքվեցին, թե՛ ի՛նչ զենք էք տալիս, գնանք: Շատերը ավտոմարի կառուցվածքն էլ չգիտեին... Տարիքով մարդիկ էին գալիս, թե՛ կզանք ջահելներ մտր կկանգնենք, ուղղություն կտանք»:

Գ.Մկրտչյանը նշում է, որ ռազմական գործողությունների առաջին օրերը՝ ապրիլի 24, 25, 26, շատ ծանր էին. քաղաքը անընդհատ ռմբակոծ-

ԱՆԿԱՄՈՒԹՅՈՒՆ



1988թ. Կապան

Ազգային զարթոնքը, 88-ի շարժումը եւ Կապանը

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Կապանն անմիջապես արձագանքեց 1988-ին սկիզբ առած շարժմանը: Այսօրվա Հայաստանում եւ Ղարաբաղում ձեռնարկվող շարժմանն աջակցող քննադատական ուժերը կազմակերպական փորձեր փուլեր անցան: Հերազյանում արդեն Կապանն ուզած-չուզած հայրենիքը իրադարձությունների կիզակետում, քանի որ սահման էր եւ սեփական ուժերով քաղաքի ու մերձակա գյուղերի ինքնապաշտպանությունը պիտի կազմակերպեր: Անցումային այդ օրերի պատկերները փորձում ենք վերականգնել անկախ Հայաստանում Կապան քաղաքի առաջին ղեկավար Ռադիկ Մարությանյանի հուշերի օգնությամբ:



Երբ, ծրագրեր մշակում, մարդ էինք ուղարկում Երեւան՝ տեղեկատվություն փոխանակելու, շարժման լիդերների հետ կապ պահպանելու համար: Կազմակերպական աշխատանքները մոտ երկու ամիս տեւեցին: Առաջին միտինգը կազմակերպեցինք 1988թ. հոկտեմբերի սկզբին. բավականին բազմամարդ, Կապանի համար անսովոր միտինգ էր: Ու այնտեղ հայտարարվեց, որ ստեղծվում է «Ղարաբաղ» կոմիտեին աջակցող Կապանի կոմիտեին: Այն 13 հոգուց կազմված խորհուրդ էր, ու այդ օրվանից սկսվեց բացահայտ եւ ամենօրյա աշխատանքը:

Կապանում 1988թ. առաջին միտինգը տեղի ունեցավ փետրվարի 24-ին: Կազմակերպիչներն էին Էդիկ Բաղդասարյանը (Սամուն Էդոն) եւ Համլետ Քոչարյանը: Շարժումը սկսեց ծավալվել, դրան միացան Սուրիկ Կարապետյանը, Նորիկ Հովհաննիսյանը, այլ անձինք: «Հասարակական ակտիվություն առաջացավ, բայց Կապանի արդեթանցիներն ավելի ակտիվ ու պատրաստ էին, քան մենք, – հիշում է Սարուխանյանը: – Միտինգները հետո կազմակերպված ձեռնարկներին բնակչության որոշակի մասին հանեցին Կապանից: Նույնիսկ կարծիք ստեղծեցին (այն որպես վարկած մինչ օրս էլ շատերի մեջ տպավորված է), թե իբր Սուրբաշենի ջարդերի պատճառը Կապանից արդեթանցիների տեղահանումն է»:

Իսկ արդեթանցիները միտինգներից անմիջապես հետո դուրս չեկան քաղաքից: Մինչեւ 1889թ. մնացին, բայց մի քանի հոգի կազմակերպեցին 30-40 արդեթանցու տեղափոխումը Կապանից, որոնք Արդեթանում իբրեւ փախտական ներկայացան ու պատմեցին, թե իրենց ծեծելով, ջարդելով հանել են Կապանից: Իսկ տեղական իշխանությունները, բնական է, շատ սառնությամբ եւ զգուշավորությամբ էին դիմավորում շարժումը, բայց ավելի շատ ոչ թե տեղական իշխանություններն էին թելադրող,

այլ ազգային անվտանգության աշխատակիցները: Կապանում իրադարձությունները զարգացան մինչեւ հունիսի 5-6-ը, երբ միտինգը ցրեցին, կալանավորեցին Նորիկ Հովհաննիսյանին, Համլետ Քոչարյանը փախավ (Էդիկին առաջին միտինգներից հետո ԱՄՆ-ն էր մեկուսացրել): «Ճիշտ է, մի քանի ժամ հետո Նորիկին բաց թողեցին, բայց շարժումը՝ որպես այդպիսին, Կապանում մարեց, – պատմում է Սարուխանյանը: – Մոտ մեկ ամիս հետո տղաները (Սուրիկ Գրիգորյան, Սուրիկ Կարապետյան), հաշվի առնելով իմ ակտիվությունը, մոտեցան մաե. ինձ (այդ ժամանակ Ռադիկ Մարությանյանն աշխատում էր ժողկրթբաժնում), առաջարկեցին շարժումը Նորիկ ընդհատակյա սկսել: Ու սկսեցինք արդեն մարդիկ անդամագրել: Ընդ որում, եթե առաջին փուլում ինչ-որ տեղ անդեկավարել էր շարժումը, երկրորդում աշխատեցինք հնարավորինս ինտելիգենտ զանգված հավաքել մեր շարքերում»:

Սկզբում կորիզն այս երեք հոգին էին, հետո նրանց կրկին միացավ Նորիկ Հովհաննիսյանը, եւ մեկ հոգի էլ կար, որն ըստ պարոն Սարուխանյանի շրջանի աշխատող էր եւ այն ժամանակվա գաղտնի միտինգի անդամ էր: Բացի վերոնշյալ անուններից չեշտում է Սլավիկ Հայրապետյանը:

Երբ, Լեռնիկ Դավթյանին, Կրեժ Հարությունյանին, Աշոտ Ավագյանին, Գրիգոր Թադևոսյանին: «Բոլորին այն ժամանակ կարելի էր շարժման մասնակից համարել, մեզ հետ էին բոլոր ձեռնարկությունների տնօրենները, մեզ հետ էր ողջ մտավորականությունը: Ընդ որում, շատ կարեւոր էր, որ ինտելեկտուալ մարդիկ լինեին, որ կարողանան ժողովրդին բացատրել, թե ինչի համար է շարժումը: Այդ պայտ է բոլորի համար պարզ՝ ազգային-ազատագրական շարժում... Իսկ այն ժամանակ նույնիսկ Երեւանում առաջին միտինգներում հնչում էր՝ Լեռնիկ, պարտիա, Գորբաչով...»:

Կապանյան միտինգներում ամենահայտնի հռետորը Նորիկ Հովհաննիսյանն էր, իհարկե, բոլորն էին ելույթ ունենում, բայց մասնագիտությամբ պատմաբան Հովհաննիսյանի ոճն առանձնանում էր:

Երեւանում արդեն քաղաքական կառույցների ակտիվություն էր նկատվում. Սփյուռքից եկած ռամկավարները, հնչակյանները, դաշնակցականները կուսակցական աշխատանքներ սկսեցին: «Կապանում ոչ մի քաղաքական ուղղվածություն չկար, զուտ ազգային-ազատագրական, հայրենասիրական շարժում էր, Հայոց համազգային շարժումն էլ այդ ժամանակ ընդամենը շարժում էր, 1991-ին դարձավ կուսակցություն: Հետագայում կոմիտեի տղաներից շատերը դարձան դաշնակցական, ՀՀԸ-ական: Մինչ այդ կոմիտեի որոշ անդամներ գաղտնի դաշնակցական դարձան, բայց շարունակում էին մեզ հետ աշխատել: Բոլորիս նպատակը մեկն էր՝ Ղարաբաղի միավորումը Հայաստանին, Հայաստանի բնակչության անվտանգության ապահովում: Ուրիշ խնդիր չկար, նույնիսկ իշխանափոխության խնդիր դրված չէր: Հիմա է, որ քաղաքական տարբեր երանգներ են տալիս շարժմանը»:

Իսկ լիդերներից յուրաքանչյուրն իր մասնագիտական անցյալն ուներ. եւ քաղաքական նոր իրավիճակը, եւ ազատական, ազգային նոր գաղափարախոսությունը, եւ անկախությունը, եւ սահմաններում ստեղծված իրավիճակը նոր էր խորհրդային դաստիարակություն ստացած շարժման ղեկավարների համար, նրանք ինչ-որ տեղ անպատրաստ էին քաղաքականություն մուտք գործում: «Իհարկե, եւ սովորում էինք, եւ գործում, – խոստովանում է Սարուխանյանը: – Կոմկոմի Սյունիքում մեծ մեղքանք ու ոգեւորություն առաջացրեց «Հայաստան» թերթում Կտիրճ Սարգսյանի հոդվածը Լեռնահայաստանի մասին: Նվիրված էր 1920-ականների Ձանգեզուրին, Նժդեհի գործունեությանը: Եթե մինչ այդ խորհրդային քարոզչության պայմաններում քչերը գիտեին Նժդեհի իրական գործունեության մասին, այդ հոդվածից հետո նորովի գիտակցեցին Ձանգեզուրի դերը...»:

1990թ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններ տեղի ունեցան: Այդ ժամանակ թեկնածուներ ունեին եւ ՀԿԿ շրջակայքում, եւ շարժման մասնակիցները: Կապանը Հայաստանում եզակի շրջաններից էր, որտեղ երկու պատգամավոր կոմունիստական կուսակցությունից ընտրվեց (Շչորս Դավթյան, Կարեն Մկրտչյան), երկուսը շարժման ներկայացուցիչ էին (հաղիկ Սարուխանյան, Սլավիկ Հայրապետյան): Իսկ Ձանգեզուրի մյուս շրջաններում հաղթել էր միայն կուսակցությունը:

ԳԽ-ում Ռ. Սարուխանյանը կարճ աշխատեց. Գիտության, կրթության, մշակույթի հանձնաժողովի փոխնախագահն էր: Նոյեմբերին Կապանում քաղաքային խորհրդի ընտրություններ էին, իսկ 1991թ. հունվարի 9-ին Ռադիկ Սարուխանյանն ընտրվեց Կապանի քաղաքային խորհրդի նախագահ ու պատրաստվեց մինչեւ 1996թ.: Ամենադժվար ու ծանր պահը Սարուխանյանի համար ճանապարհներից սկսված մարդուրտն էր: «Ուշ երեկոյան կամ գիշերները մարդ փախցնելը արդեթանցիների համար դարձել էր սովորական գործ. դրանով եւ փող էին աշխատում, եւ փորձում մեզ ահաբեկել: Խիզախ տղաներ ունեինք, որոնք կարողանում էին մտնել Արդեթանի տարածքներ եւ մարդ փախցնել-բերել, որպեսզի կարողանանք փոխանակում կատարել: Սա այսօր ամենամանավորված բանը կարող է թվալ, բայց այն ժամանակ մարդկանց հետ բերելու այլ հնար չուներ: Դրա համար օրերով, ամիսներով բանակցություններ էին ընթանում...»:

Քաղաքի մշտական ռեզիդենտ-հրետակոծումներին ավելացել էր տնտեսության մեջ ստեղծված արտակարգ իրավիճակը: «Այսօր շատ են խտում, գնահատականներ տալիս եւ ՀՀԸ-ի ամենամեծ մեղքը համարում են սեփականաշնորհումը, թե թալանեցին ամեն ինչ, – ասում է Սարուխանյանը: – 1996-ին թողեցի քաղաքային խորհրդի նախագահի պաշտոնը»:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ

Կապանը եւ հայոց բանակը

Կապանում երեք զորամաս կա, որոնք յուրաքանչյուր երանգ են փայլա քաղաքին...

Եվ բացատրում է նաեւ դրա պատճառը. այն քաղաքը, որը ռմբակոծություն է տեսել...



Այստեղ բարձր են գնահատել զինվորի ներկայությունը եւ այսօր էլ զորամասի առկայությունն են բարձր գնահատում...

Վ.Յուրախյանը տեղեկացրեց, որ Վ.Ալեքսանյանը, Ա.Մարտիրոսյանը, փոխգնդապետներ Լ.Ադաթեյանը...

Վլադիմիր Զայրապետյան եւ ներքին զորքերի գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյան:

«Արցախյան ազատամարտին եւ բանակաշինությանը ակտիվ մասնակցություն են ունեցել նաեւ կապանցի հայուհիները, որոնք իրենց նուրբ ուսերին զրկակցներ ու տառապանքներ են կրել»:

2007թ. Կապանի 54122 զորամասը պարզեցնելու Մարտական խաչի 1-ին աստիճանի շքանշանով:

Այսօր Կապանում զինվորականների ներկայության փաստը Կոլոդյա Զովհաննիսյանը կարելու է մոտ սոցիալական տեսանկյունից:

Չորամասերում ծառայող եւ աշխատող կապանցիները, համաձայն համապատասխան օրենքների, օգտվում են զինծառայողի իրավական եւ սոցիալական պաշտպանվածությունից:

2007թ. մշտական բնակարան հատկացվեց 11 կապանցի զինվորականի եւ տասնյակ զինվորականներ էլ օգտվում են հանրակացարանային բնակարանային ֆոնդից:

Գնդապետը տեղեկացրեց, որ ծրագրված է Կապանում նոր՝ 26 բնակարանաճակատի կառուցում, որտեղ բնակարանների զգալի մասը՝ իբրեւ մշտական, կտրվեն կապանցի զինծառայողներին, մնացածը,

որպես ժամանակավոր բնակարաններ, կտրամադրվեն Կապանում աշխատող զինվորականներին:

Չորամասերը ակտիվորեն մասնակցում են նաեւ քաղաքի հասարակական կյանքին: «Համապետական, մարզային կամ քաղաքային ոչ մի միջոցառում Կապանում տեղի չի ունենում առանց զինվորականների»:

Չորակողները, որոնք նախկինում աննկատ էին անցնում, այսօր յուրաքանչյուր տոնակատարություններ են դառնում քաղաքի կյանքում:

Կոլոդյա Զովհաննիսյանի կարծիքով զինվորական ստորաբաժանումների ներկայությունը Կապանում միանշանակ դրական ազդեցություն է թողնում քաղաքի կյանքի վրա:

Նա ընդունում է, որ մամր կոնֆլիկտներ լինում են, բայց դրանք ոչ ավելի հաճախ են, քան քաղաքացիների միջեւ կոնֆլիկտները:

Նա ընդունում է, որ մամր կոնֆլիկտներ լինում են, բայց դրանք ոչ ավելի հաճախ են, քան քաղաքացիների միջեւ կոնֆլիկտները:

քաղաքացիական կյանքում:

Գնդապետը մի դեպք հիշեց, թե ինչպիսի ցնցող տպավորություն թողեց, երբ 1992թ. դեկտեմբերի 3-ին Զովհի Ադյանը Սիսիանի 500 հոգանոց «Սիսիան» երկրապահ ջոկատով Կապանի մի ծայրից մյուսն անցավ՝ նվազախմբի եւ ծածանվող դրոշների ուղեկցությամբ:

Չորեկյանի առիթով գնդապետը փաստում է, որ սա ոչ միայն կապանցիների, այլեւ զինվորականների տոնն է, ու Կապանը նաեւ իրենց տունն է:

«Առաջին անգամ Կապան եմ մտել 1992թ. ապրիլին՝ երկրապահ ջոկատի կազմում, երկրորդ անգամ 1992թ.» իբրեւ դեկտեմբերյան օպերացիայի հետախուզության պետ, - հիշում է զինվորականը:

Նա նշում է, թե քիչ տեղեր կարելի էր տեսնել, որ մարդիկ թուրքի գնդակոծությունից 100-300 մետրի վրա հող մշակեին եւ ապրեին:

Շնորհավորելով կապանցիներին՝ բանակային առաջին կորպուսի հրամանատարի տեղակալը մաղթում է, որ ծաղկման, շենացման այս ընթացքն անխափան լինի:

Շնորհավորելով կապանցիներին՝ բանակային առաջին կորպուսի հրամանատարի տեղակալը մաղթում է, որ ծաղկման, շենացման այս ընթացքն անխափան լինի:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ

տոնը. Կապանի ոչ մի ձեռնարկություն թալանված չէր: Ուղղակի դրանցում արդեն «մեռած» սարքավորումներ էին, չէին կարող աշխատել:

Մինչեւ 1994թ. հրադադարը Սարուխանյանը քաղաքը դեկավարեց պատերազմական պայմաններում եւ իր գործունեության հիմնական ուղղվածությունը համարում էր քաղաքի պաշտպանության կազմակերպումը:

այստեղ հաջողության հասան, մնացած տեղերում պարզապես ինքնապաշտպանություն էր կազմակերպվում:

Պատերազմին անպատրաստ քաղաքում նաեւ բնակչության անվտանգությունն էր պետք հնարավորինս ապահովել: Բոլոր բնակելի շենքերի ներքնահարկերում ապաստարաններ կառուցվեցին:

Կապանում այդ ժամանակ ապրած յուրաքանչյուր մարդ հերոս է»:

Սարուխանյանը հիշում է այն ժամանակվա միասնությունը, որը դժվար է այսօր պատկերացնել: Բոլոր ձեռնարկությունները մասնակցել են ինքնապաշտպանությանը, դիրքեր էին գնում, սնունդ, զինամթերք, մարդկային ու ռմբակային զինամթերք:

Սարուխանյանը հիշում է, որ երբ կոնքրետի աշխատանքը ծանր պահերին ուզում էին 1-2 օրով դադարեցնել, բանվորները բողոքում էին, թե կզմանք եւ կաշխատենք:

Նշելով, որ այն ժամանակակից ոգեւորությունն այլ էր, որը, ցավոք, այլեւս կարող է չլինել, Սարուխանյանը փաստում է, որ այսօր

կապանցու կամքը կտրել են, որ առավել հեշտ դեկավարելի դարձնեն: «Մեքե ոչ գեներալ էինք, բայց հաղթեցինք ու հաղթեց մեր ոգին. մեր տղաներից մի հոգի՝ Միկոթը կամ Սլավիկը 100 թուրք էր փայցնում... Այսօր չկա ոգին, այժմ մասին պիտի մտածենք՝ ո՞նց ենք դիմանալու, չէ՞ որ պատերազմը չի ավարտվել... Ես այդպիսին չեմ ուզում տեսնել զանգեզուրցուն, Նժդեհը, Դավիթ Բեկը այդպիսին չեմ տեսնել: Բոլորն են հպարտացել, որ Ձանգեզուրը ոչ մի անգամ լծի տակ չի եղել»:

Այժմ Երեւանում բնակվող Ռադիկ Սարուխանյանը պատմում է, որ մայրաքաղաքում շարունակում է գործել 1988-ին ստեղծված Երեւանաբնակ կապանցիների «Կապան» կազմակերպությունը, որի նախագահը Ռազմիկ Մովսիսյանն է:

Մեծ հարցեր չեն կարողանում լուծվել, փորձում են ուսանողներին օգնել: Ու նաեւ թույլ չեն տվել, որ ի տարբերություն այլ հայրենակցական միությունների՝ կազմակերպությունը քաղաքականացվի:

ՊԱՏՄԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կապան քաղաքի շրջագծի մեջ մտած բնակավայրերը

Աշտարակ ■ Ավան՝ Կավարտիցուր գետակի ծախ մասում, Կապան-Կավարտ ավտոճանապարհին առընթեր: Որպես բնակավայր պաշտոնապես չի ճանաչվել: Հիմնավորը գյուղատեղի է: 871թ. գրված մի կավածագիր-սիգելի նկարագրության համաձայն՝ հանրահանրում է Բաղք Կշմատուք գյուղին կան նրա հանդամասերից մեկին: Ղափանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեան որոշում է ընդունել Ղափան քաղաքից Լենինյան հանքեր տանող ճանապարհի աջ մասում գտնվող թաղամասը անվանակոչել Աշտարակ՝ հին լեռնագործ, հանգուցյալ Աշտարակի Գրիգորյանի անունով (1966թ. հունվարի 26-ի որոշմամբ) («Պղնձի համար», 4 փետրվար 1966թ., N 15):

Աջախու ■ Չորքի վիճակի մեջ, հիմնավորը Կապանի դիմաց, Ողջի գետի ձախ կողմում: Հս-արմ կողմում բանաստեղծական ներշնչանք բերող բարձրաբերձ ջրվեժն է, որ սնվում է Կատար լեռան աղբյուրներից: Ոմանք այստեղ՝ Կատար լեռան վրա են դնում Աղջկաբերդը: Բնակավայրի արեւմտյան կողմում հեթանոսական մեհենատեղի կա: Արեւելյան կողմերում Կկոց բերդն է, տեղացիներիս հնչմամբ՝ Ղըլլալա:

Աջախուն Ստ.Օրբելյանի հիշատակած Աջաղու գյուղն է, որի պարզամիտ քրիստոնյա բնակչությանը խաբելով՝ սելջուկ հրոսակապետը բաց անել տվեց... Բաղբերդի դռները եւ ավերեց: Գյուղում կա կիսականգուն եկեղեցի, նշմարելի են մի այլ եկեղեցու ավերակները: Վահանավանքը կառուցելուց հետո Վահան Չագիկյանը, ի թիվս այլ գյուղերի, վանքին է նվիրել նաեւ Աջաղուն, որը հիշված է Տաթևի վանքի հարկացուցակում՝ ութ միավոր հարկի չափով: Գյուղանունը, ակներեսաբար, ունի աչ եւ աղու արմատները, որոնք բնորոշ են Այունիքի՝ հեթանոս շրջանից ավանդված տեղանուններին:

Արփիկ ■ Ավան՝ Կավարտիցուր գետակի աջ մասում, Աշտարակից հարավ, գրեթե Կապան քաղաքին առընթեր: Տեղանունը 19-րդ դարի խոշոր հանքատեր Սելիք-Ազարյանի դստեր՝ Արփիկի անունից է: Հիմնավորը գյուղատեղի, արեւմտյան կողմում կան հին գերեզմանոցի հետքեր: Շրջակայքում մեկոարյա հնության ավերակ հանքախորշեր կան:

Բաղաբուրջ ■ Հիմնավորը գյուղ՝ Կապանից 3-4 կմ հարավ-արեւմուտք, Վաչագան գետի աջակողմ բարձունքին: Բարբառում՝ Պղավերձ: Ստեփանոս պատմիչի՝ 13-րդ դարի հարկացուցակում հիշատակված Բեխեւերջի գյուղն է: Մոտակայքում է սբ Հռիփսիմե անվամբ, սրբատաշ քարերով կառուցված թաղակապ եկե-

Բաշքենդ (Բաշքյանդ) 1846թ. վերսկսվեց Կապանի շրջանի Կավարտի պղնձահանքերի շահագործումը: Տրապիզոնից եկած մետաղագործ եղբայրներ Կոնդուրովները Արեւմտյան Հայաստանից հրավիրում են 128 հույն բանվորի: 1848-ին Կավարտից երկու կիլոմետր հեռավորության վրա կառուցվում են առանձնատներ: Հույն բանվորների մեծամասնությունը երիտասարդներ էին, որոնք ավելի ուշ ամուսնացան Արեւմտյան Հայաստանից գաղթած, ազգությամբ հույն աղջիկների հետ: 1854թ. Բաշքենդում կառուցվեց հունական եկեղեցի, որը տեղացի հայերն անվանում էին «Բերդենների եկեղեցի»: Բաշքենդի եկեղեցին մինչեւ այսօր կիսավեր վիճակում կանգուն է: Հայ ժողովրդի բարեկամները տարիներ շարունակ ապրեցին ու արարեցին հանքահորերում, պղնձածուլական գործարաններում, արհեստանոցներում եւ գյուղական տարբեր բնագավառներում: Ցավոք, հույներն այդ ծաղկուն ու բարգավաճ գյուղում երկար չմնացին՝ ընդամենը 73 տարի: Նրանց զանգվածային արտագաղթը կատարվեց 1918-1921թթ. հեղափոխության եւ քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում: Մի քանի տարի Բաշքենդը մնաց առանց հիմնական բնակչության: 1923-25թթ. Կավարտից Բաշքենդ տեղափոխվեցին 20 հայկական ընտանիք: Այստեղ կրկին կյանքն իր բնականուն հունի մեջ մտավ: 1924 թվականից նոր

բաշքենդցիներն աշխատանքի անցան վերականգնված հանքահորերում: Բաշքենդ գյուղը վերածունդ ապրեց ընդամենը 35 տարի (1922-1957): 1957թ. մայիսի 5-ի պատահարի պատճառով բաշքենդցիները կրկին ստիպված եղան հեռանալ գյուղից: Պատահարի օրը գյուղի բնակչուհի Սաթենիկն իր հողամասում աշխատելիս անհետացավ: Դրոյումի ծայր լատի հարեւաններից մեկը համապարտեցնեցին հետ միասին շտապեց դեպի վայր: 10-12 մետր խորությամբ փոս էր առաջացել: Պատահարի վայր մեկնած փրկարարները չկարողացան փրկել Սաթենիկի կյանքը: Տեխնիկայի բազմաթիվ միջոցներ օգտագործելով, միայն չորրորդ օրը հաջողվեց դիակը հանել փլատակներից: Սաթենիկի ողբերգական մահից հետո էլ կայացվում է Բաշքենդ գյուղը տեղափոխելու մասին որոշումը: 1957 թվականին՝ վերոնշյալ որոշումից հետո, գյուղի բնակչությունը բնակություն հաստատեց Կապան քաղաքում: Բացառությամբ կիսավեր հունական եկեղեցու՝ գյուղի բոլոր տները քանդվեցին: Գյուղը եւ շրջակայքն ընդհանուր հաշվով 75 հազ. քառ. մ, ցանկապատվեց եւ հայտարարվեց վտանգավոր գոտի: Նշված տարածքում 300 մետր տրամագծով էլ մոտ 14 մետր խորությամբ փոս առաջացավ: Այսօր երբեմնի ծաղկուն գյուղից միայն կիսավեր հունական եկեղեցին է մնացել:

Բաշքենդի հունական ուղղափառ եկեղեցին /XIX դար/



պարիսպ, աշտարակ: Բաղաբուրջի մոտակայքում կան գյուղատեղիներ: Կապանի մեջ է 1958 թվականից: **Բարաբաթում** ■ Կապանից հս-արեւելք, Ողջի գետի ձախ կողմում: Բարբառում՝ Պռաբումբ, գյուղաբնակը՝ պղնձաբերդեցի: Ալիշանը կոչում է նաեւ Պռաբատում: 1886թ. գյուղը ունեցել է 41 տուն, 332 բնակիչ: 1906թ. գյուղը ուներ 445 բնակիչ, զբաղվում էին երկրագործությամբ եւ անասնապահությամբ: Գյուղում կա կանգուն թաղակապ եկեղեցի: Մոտակայքում կան բազմամետաղային հանքավայրեր:

Բեխ ■ Հիմնավորը գյուղ եւ մեհենատեղի՝ Կապանից 4 կմ հյուսիս-արեւմուտք, Ողջի գետի աջ կողմում, Խուստուփ լեռան լանջին, Կովկասյան վիճակի մեջ: Բարբառում՝ Պեխ, Ստ.Օրբելյանի իր գրքում գետեղել է մի սիգել, ըստ որի՝ փրկչական 871թ. Կովկասյանի Բեխ գյուղը փոխանակվել է Բաղքի Արուբս գյուղի հետ: Բեխը մեկիցանիստ գյուղ է, հայտնի է Մելիք-Փարսադանյաններով: Այս տոհմը Տաթևի համանուն տոհմի մի ճյուղն է: Մելիք-Փարսադանյաններից են ճյուղավորվել Առաջածորի Մելիք-Ստեփանյանները:

Մելիք-Փարսադանյանների տոհմածառը «Չանգեզուրի հայերը» գրքում գետեղել է հեղինակ Ստ.Լիսիցյանը: Բեխում միանավ, թաղակապ, կանգուն եկեղեցի կա, որի բակում Մելիք-Փարսադանյան Բալի (Բալի 2-րդ) զորավարի տապանաքարն է՝ ՌՄԽ թվականով, որը 1791թ. է: Սա այն Բալին է, որի մասին գրել է Ալիշանը՝ վկայակոչելով Ստեփանոս Չահույանին:

Բեխի մոտակայքում են Փռաբարի վանքը, Հալիծորի բերդը: Մերձակայքում նշմարելի են Հալիծոր գյուղի (երա Մարան) ավերակները: Բեխի անունն իբր ծագել է շրջակայքի անտառում բոխի ծառերի առատության համար:

Լենիկյան հանքեր ■ Բանավան՝ Սայաղ լեռան ճյուղավորման վրա, Կավարտիցուր գետակի աջ ափին: Բարբառում՝ Լենգրուպպա, գեղջկաբար՝ Լենյան: Անունն առել է բուշեւիկների նախակարապետ Վլադիմիր Ուլյանովի Լենին մականունից: Նախկինում կոչել են Ղաթարի հանքեր կամ Ղաթար, փոքրինչ հարավ գտնվող Ղաթար բնակավայրի անվամբ: Անվիճելի է, որ մոտակայքում էր Արուբսը:

Այստեղ գտնվող պղնձահանքերը շահագործվել են տակվին նախաքրիստոս ժամանակներում: Ալիշանը գրում է. «Ղաթար գետը հայանուն, որ ոչ յիշի ի ցուցակս եւ ի պատմութեայն, այլ միայն Կատարոյ վանք: ... Ի սահմանս գեղջս, որպէս եւ Կաւարտայ յայանեալ են Պղնձահանք, կարկածք Յունաց ոմանց եւ Հայոց Ազուլեցուց, հաստատեալ անդ հալոցս եւ քուրայս զտելոյ, որոյ աղագաւ բարբառանել առնու գիւղն եւ սահմանորոքն. որք եւ միաբանեալ ի սկիզբն 1891 տարւոյ հանգանակեցին գումար մեծ դրամոյ առ ի հաստատել դպրոցս» (էջ 278):

Կավարտ ■ Ավան եւ նախկինում գյուղ Կապանից 4 կմ հս-

արմ: Հիշատակված է Ստ.Օրբելյանի կողմից, Տաթևի վանքի 13-րդ դարի հարկացուցակում, Բարք-Աճանան գավառում: 1823թ. մի փաստաթղթում Կավարտը հիշատակված է որպես կայուն (ոչ վերաբնակեցված) գյուղ Փիսիան մահալում, որը բռնում էր Աճանան գետի եւ Ողջի գետի միջեւ ընկած տարածքը: Բաց հանքի ընդլայնման պատճառով 1963թ. գյուղը տեղահանվել ու տեղափոխվել է մոտ 2 կմ արմ, Կավարտի ծորի ակունքը: Քանդվել է 17-րդ դարի շքեղ եկեղեցին:

Շահարջիկ ■ Կապանից 4-5 կմ արեւմուտք, Ողջի գետի ձախ կողմում: Երկուն էլ՝ Ներքին եւ Վերին, սա Վերինն է: Բարբառում՝ Շահարջիկ: Նույնացվում է Ստեփանոս պատմիչի հիշատակած Շեկք կամ Շեքքա գյուղ-ամրոցին: Թարգմանաբար, կարծես, քաղաքավայր կամ փոքր քաղաք է նշանակում: Դրան նպաստում է գյուղի մերձավորությունը հնամենի Կապան քաղաքին, որ գետի աջ ափին էր:

Ալիշանը գործածել է Շահարճիկ, Շհարջուկ, Շեհիճիք եռանուն ձևեր: 1990թ. անվանակոչության ժամանակ առաջարկվել է Շղարշիկ նորահնար գյուղանունը:

Շահույան ■ Կապան ոստանից 4-5 կմ հս-արլ, Աճանան գետի աջակողմ բարձունքին: Բարբառում՝ Շահույան, Շահույանի հանքեր, Շահույան: Նախկինում հայտնի էր Գյունուշ մաղարա անվամբ, որ արաբերենից թարգմանվում է Արծաթի հանք: Հիմնավորը գյուղատեղի է Բարք-Աճանան գավառում:

Անցյալ դարում այս Արծաթահանքը պատկանում էր Նազարբեկյանցին ու Միրզաբեկի են Հալիծոր գյուղի (երա Մարան) ավերակները: Բեխի անունն իբր ծագել է շրջակայքի անտառում բոխի ծառերի առատության համար:

Վաչագան ■ Կապանից 5-6 կմ հարավ-արեւմուտք, Վաչագան գետի ձախ կողմում, Խուստուփի ստորոտին: Սա Վերին Վաչագանն է: Ներքինը, որ նաեւ Քյարխանա է կոչվել, նույնպես ներառվել է Կապանի մեջ: Բարբառում՝ Վըջան: Կովկասյանի հիմնավորը գյուղերից է: Ենթադրվում է, որ հիմնավորը անունը Վաժմատուք էր: Դիցավայր է: Պահլավերնում վաժ նշանակում է աղոթք: Ըստ Ս.Ունառյանի՝ բարբառային աղավաղմամբ դարձել է Վաչագան: Ժողովրդական մի ստուգաբանությանը գյուղանունը կապվում է Վաչագան Բարեպաշտին՝ Աղվանքի թագավոր: Ալիշանը գիտի Վեչագան: Նորագույն բնակավայրերի ցուցակում Մխիթարյան Հայրիկը նաեւ ունի Վըջան, նաեւ Քուլու: Այս վերջինը՝ որպես հանդանուն ու գյուղատեղի, Վաչագանի մոտ է, կա ավերակ եկեղեցի:

ՈՐՈՇԵՐՑ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՓԻՆԵ ՀԱՎՈՐԵԱՆ

ղեցին, որի բեմի մոտ երկու խաչարձան կա: Եկեղեցու մոտերքում կա ավերակ գյուղատեղի: Ըստ մի ավանդազրույցի՝ երբ

հարկահանները Բաղբում առել են հարկերն ու հասել այս գյուղին, իմանալով, որ գավառի վերջն է, այն հորջորջել են Բաղավերջ: Բաղա-

բուրջ հնչյունն աղավաղումն է Բաղաբուրջի. բուրջ բառը բուրգն է, որ արաբախոսի մոտ տառադարձված է: Բուրգ-բուրջ նշանակում է

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կապան. կրթության արգասաբեր ուղին

Կապանում դպրոցաշինության եւ ուսուցման գործի հիմքերը դրվել են 19-րդ դարի 70-80-ական թվականներին (առաջին հերթին գյուղերում) փեղացի բարերարների եւ նրանց աջակիցների միջոցներով կառուցված դպրոցներում՝ Արծվանիկում (1872թ.), Առաջաձորում (1896թ.), Շիկահողում (1875թ.), Վաչագանում (1878թ.), Բեխում (1971), Գեղանուշում (1876թ.), Եղվարդում, Ծավում, Շրվենանցում (1902թ.): Վերջինս, որ կառուցվել էր Բաբվի «Արամագր» ընկերության խորհրդի նախագահ Գ.Հ.Մարգարյանի միջոցներով, առանձնանում էր իր հարմարություններով՝ փխայալին շենքով, ուսուցչական կադրերով, բարձր աշխատավարձով եւ այլն:

Դարասկզբին 35 հայկական գյուղերից 15-ում գործող դպրոցներում սովորում էր 644 աշակերտ:

1918-21թթ. ստեղծված ծանր իրադրության պատճառով փակվեցին համարյա բոլոր դպրոցները, 1921-22 ուստարում առաջին հերթին բացվեցին գավառակներում՝ Շրվենանցում, Վ.Յանդում, Արծվանիկում, Ագարակում, Շիկահողում, Ծավում, Գյուտկունում. ընդամենը՝ 350 սովորող:

Նորաստեղծ խորհրդային իշխանությունը պետականացրեց լուսավորական հիմնարկները, մտցվեց 16 տարեկան երկսեռ երեխաների ուսուցում: Կապանում ժողկրթության տեսուչ նշանակվեց Վաղարշակ Մելիք-Քարամյանը (Ղարաբաբ): 1921թ. տեղի ունեցավ Ղափանի ուսուցիչների առաջին համագումարը: Ժողկոմսովետի 1921թ. դեկտեմբերի անգրագիտության վերացման հանձնարարությունը արշավ սկսվեց, իսկ մինչ այդ 1920թ. դեկտեմբերի հայերենը հայտարարվեց պետական լեզու: Սկսեցին գործել անգրագիտության վերացման լիկկայաններ Ղափանում, գյուղերում: 1931-32 ուստարում 5907 անգրագետներից գրագետ էր դարձել 5619-ը:

Դպրոցական աշխատանքները սկսվեցին 1921թ. հոկտեմբերից: 1923-24 ուստարում գործում էր առաջին աստիճանի 28 դպրոց՝ 37 ուսուցիչներով եւ 1700 աշակերտներով: Պետությունն ի գործ էր առնում շտաբային հատկացնել դպրոցներին, ուսուցիչներին, չկային դասագրքեր, գրեմական պիտույքներ, ուսումնական ծրագրեր: Ուսուցիչները վարձարարվում էին բնամթերքով, մանուֆակտուրայով:

1924թ. Ղափանի պղնձահանքերի վերականգնումով նյութական հիմքեր ստեղծվեցին նոր դպրոցների բացման, դրանց կահավորման համար: 1928-29 ուստարում պղնձահանքերին կից բացվեց ժողկոմսովորական դպրոցը, որը հետագայում վերածեց բաներիտի: Մանկավարժական կադրերի ուսուցումը նախապես կազմակերպվում էր կարճատև դասընթացներով Գորիսում, որտեղ դասավանդում էին Երեմիա Բակունցը, Ստեփան Լիսիցյանը, Կարո Մելիք-Օհանջանյանը: 1935-34 ուստարում շրջկենտրոնում սկսեց գործել Ղափանի մանկավարժական ուսումնարանը (դիրեկտոր՝ Արվիկ Գրիգորյան), որը մինչև 1941թ. տվել է 300 շրջանավարտ:

Բուն Կապան քաղաքում, ինչու չէ, նաեւ շրջանի կյանքում, իրադարձություն էր անդրամիկ դպրոցի բացումը 1923թ., որը (ինչպես նաեւ Շրվենանցի դպրոցը Նորաշենիկի ենթաշրջանում) տարիներ շարունակ մինչև կրթության գործի կայուն

առաջընթացը լրջագույն դեր է ունեցել մյուս դպրոցների բացման եւ հիմնավորման գործում: Դպրոցը սկզբում տարրական էր, 1925-26 ուստարում վերածվեց յոթնամյայի: 1932թ. կառուցվեց ժամանակաշրջանին պատշաճող հարմարություններով դպրոցական շենք. դպրոցը դարձավ միջնակարգ-ինտերնացիոնալ: Փաստորեն, Կապանի N1 միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1925-ին, որը հետագայում հիմք դարձավ N3 (ռուսական), ադրբեջանական եւ N2 միջնակարգ դպրոցների բացման եւ ինքնուրույն գործունեության համար:

Կապանի մայր դպրոցը նաեւ մանկավարժական կադրերի դարձնող էր, որի շրջանավարտներից շա-

Յետպատերազմյան տարիներին, չնայած լրջագույն դժվարություններին, պատերազմի հասցրած վերքերին, դպրոցներում հաջողությամբ շարունակվեց ուսումնական գործընթացը, հատկապես 60-70-ական թվականներին, երբ Ղափանում վերելք ապրեց արդյունաբերությունը: Համարյա բոլոր գյուղերում կառուցվեցին նոր տիպային դպրոցական շենքեր՝ օժանդակ կառույցներով, սպորտային համալիրներ, ուսուցչի տներ, մանկապարտեզներ:

Բնակչիության ծավալման շնորհիվ Կապանում ուսուցիչներն ապահովվեցին հարմարավետ բնակարաններով, բարելավվեցին նրանց սոցիալական, կենցաղային պայմանները, հանգստի, բուժման կազմակերպումը: Հարյուրավոր մանկավարժներ արժանացան կառավարության, տեղական իշխանությունների բարձր պարգևների ու կոչումների:

Դպրոցները, ուսուցիչները լուրջ դերակատարում ունեն շրջանի մշակութային, սպորտային, հասարակական կյանքում: Յետաքրքիր մի

արվեստի պետական, բժշկական, ճարտարագիտական, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի քոլեջները, թիվ 3 հատուկ կրթահամալիրը: Բացվեց կրթության ազգային ինստիտուտի Կապանի մասնաճյուղը:

Բուհերից քաղաքում գործում են Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) Կապանի մասնաճյուղը, Ռուս-հայկական ժամանակակից հումանիտար ինստիտուտի Կապանի մասնաճյուղը, Երեւանի կիրառական բիոտեխնոլոգիաների ինստիտուտի Կապանի մասնաճյուղը, որոնց պատրաստած կադրերի պահանջը կարելի է ոչ միայն Կապանի համար: (Այժմ Կապանի բոլոր բուհերում միայն մոտ 1000 ուսանող է սովորում):

ՀԳԵՀ Կապանի մասնաճյուղը կազմավորվել է 1996թ.՝ 1984թ. ԵրՊԻ հեռակա ուսուցման ֆակուլտետի կից ստեղծված Կապանի ուսումնախորհրդատվական կետի հիմքի վրա:

Մասնաճյուղը տեղաբաշխվել է Կապանի նախկին ճարտարագիտատեխնոլոգիական քոլեջի մասնաշենքերում: Մասնաճյուղը 1996-97 ուստարում ուներ 14 հիմնական դասախոս, «Ընդերքաբանական ճարտարագիտություն» եւ «Հաշվողական տեխնիկա» մասնագիտություններ սովորող 125 ուսանող: Ներկայումս մասնաճյուղի կազմում գործում են երկու՝ ընդհանուր պատրաստակառության եւ մասնագիտական պատրաստակառության դեպարտամենտներ, չորս ամբիոն, երեւանյան կրթահամալիրի երկու ամբիոնի մասնաճյուղ: Բուհն այսօր ունի 426 ուսանող՝ ճարտարագիտության բակալավրի եւ դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրերով 7 մասնագիտությունների եւ մասնագիտացումների գծով:

Ունի նաեւ հեռակետային վարժարան:

Մասնաճյուղում դասավանդում է 42 դասախոս, այդ թվում՝ 10 գիտությունների թեկնածու: Բուհում գործում է արտադրական կապերի եւ ուսանողների կարիերայի աջակցման կենտրոնը, որը նպաստում է համալսարան - արդյունաբերություն կապերի զարգացմանը:

Այստեղ գործում են տեխնոլոգիական հագեցած կարողությամբ լսարաններ, ստեղծվում են վիրտուալ լաբորատորիաներ: Գործունեության ընթացքում այն տվել է 753 շրջանավարտ, ովքեր զգալի ավանդ են ներդրել Այրնիքի արդյունաբերության զարգացման, ճարտարագիտական եւ գիտատեխնիկական ներուժի ձեւավորման գործում:

Քաղաքի կրթական համակարգի մի մասն էլ ապահովում են նախադպրոցական հիմնարկները:

1997թվականից մանկապարտեզները համայնքային ենթակայությամբ են գործում: Կապանում գործում է 13 մանկապարտեզ, որտեղ 345 մարդ է աշխատում (105 դաստիարակ): 2008-ին մանկապարտեզ է հաճախել 284 երեխա:

Ընդհանրացնելով նշեմք, որ Կապանի դպրոցները, ուսումնական մյուս հաստատությունները տարիների ընթացքում հայրենիքին՝ նորահայն Հայաստանի Հանրապետությանը, տվել են բազում բարձրակարգ մասնագետներ՝ գիտնականներ, պետական, քաղաքական, հասարակական գործիչներ, արտադրության կազմակերպիչներ, ռազմական, աշխատանքային հեղուկներ, որոնցով հպարտանում է ոչ միայն հայ ժողովուրդը:

Այդուհանդերձ, ինչպես անցյալում, այնպես էլ այսօր դպրոցում կատարվող վերափոխումների կրողը եւ դրանք կյանքի կոչողը երեխային իր սրտի ջերմությունն ու ծնողական քնքշությունը նվիրաբերող բարի, անաչառ ու անկաշառ ուսուցիչն է:

ԱՆՈՒՆՎԱՆ ԱՐԱՄՅԱՆ



ՀԳԵՀ Կապանի մասնաճյուղը կազմավորվել է 1996թ.՝ 1984թ. ԵրՊԻ հեռակա ուսուցման ֆակուլտետին կից ստեղծված Կապանի ուսումնախորհրդատվական կետի հիմքի վրա:

տերն ուսուցչական աշխատանքի են անցել ինչպես քաղաքի, այնպես էլ գյուղական դպրոցներում: ՀՀ վաստակավոր ուսուցիչներից 35-ից 32-ը բեղմնավոր աշխատանք են կատարել այս դպրոցում:

1986-87 ուստարվանից N1 դպրոցը շարունակել է գործել նորակառույց համալիրում: 2005թ. մեծ շուքով նշվեց դպրոցի 80-ամյակը:

Սերունդների կրթության եւ դաստիարակության գործում արգասաբեր ճանապարհ են անցել Կապան քաղաքի թիվ 2, 3, 6, 7, 9, 10, 13, 27 (թիվ 1 հատուկ), Լեն հանքերի, թիվ 11, Քաջարանի թիվ 1, 2, Շրվենանցի, Առաջաձորի, Ղափիթբեկի, Շիկահողի, Ծավի, նորարարությամբ միութենական ճանաչման արժանացած Լեռնաձորի դպրոցները:

Ղափանի դպրոցների, ուսուցչության կյանքում եղել են նաեւ աղետալի, դժվար տարիներ: Նկատի ունենք հատկապես 1930-ական թվականները:

Հայրենական մեծ պատերազմի առաջին տարիներից սկսած՝ ռազմաճակատ մեկնողների թվում զգալի թիվ էին կազմում շրջանավարտները, ուսուցիչները, որոնց փոխարինեցին կռվից վերադարձած հաշմանդամներ, երիտասարդ, անփորձ, համապատասխան կրթություն չունեցող մարդիկ, մեծ մասամբ՝ կանայք: Կռվի դաշտ մեկնած 275 Ղափանցի ուսուցիչներից շատերը չվերադարձան:

վաստ. 1924թ. Շրվենանցի դպրոցում ուսուցիչներից կազմված ինքնագործ խումբը ենթաշրջանի գյուղերում բեմադրել է «Անուշ» օպերան, դպրոցում գործել է նաեւ երկձայն երգչախումբ, որը ելույթներ էր ունենում գյուղերում: Կապան քաղաքի եւ շրջանի ինքնագործ խմբերը շրջանային եւ հանրապետական մրցույթներում մրցանակների են արժանացել:

Կրթախյան պատերազմը լուրջ փորձություն էր Կապան քաղաքի եւ սահմանամերձ գյուղերի բնակչության համար, որի հաղթանակում իրենց բաժինն ունեն դպրոցները, ուսուցիչները, շրջանավարտները:

Անկախացման շրջանում եռագույնի երկուցից ծնվեցին նոր դպրոցներ, որտեղ հայերեն հնչեց դպրոցական առաջին զանգը, հայացավ գյուղը: Դժբախտաբար, այդ տարիներին եղան նաեւ սխալներ, կարգային կորուստներ (մի շարք դպրոցների լուծարում՝ աշակերտների, դասարանների թվի նվազում եւ այլն):

Քաղաքի կրթության կյանքում նորույթ էր Կապանի վարժարանը: Յեղիմկավոր եւ բանիմաց մանկավարժներով ձեւավորված կոլեկտիվի շնորհիվ առաջին իսկ տարիներից վարժարանի սաները փայլեցին դպրոցականների օլիմպիադայի մարզային եւ հանրապետական փուլերում ցուցաբերած արդյունքներով: Քաղաքում գործում են նաեւ

ՄՇԱԿՈՒՅՑ

Պատմամշակութային հուշարձանները



ՀԱՍՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Կապանի երկրագիտական
թանգարանի գիտաշխատող

Պատմական նշանակալից
դեպքերը, ռազմական հաղթանակները, քաղաքական գործիչներին, ազգային հերոսներին հավերժացնելու համար միշտ էլ կանգնեցվել են հուշարձաններ:

Կապանի տարածքում դեռ հնագույն ժամանակներից եղել են կոթողներ (Ֆալլուս, Խաչքար, Խոյակերպ քարեղեն արձաններ...): Արձաններ սկսեցին երեւալ նաեւ Խորհրդային կարգերի հաստատումից հետո. որանք կոմունիստական կուսակցության առաջնորդների գիպետ, քարե, պղնձե նմանակներն էին:

Առաջինը Ստալինի՝ առաջնորդի կիսանդրին զարդարեց մեր քաղաքը: Ու ինչպես ԽՍՀՄ-ի բոլոր քաղաքներում, գյուղերում, այնպես էլ 1934-ին դեռուս բանվորական ավան Դափանի կենտրոնում «կանգնեցվեց» Կորան: Տոնական առաջին շքերթներն անցնում էին նրա մոտով, եւ նրա շուրջ էին տեղի ունենում կարեւոր միջոցառումները:

Այսօր քչերը գիտեն, որ մեր քաղաքում տեղադրվել է ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի ամրան Անաստաս Միկոյանի արձանը, որը

մեծ ոգեւորություն էր առաջացրել քաղաքացիների մեջ:

1938թ. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության հրամանագրով Դափանի շրջանի Դափան բանվորական ավանը քաղաքի փոխակերպման առիթով կուսակցության շրջանային կոմիտեի որոշմամբ քաղաքի Երկրորդ փողոցում՝ գետափնյա փոքրիկ այգում՝ ներկայիս մշակույթի պալատի տեղում տեղադրվեց Վ. Ի. Լենինի գիպետ ամբողջ հասակով կանգնած արձանը: 1959թ. քաղաքի ճարտարապետական նոր նախագծով այն տեղափոխվեց Ռոմանոս Մելիքյանի փողոցի վերնամաս՝ ներկայիս լռած հուշարձան աղբյուրի վայր: Լենինի գիպետ արձանը, ինչպես եւ հետագայում՝ 1975թ. տեղադրված պղնձածուլ կիսանդրին, գրեթե նույն ճակատագրին արժանացան: Պատմում են, որ գիպետ արձանի գլուխը, ինչ-ինչ նկատառումներից ելնելով, ջարդել է կապանցի մի երիտասարդ՝ Հրաչիկ անունով: Վնասված արձանին փոխարինել է նորը՝ արդեն պղնձածուլ կիսանդրին, որը տեղադրվել է ներկայումս Արամ Մանուկյան փողոցի հրապարակում (այժմ՝ Դավիթ Համբարձումյանի կիսանդրին է տեղադրված այնտեղ): Հուշարձանի հեղինակներն էին քանդակագործներ, ՀՍՄՀ վաստակավոր նկարիչ Սերգեյ Բաղդասարյանը եւ Մարատ Նուրիջանյանը: Այդ աշխատանքներին մասնակցել են նկարիչ-դրվագող Վահրամ Խաչատրյանը, էլեկտրաեռակցող Մելիկի Հարությունյանը, քարտաշերեսապատողներ Մարտուն Հարությունյանը, Օգեսն Հայրապետյանը:

ԽՍՀՄ-ի փլուզման հետեւանքներն անդրադարձան նաեւ փակվող հասարակարգի առաջնորդների արձաններին:

Ազգային շարժման տարիներին պայթեցվեց Լենինի կիսանդրին, եւ չգտնվեց մեկը, որ կարողանար գապել ամբողջ վրեժխնդրությունը: Արդեն տարիների հեռավորությունից ավելի հեշտ է սթափ դատել. արդյոք չէ՞ր կարելի ընտրել խնդրի

լուծման այլ տարբերակ: Հիշենք, այսօր աշխարհի հայտնի թանգարանները զարդարված են կուռքերի արձաններով:

Պատմում են, որ այդ տարիներին, ընդամենը երջանիկ պատահականությամբ, վստահություն ներշնչող մի մարդու խոսքով, այն է՝ Բագրատ Հարությունյանը կոմունիստ չէր, ամբողջ գրոհից փրկվել է նրա հուշասյունը:

1958թ. հոկտեմբերին ՀամԿԵՄ 40-ամյակին քաղաքի զբոսայգում՝ այժմ Հայաստանի Հանրապետության ազգային հերոս Վազգեն Սարգսյանի անվան զբոսայգում, բացվեց Խորհրդային Միության հերոս, Կապանի Ծավ գյուղացի, 89-րդ Թամանյան դիվիզիայի սերժանտ Հունան Ավետիսյանի արձանը:

Գրանիտե պատվանդանի վրա ամբողջ հասակով կերտված հերոսն է՝ աջ ձեռքին ավտոմատը՝ պատրաստ մետվելու մարտի: Պատվանդանը դրված է ԴՁՕՏ-ի վրա, որը կրկին հիշեցնում է մեզ Հունան Ավետիսյանի՝ Ղուլգայա լեռան վրա ցուցաբերած սխրանքը՝ սեփական մարմնով հրակնատը լռեցնելը: Այս հրաշալի գործի հեղինակը նույնպես Սերգեյ Բաղդասարյանն է: Պատվանդանի հեղինակն է Իլյին Տարասովը:

70-ականներին քաղաքի կառուցման հետ միասին բարձրացվեց այն ձեւավորելու խնդիրը: Եվ նորից խոսեց ազգային ոգին: Որոշվեց քաղաքի կենտրոնական մասում՝ Ողջ գետի ձախ ափին, տեղադրել Սյունիքի ազատագրական շարժման ղեկավար, զորավար Դավիթ-Քեկի արձանը: Այսօր էլ լսում ենք դժգոհություններ այն մասին, որ արձանը Դավիթ-Քեկի իրական կերպարին չի համապատասխանում: Ասենք, որ սկզբնական փուլում այլ կերպ էր նախագծվել այն. թուրը ձեռքին դեպի արեւելք՝ պատրաստ պաշտպանելու իր հողը: Սակայն Կապանի՝ Մոսկվա հասած աղբբեջանական համայնքի դժգոհությունները տեղի տվեցին եւ Դավիթ-Քեկը կերտվեց այնպես, ինչպիսին տեսնում ենք.



«Սիրո Մեղեդի»

հաղթական արշավանքից հետո զորավարը վերադառնում է Հալիծորի բերդ: Քաղաքի գլխավոր արձանը տեղադրվեց 1978թ.: Ռուսաստանի հետ Արեւելյան Հայաստանի միավորման 150-ամյակի առթիվ: Արձանը, բազալտե պատվանդանը, ներքեւում պատ-համայ-

նապատկերը՝ մարտի ու խաղաղ կյանքի տեսարանների հարթաբանդակներով եւ քիչ հեռավորության վրա տեղադրված պղնձածուլ գանգը կազմում են մի ամբողջական համալիր եւ լրացնում են մեկը մյուսին: Այս հուշարձանի հեղինակը հանրահայտ Սերգեյ Բաղդասարյանն է, որը զորավարին կերտել է հավանաբար իր

Ի՞նչ են պատմում վավերագրերն ու ցուցանմուշները



ՇՄԱԿՈՒՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Երբ մոռացության մշուշն իջնում է անցյալի վրա, պատմական իշխողությունը վերականգնելուն օգնության են գալիս փաստաթղթերն ու վավերագրերը:

Ի՞նչ են պատմում դրանք Կապանի անցյալ տասնամյակների, դարերի մասին: Ուսումնասիրությունն սկսեցինք Հայաստանի ազգային արխիվից: ՏՏօրեն, պատմական գիտությունների դոկտոր Անատունի Վիրաբյանը տեղեկացրեց, որ Կապանին վերաբերող ամենաինքն փաստաթուղթը թվագրված է 1832 թվականով, երբ եկեղեցին մարդահամար անցկացրեց: Ինչ վերաբերում է քաղաքին առնչվող նախախորհրդային ժամանակաշրջանի փաստաթղթերի պահպանության վիճակին, ապա կան որոշ բարդություններ: Բանն այն է, որ 19-րդ դարում Դափանը մտնում էր Ելիզավետպոլի նահանգի մեջ, փաստաթղթերը

ժողովում էին Բաքվի կենտրոնական արխիվում: Նախախորհրդային շրջանից հիմնականում պահպանվել են եկեղեցական նյութեր, քանի որ եկեղեցին պատկանում էր Սինոդին: Պահպանվել են եկեղեցական նյութեր, որոնք առնչվում են եկեղեցաշինությանը, դպրոցաշինությանը (դպրոցները գործում էին եկեղեցուն կից), եկեղեցու եւ պետության փոխհարաբերությանը, եկեղեցու գրանցումներին՝ ծնունդ, ամուսնություն, մահ: Ելիզավետպոլից անցած դարի 20-30-ական թվականներին որոշ փաստաթղթեր տեղափոխվել են Հայաստանի պետարխիվ, բայց ինչպես նշեց Անատունի Վիրաբյանը, Երեւանի, Վաղարշապատի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի հետ համեմատած՝ Դափանին առնչվող փաստաթղթերը վատ են պահպանվել: Դափանը Ելիզավետպոլի կազմում լինելուց զատ՝ 18-20-ական թվականներին գտնվում էր քաղաքացիական կռիվների թատերաբեմում, ինչից շատ են տուժել փաստաթղթերը, մասնավոր դրանք օգտագործվում էին կենցաղային նպատակներով (փաստաթղթի մաքուր երեսին գրելու, մայրերկա փաթաթելու համար եւ այլն): Առավել ամբողջական է պահպանված Դափանի շրջանի կուսշրջկոմի արխիվը, որն ընդգրկում է յոթ տասնամյակ:

Արդ, ովքեր են հետաքրքրվում խնդրո առարկա արխիվով, կա՞ն ուսումնասիրողներ: Պարզվեց, որ ուսումնասիրողների թիվը վերջին շրջանում ավելացել է. կատարվում են թեմատիկ ուսումնասիրություններ երկու

ուղղությամբ՝ բնակավայրերի պատմություն եւ տոհմագրություն: Դափանի պատմություն ուսումնասիրողների թիվը սակավ է, եւ դա բացատրեցին մայրաքաղաքից հեռու լինելու հանգամանքով: Մարզկենտրոն Կապանի պատմությունն ամփոփված է նաեւ երեք հիմնարկներում՝ Ազգային արխիվի Սյունիքի մասնաճյուղում, Կապանի երկրագիտական թանգարանում եւ Շմավոն Մովսիսյանի հիմնադրած Կապանի պատմության թանգարանում: «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի Սյունիքի մարզային մասնաճյուղում հաշվվում է 214 ֆոնդ, որոնցում պահպանվում է 33529 միավոր գործ, ընդ որում 20-ը՝ անձնական ծագման՝ նշանավոր մարդկանց վերաբերող: Ինչպես նշեց մասնաճյուղի տնօրեն Արշալույս Փափազյանը, մասնաճյուղում պահպանվող արխիվը գիտապատմական առումով այնքան հարուստ չէ, մասնաճյուղում հիմնականում մշտական պահպանության եւ անձնակազմին վերաբերող գործեր են. մինչեւ 1930 թվականը Դափանը երթարկվում էր Ջանգեզուրի գավառներում, որի կենտրոնը Գորիս քաղաքն էր, 1930-ին կազմակերպվեց Դափանի շրջխորհրդի գործերը: Մասնաճյուղի անձնակազմի փաստաթուղթը Դափանի համալիրություն է: 1927-1928թթ. հրամանագիրքն է: 2007-ին ստեղծվել է երեք նոր ֆոնդ: ՏՏօրենը մտահոգություն հայտնեց այն առիթով, որ լուծարված եւ սեփականաշնորհված ձեռնարկությունների փաստաթղթե-

ՄՇԱԿՈՒՅՑ

Շրիմապատկերով: Չիու եքս-տերիերի հեղինակն է այն տարիներին երեսնամյա Անասնա-բուժական և անասնաբուժական ինստիտուտի ձիաբուժության ամբիոնի վարիչ Ալիկյանը: Մարտի եւ խաղող տեսարանները քանդակել է Գեորգ Թեատրոսյանը: Հուշարձանի կերտման աշխատանքներին իր աջակցությունն է ցուցաբերել այդ ժամանակ քաղաքի գլխավոր նկարիչ Մարատ Նուրիջանյանը:

Պղնձածուխլ գանգի հեղինակն է հայ լավագույն դրվագող Բենիկ Պետրոսյանը: Այս գործը կարծես խորհրդանշում է Ջանգեզուր (գանգն է գուր) անվան հետ կապված լեգենդը:

Այդ տարիներին ճարտարապետական մի շարք փոքր գործեր՝ իրենց ձևով եւ խորհրդով համահունչ, լրացրին որոշ շինություններ. «Սիրո մեղեդի» գործը՝ Ռոմանոս Սելիքյան փողոցում, երաժշտական ուսումնարանի մոտակայքում (հեղինակ՝ Բաղդասար Սարգսյան) եւ «Ազգային պարոն» մշակույթի պալատի պատին (հեղինակ՝ Բենիկ Պետրոսյան):

«Սիրո մեղեդի» գործում հեղինակը փորձել է դնել հավերժական սիրո գաղափարը: Սրինգ նվագող պատանին ինքը՝ հեղինակն է, որ սեր է նվիրում հավերժականին:

«Ազգային պարոն» ներկայացված են ազգային գործիքներ, ազգային պար, եւ այդ ամենը՝ հավերժական կյանքի խորհրդանշել կենաց ծառի ներքո:

Կապանից Քաջարան տանող ճանապարհին՝ անառիկ մի ժայռի վրա, տեսնում ենք մեր անառաքաղաքացու, տաղանդավոր քանդակագործի՝ վաղամեռիկ Մարատ Նուրիջանյանի ձեռքի աշխատանքը՝ «Արջը»՝ բերանում բռնած մեր ընդերքի գանձերի բանալին:

...Բաղաբուրջի սարահարթը դարձավ վերջին հանգրվանն Արցախյան գոյամարտում զոհված քաջարի երիտասարդների: Այսօր այն դարձել է հուշահամալիր: Այնտեղ տեղադրվել է նաեւ Մեծ հայրենականում ընկած կապանցիների հիշատակը հավերժացնող հուշարձան: Այն բացված գիրք է, որի էջերը դիտողին պատմում են մինչ պատերազմը եղած ստեղծագործ կյանքը, պատերազմը եւ հաղթանակը: Իսկ այդ հաղթանակի հետեւում՝ ինքնագոհ, քաջարի 3050 զոհերն են: Բացված գրքի կողմերում կանգնեցված

են արդեն հասակն առած եւ երիտասարդ կանանց արձաններ, որոնք սգում են իրենց զոհված որդիներին, եղբայրներին, ամուսիններին: Արձանները խորհրդանշում են մեր հայրենիքի ճակատագրական անցյալը եւ հույսի ու հավատի գալիք Չայաստանը:

Հուշարձանի հեղինակն է Ռուբիկ Դանիելյանը, փորագրությունները կատարել է Վալերի Սիդակովը, քանդակագործն է Յուլյա Արմենյանը:

Կապանցիները չեն մոռացել նաեւ դարասկզբի անմեղ զոհերին: Եղեռնի 75-ամյակին հուշահամալիրում տեղադրվեց նաեւ նրանց հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթող:

Այս քանդակի նախագծի հեղինակն է ճարտարապետ Յուրա Գեորգյանը, կոթողի ստեղծման գեղարվեստական ձեւավորման գործում իրենց վաստակն ունեն քանդակագործներ Ստեփան Գեորգյանը, Գուրգեն Բալայանը, քարտաշ Բորիս Բաղդասարյանը:

Բաղաբուրջի սարահարթում գտնվող հուշահամալիրը կապանցիների համար դարձել է ուխտատեղի:

Ազգային շարժման, Չայաստանի պետականության վերականգնման տարիների ծնունդ են «Մտորում» (հեղինակ՝ Ստեփան Դավթյան, տեղադրված «Լեռնագործ» հյուրանոցի դիմաց), «Ազատություն» (հեղինակ՝ Գագիկ Ալեքսանյան, տեղադրված Մելիք-Ստեփանյան փողոցի կամաչ գոտում), «Արցախուհի» (հեղինակ՝ Բորիկ Մինասյան, քանդակագործ՝ Գուրգեն Բալայան, տեղադրված Արամ Մանուկյան եւ Չարենց փողոցների հատման տեղում), «Ցուլ» (հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան՝ «Ժառանգության» դիմաց) գործերը:

«Ազատություն» է «Մտորում» արձանները ներկայացնում են հայ կնոջ երկու տարբեր կերպարներ, երկուսն էլ գեղեցիկ՝ իրենց ձեւի մեջ: Առաջինին երկրի ցավը դարձրել է մտամուրթ, տխուր, մյուսին՝ պատրաստ պոռթկալու, պայքարելու:

«Արցախուհին», հավատալով ու սպասելով խաղաղությանը, գլխավերելուն բռնել է խաղաղության, հույսի, հավատի խորհրդանշող արվանձի՝ ամենամարտա թռչունը: Լեզենդն է պատմում. սատանան կարող է փոխանցել ցանկացած եակի՝ բացի աղավնուց:

2001թ. Մկրտիչ Մկրտչյանի նախաձեռնությամբ հանրահայտ «Կա-

րապետի գյուղ» անվանյալ վայրում տեղադրվեց Գարեգին Նժդեհի հուշարձանը (հեղինակ՝ Յուրա Գեորգյան, քանդակագործ՝ Գեորգ Գեորգյան): Արձանը Նժդեհի կիսանդրին է՝ շրջապատված արծիվներով՝ իր զինվորներով, ձեռքին սուր, գիրք եւ գրիչ, այս ատրիբուտները Նժդեհին ներկայացնում են որպես ռազմիկի, մտավորականի ու հասարակական գործչի:

2007թ. սեպտեմբերին Կապանի Արամ Մանուկյան փողոցում գտնվող երկու փոքրիկ հրապարակներում տեղադրվեցին 1980-ին մուկոկյան օլիմպիադայում 3-րդ մրցանակային տեղ գրաված, ԽՍՀՄ-ում 14 ամգամ հաղթող ճանաչված, եվրոպայի առաջնությունների կրկնակի չեմպիոն Դավիթ Համբարձումյանի եւ քառադեմ «ժառանգություն» արձանները:

«ժառանգություն» քանդակում համատեղված են քաղաքական գործչի՝ Արամ Մանուկյանի, Ամենայն հայոց կաթողիկոս(1629-1632թթ.) Մովսես Խոտանանցու եւ լեռնագործի ու նրա ընտանիքի կերպարները:

Արձանախմբի հեղինակն է ՀՀ ժողովրդական նկարիչ, ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից գեղարվեստի միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, քանդակագործ Լեւոն Թոթոնյանը:

Մերոնդներին մեր պատմությունը ժառանգություն ենք թողնում նաեւ հուշարձաններով: Ո՞ւմ արձանը կցանկանա տեսնել կապանցին իր քաղաքում:

Կապանի թագավորությունը Արեւելյան Չայաստանի տարածքում վերջին պետական միավորներից էր, Կապանը թագավորանիստ քաղաք էր, հետեւաբար արժեր ունենալ Սյունիքի թագավորների արձանները:

Երկու կլիներ Կապանի կենտրոնում տեսնել նաեւ Ամբատ Մելիք-Ստեփանյանի արձանը, որը կհավերժացնի պետական-քաղաքական գործչի, լեռնագործի, ազգային-ազատագրական շարժման ղեկավարի, մտավորականի, վերջապես, կապանյան մելիքական տոհմի շառավիղի հիշատակը:

Կարծում ենք՝ Կապանի պատմական անցյալն առավել իմաստավորված եւ ամբողջական կլինի, եթե իրականացվեն այդ ցանկությունները:



Կապանի մշակութային դիմագիծը



ՍՈՒՍԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Կապանի քաղաքապետարանի մշակույթի եւ սպորտի բաժնի պետ

Կապանը մշակութային հարուստ ավանդույթներ ունի: Սակայն վերջին տարիների մեր ընթացքը նույնպես կրեց ժամանակի վայրկյանների կնիքը, ունեցանք կորուստներ, հեռացողներ: Այն, ինչ պահպանվել է, եւ ինչի վրա հիմա փորձում ենք կառուցել մեր ներկան, մեզ հավատ է ներշնչում:

Կապանի մշակութային դիմագիծն ամբողջացնում են նրա երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցները, Մշակույթի կենտրոնը եւ գրադարանը, Արվեստի պետական թուղթը եւ Ա.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնը, ժամանակակից արվեստի եւ երկրագիտական թանգարանները, Շ.Սուվիսյանի «Փռաքի սրահը», Ռ.Կամոյանի գեղարվեստի եւ Վ.Մանուկյանի երգի ստուդիաները...

Կապանի թվարկածս կառույցներից գալստ քաղաքի դիմագիծը պայմանավորված է այն անհատներով, որոնք Աստծո կողմից իրենց շառյուղներ տրված Հնորիով արվեստի նվիրյալներ են՝ գրողներ, նկարիչներ, քանդակագործներ, երաժիշտներ, դերասաններ, պարուսույցներ...

Տարբեր է նրանցից յուրաքանչյուրի ներդրումը, սակայն յուրաքանչյուրը յուրովի է հարստացրել եւ շարունակում է հարստացնել մեր մշակույթի գանձարանը: Առանձին-առանձին նրանք ձեւավորել են մեր մշակութային դաշտը, ձեւ ու բովանդակություն հաղորդել նրան:

Վերջին տարիներին առավել կարեւոր մշակութային իրադարձությունների շարքում պիտի դասել ազգային, եկեղեցական տոների վերածնունդը Կապանում՝ Տիառն ընդ առաջ, Սուրբ գատիկ, հաղորդի օրհնության, Թարգմանչաց տոն եւ այլն: Հիշարժան են բազմաթիվ այլ միջոցառումներ եւս՝ Արվեստի թուղթի կողմից իրականացրած դասական երաժշտության բազմաթիվ համերգները Կապանում, մարզի տարածքում եւ մայրաքաղաքում, «Մենք ենք» մեր մարզերը» համայնքային թատրոնների 1-ին փառատոնը, թատերական փառատոնին Կապանի թատրոնի դերասանների մասնակցությունը, Կապանի դպրոցականների արվեստի փառատոնը, արվեստի եւ գեղարվեստի դպրոցների երեխաների աշխատանքները ցուցահանդեսները եւ նրանց մասնակցությունը Հնդկաստանում, Չինաստանում, Լեհաստանում կազմակերպված միջազգային ցուցահանդեսներին, Ռ. Կամոյանի անհատական եւ նրա ստուդիայի սաների ցուցահանդեսները, Վ.Խաչատրյանի, Բ.Սիմոնյանի, Հ.Լյույանի, Լ.Սիմոնյանի, Ստ.Դավթյանի, Բ.Կոստանյանի, Արմեն Ավետիսի,

րի ճակատագիրն անորոշ է, մանավանդ երբ արտերկրում բնակվողները մասնաճյուղից փաստաթուղթ են պահանջում, իրենք մեծ դժվարությունների առջև են կանգնում: Ի դեպ, այս արխիվի ծառայությունից տարեկան օգտվում է ինձ-վեց ուսումնասիրող:

Կապանի երկրագիտական թանգարանն ունի 14 հազար ցուցանմուշ, դրանք ներկայացնում են քարեդարյան մեծ ժամանակները, առանձնապես հարուստ է հնագիտական բաժինը, հատկապես բրոնզեդարյան շրջանը: Տնօրեն Գրիշա Սմբատյանի վկայությամբ ժամանակին ոլորտի պատասխանատուներն առավել շատ զբաղվել են պղնձեղեն, ամաններ, կուլաներ, ինքնառններ միջնադար, քան կապանցիների մասին արժանահավատ տեղեկություններ ժողովելով, Կապանի պատմությունն իմաստավորելով: Երկրաբանական փաստաթղթերն արհամարհված են եղել: Շատ աղքատիկ է Դավիթ Բեկի պատմության շրջանը: Եթե թանգարանն ունենար միջոցներ, հնարավորություն կունենար հարստացնել ֆոնդերը, բայց իրողությունն այսօր այն է, որ մշակութային այս օջախն իր նախկին տեղից (Շահունյան փողո-

ցի թիվ 22 շենքի առաջին հարկ) տեղափոխվել է Կապանի թիվ 3 մանկապարտեզի կիսալանույց, կիսավեր շենքում եւ ոչ մի հնարավորություն չունի ցուցադրություն կազմակերպելու: Մինչդեռ թանգարանում պարբերաբար կազմակերպվել են թեմատիկ ցուցահանդեսներ: 2004-ին կազմակերպված ցուցադրանքը ներկայացնում էր Կապանի շրջանից բռնադատված մարդկանց ճակատագրերը, 2005-ին կազմակերպված ցուցահանդեսի թեմատիկան ավելի բազմազան էր եւ ընդգրկում էր վաղնջական ժամանակներից մինչեւ մեր օրերը: Դրանից զատ թանգարանի աշխատակիցները գիտական, հավաքչական աշխատանքներ են կատարում:

Վերջերս երկրային կյանքին հրաժեշտ տված Շմավոն Մովսիսյանի հիմնադրած Կապանի պատմության թանգարանն արտացոլում է քաղաքի մոտ երկու հարյուրամյակի պատմությունը: Մշակութային այս օջախում ցուցադրված են յոթ հազարից ավելի լուսանկար, չորս տասնյակից ավելի լուսանկարչական ալբոմ, երեք հազարից ավելի լուսանկարչական սլայդ, մոտ հազարի հասնող տեսաֆիլմ, հարյուրից ավելի վավերագրական ֆիլմ,

իսկ լուսանկարչական նեգատիվները դժվար է հաշվել: Մարտական փառքի սրահում ազգային-ազատագրական գարթոնքի եւ մերօրյա ազատամարտի մասնակիցների անձնական կյանքին ու մարտական ուղուն նվիրված իրեր են, լուսանկարներ եւ փաստաթղթեր, ցուցադրված են Արցախյան գոյամարտի ռազմական գործողությունների ժամանակ օգտագործված զինամթերք՝ սովորական փամփուռային մինչեւ զենիթային հրանոթ եւ «Գրադ» կայանք, ավելի քան 30 տեսաֆիլմ պատմում է մերօրյա պատերազմի մասին: Այցելուին առատ նյութ է տալիս «Չանգեզուրի լեռնահանքային արդյունաբերություն» բաժինը, որտեղ փաստաթղթերից ու լուսանկարներից զատ, ցուցադրված են տարբեր հանքատեսակներ: Համեմատաբար վերջերս է ստեղծվել «Ռուս-հայկական բարեկամություն» սրահը: Թանգարանի ցուցանմուշները, փաստաթղթերն ու թեմատիկ վահանակները հարուստ նյութ կարող են հանդիսանալ հայոց նորագույն (եւ ոչ միայն) պատմությունն ուսումնասիրողների համար:

ՎԱՐՄԱ ՕՐԲԵԼՅԱՆ



ՄԱՐԶԱԿԱՆ

Ավանդույթներ, որ շարունակվում են

Մարզաշխարհում Կապանը նախնադաս ճանաչում ունի խաղային մարզաձևերից՝ մասնավորապես ֆուտբոլից, ծանրակշիռ են նաև կապանցի աթլետների հաջողությունները: Կապանի ֆուտբոլային թիմը հանրապետության ֆուտբոլի առաջնությանը մասնակցում է ահա հինգ տասնամյակ, ուղիղ 50 տարի առաջ՝ 1958-ին, իր դրերը բացեց Լավանի մարզադաշտը: Առաջին նշանակալի հաջողությունը 1963-ին էր, երբ «Լեռնագործը» նվաճեց ֆուտբոլի հանրապետության գավաթը: Այդ նվաճումը հնարավորություն ընձեռեց թիմին հաջորդ տարում հանդես գալու ֆուտբոլի ԽՍՀՄ առաջնության Բ խմբում: Ճիշտ է, հաջորդ ակնառու հաջողությունն ունեցավ: Թիմը միայն 1989-ին դարձավ հանրապետության չեմպիոն: Ի դեպ, 1991-ին ես մեր թիմը հանրապետությունում առաջինն էր, ասել է թե՛ նորանկախ Հայաստանի անդրանիկ չեմպիոնը դարձավ:

Մի նկատառում եւս. «Լեռնագործը» ֆուտբոլային կադրերի պատրաստման դարբնոց էր դարձել. բարձրակարգ ֆուտբոլիստներ էր նախապատրաստում հանրապետության գլխավոր թիմին՝ Երեւանի «Արարատին» (դարպասապահ՝ Նորայր Դեմիրճյան, պաշտպան՝ Ռուդիկ Ավանեսով, կիսապաշտպաններ՝ Արկադի Անդրեասյան, Գրիգորյան Զանազանյան): Իսկ տեղացի ֆուտբոլասերն իրավամբ հպարտանում է Գրիգոր Համբարձումյանով, ում հայկական ֆուտբոլի կեցնդ են անվանում: Նա հայ ֆուտբոլիստներից առաջինն էր, որ իրավունք ստացավ կրելու ԽՍՀՄ հավաքականի մարզաշապիկը, նույնիսկ հրավեր ստացավ մասնակցելու 1962թ. Չիլիում անցկացվելիք առաջնությանը, բայց ֆուտբոլային չինովնիկների անդրկուլիսյան խաղերի արդյունքում չմեկնեց Չիլի: 1963-ին Գ.Համբարձումյանը թողեց ակտիվ ֆուտբոլը, վերադարձավ հայրենի քաղաք, հանդես եկավ «Լեռնագործում» որպես խաղացող-մարզիչ, ապա՝ մարզիչ: Այսօր էլ իր մասնագիտական խորհուրդներով օգտակար է լինում գործող ֆուտբոլիստներին:

Հայ-արբերջանական հակամարտության օրերին, բնականաբար, եւ դրանից հետո ֆուտբոլային կյանքը խամրեց Կապանում, բայց ահա երրորդ տարին է, ինչ Կապանի «Գանձասարը» (գլխավոր մարզիչ՝ հանրապետության վաստակավոր մարզիչ Սամվել Պետրոսյան) հանդես է գալիս հանրապետության ֆուտբոլի առաջնության բարձրագույն խմբում: Ընթացիկ մրցաշարում հաջող է հանդես գալիս եւ հավակնում մրցանակային տեղի: Բացի «Գանձասարից» հանրապետության ֆուտբոլի առաջնության երկրորդ խմբում հանդես է գալիս «Գանձասար-2»-ը (մարզիչ՝ Ավետիք Սարգսյան): 1992 թվականին ծնված պատանիների թիմը (մարզիչ՝ Արմեն Ղազարյան) հանդես է գալիս իր հասակակիցների մրցաշարում:

Կապանյան աթլետիկայի արմատները տանում են 50-ականների վերջը, ավելի ստույգ՝ 1959 թվականը, երբ Լավանում իր մարզական եւ մանկավարժական գործունեությունը սկսեց Արկադի Ղազարյանը, ով նվիրվեց շնորհալի աթլետներ հայտնաբերելու, նրանց մարզական ծիրքը զարգացնելու գործին: Այսօր նրա սաներն արդեն մասնակցել են աշխարհի եւ եվրոպայի երիտասարդական եւ պատանեկան առաջ-



1989-ին հանրապետության չեմպիոն դարձած Լավանի «Կապան» թիմի տղես Գրիգոր Համբարձումյանը, գլխավոր մարզիչ Վաղինիկ Պետրոսյանը, մարզիչ Միշա Սանուշարյանը՝ հարցազրույցի ժամանակ



Հանրապետության վաստակավոր մարզիչ Արա Սարգսյանը մրցանակակիր սաների հետ

նություններին, Համաշխարհային պատանեկան եւ ուսանողական խաղերին, միջազգային բազմաբնույթ մարզական մրցումներին: Ցայսօր մարզադպրոցի սաների, մասնավորապես, բարձրագատկորդ Էդուարդ Մետրոսյանի ռեկորդը (2մ 16սմ) եւ հանրապետության որոշ ռեկորդներ չեն գերազանցվել: Վաչե Մովսիսյանը, Ռուդիկ Սաթեսոյանը, Գագիկ Հարությունյանը, Ռաֆիկ Աբրահամյանն ընդգրկվել են ԽՍՀՄ տասը լավագույն աթլետների շարքում, իսկ ԽՍՀՄ պատանիների չեմպիոն, արգելավազորդ Ռուդիկ Սաթեսոյանը 11 անգամ նվաճել է Մոսկվա քաղաքի չեմպիոնի կոչումը:

Փորձառու մասնագետի հետ մարզիչներ Վաչե Մովսիսյանը, Արսեն Պետրոսյանը մարզադպրոցի տնօրեն Սուրեն Ղազարյանի գլխավորությամբ ոչ միայն պահպանեցին լավագույն ավանդույթները, այլև հասան նոր հաջողություններ: 1991թ. Մարատ Սարգսյանը (մարզիչ՝ Հեսուր վաստակավոր մարզիչ Արսեն Պետրոսյան) նվաճել է ԽՍՀՄ պատանիների չեմպիոնի կոչումը (հեռացատկ), 1995թ. Մերուժան Սարգսյանը (մարզիչ՝ Արսեն Պետրոսյան) Սանկտ Պետերբուրգում նվաճել է ԱՊՀ երկրների սպորտափառայի չեմպիոնի կոչումը: 2000-ին Էրիկ Նուրիջանյանը, իսկ 2002-ին

Աշոտ Պետրոսյանը Ստամբուլում կայացած միջազգային պատանեկան մրցումներում համապատասխանաբար գրավել են 3-րդ եւ 2-րդ մրցանակային տեղերը: 2000-ին հեռացատկորդուհի Մարինե Հարությունյանը ճանաչվել է Հայաստանի աթլետիկայի լավագույն մարզուհի: 2004-ի ամռանը Հայկանուշ Բեկևոյանը (մարզիչ՝ Արսեն Պետրոսյան) ԱՄՆ Օհայո նահանգի Քլիվլենդ քաղաքում անցկացված միջազգային պատանեկան խաղերում հեռացատկի հատվածում ցույց է տվել 5մ 52սմ արդյունք, ինչը նրան ապահովեց ոսկե մեդալ: Վերջին մի քանի տարում Հայկանուշն աչքի է ընկնում բարձր եւ կայուն արդյունքներով հանրապետական եւ միջազգային մրցումներում, 2005-ին եվրոպական առաջնության խաղերում գրավել է առաջին տեղը, Մարոկկոյում կայացած աշխարհի առաջնությունում եւ այս տարի Արկադիայում կայացած եվրոպայի գավաթի խաղարկությունում՝ չորրորդ տեղը: Հայկանուշին է պատկանում հեռացատկի հանրապետության ռեկորդը՝ 13,06մ: Նշված մարզիկներից շատերը լավագույն են հանդես եկել Համաշխարհային խաղերում:

Առանց մանկապատանեկան սպորտն ամուր հիմքերի վրա դնելու, այն ըստ ամենայնի գաղափարները

մարզական արեւմաներում դժվար է լուրջ հաջողություններ ակնկալել: Այդ գործին են լծվել Կապանի քաղաքապետարանի ենթակայության երեք մարզօջախները՝ մանկապատանեկան, աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան եւ մարմնամարզության մարզադպրոցները: Կապանի քաղաքապետարանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցը (2004-ից տնօրենը հանրապետության վաստակավոր մարզիչ Արսեն Պետրոսյանն է) հիմնադրվել է 1989-ին, եւ այդ տարվանից սկսած ցայսօր նրա սաները հողագործի 132 քաղաքներում մասնակցել են միջազգային մրցումների: Այժմ մարզադպրոցի 12 սան հանրապետության աթլետիկայի տարբեր հավաքականների թեկնածուներ են: Եթե տասը տարի առաջ նրանք հիմնականում աչքի էին ընկնում հեռացատկի եւ հեռացատկի հատվածներում, ապա այսօր մարզիչներ Քրիստափոր Գաբրիելյանի եւ Արմեն Բաղդասարյանի ջանքերի շնորհիվ կապանցի աթլետները լուրջ հաջողություններ են գրանցում միջին եւ երկար վազքատարածություններում: Այժմ մարզադպրոցի 11 խմբերում մարզվում է 100-ից ավելի պատանի աթլետ:

Կապանի քաղաքապետարանի մանկապատանեկան մարզադպրոցում (տնօրեն՝ Լյուդվիգ Ավագյան) գործում են ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, սեղանի թենիսի, ծյուրոյի եւ ծանրամարտի խմբակներ, որտեղ հաճախում են այդ մարզաձևերում հմտացող 100-ից ավելի դպրոցական: Մարզադպրոցի սան, ծանրամարտիկ Ռոման Հարությունյանը 62կգ քաշային կարգում 2007-ին նվաճել է պատանիների հանրապետության չեմպիոնի կոչումը՝ բարձրացնելով 225կգ եւ լրացնելով սպորտի վարպետության թեկնածուի նորմը, իսկ այս տարի կրկնեց նվաճումը՝ այս անգամ բարձրացնելով 240կգ եւ լրացնելով սպորտի վարպետի նորմը: Նախորդ տարում մարզադպրոցի պատանի ֆուտբոլիստները «Հուստ գավաթ» հանրապետական մրցումներում գրավել են երրորդ մրցանակային տեղը:

Կապանի քաղաքապետարանի մարմնամարզության մարզադպրոցը (տնօրեն՝ Արթուր Բաղդասարյան), որը գործում է 1977 թվականից, ունի երկու խումբ՝ գեղարվեստական մարմնամարզության եւ սպորտային ակրոբատիկայի: Մարզադպրոցի սաները պարբերաբար մրցանակներով են վերադառնում հանրապետության առաջնություններից: 2007-ի մայիսին մարզադպրոցի սպորտային ակրոբատիկայի հավաքականը Գյումրիում մասնակցել է մարզաձևի 33 պատանիների առաջնությանը՝ գրավելով չորս մրցանակային տեղեր (մարզիչներ՝ Նորայր Սահակյան, Դավիթ Դահիբյան, Ռուդոլֆ Սարգսյան): Իսկ գեղարվեստական մարմնամարզության թիմը (գլխավոր մարզիչ՝ Օլյա Դուսեյնսկայա, մարզիչներ՝ Նարինե Ղոնյան, Լուսինե Առուստամյան), մասնակցելով հանրապետության խմբակային վարժությունների եւ առանձին գործիքների առաջնության մրցումներին, տուն է վերադարձել երկրորդ մրցանակով, սպորտի վարպետ Նարե Առաքելյանը եւս գրավել է երկրորդ տեղը: Այս տարվա մայիսի 24-ից 26-ը մարզադպրոցի սպորտային ակրոբատիկայի հավաքականը Գյումրիում մասնակցել է մարզաձևի պատանիների հանրապետության առաջնության մրցումներին եւ ամենասն չի մնացել պարզեներից: Գանձիկ Առաքելյանը գրավել է երկրորդ, իսկ Նարե Խաչատրյանը եւ Գեորգ Բաղդասարյանը՝ երրորդ մրցանակային տեղերը:

Մարզական ավանդույթներ ունեցող Կապանը չի կարող չունենալ մարզական գերդաստաններ: Հանրապետությունում ճանաչված ֆուտբոլիստ Գրիգոր Համբարձումյանի որդին նույնքան ճանաչված է մարզական աշխարհում. անվանի ջրացատկորդ Դավիթ Համբարձումյանը երեք անգամ մասնակցել է օլիմպիական խաղերի, ընդ որում մոսկովյան օլիմպիադայում (1980թ.) արժանացել է բրոնզե մեդալի, բացի այդ երկու անգամ հռչակվել է Եվրոպայի չեմպիոն: 1993-ից ջրացատկի օլիմպիական հերթափոխի հանրապետական միակ մարզադպրոցը կրում է նրա անունը: Եթե սրան հավելենք, որ Դավիթ եղբայրը՝ Ալբերտը, Հայաստանի ջրացատկի չեմպիոն է եղել, ապա, կարծում ենք, որ մարզական ընտանիքի պատկերը փոքրիշատե ամբողջական կլինի:

Կապանցի թեթևատետների նվաճումները մեծապես կապված են Արկադի եւ Սուրեն Ղազարյանների հետ: Բավական է նշել, որ Արկադի Ղազարյանի սաները 1962 թվականից անընդմեջ ընդգրկվել են Հայաստանի հավաքական թիմերում: Ա.Ղազարյանի ջանքերի շնորհիվ Լավանում ստեղծվեցին աթլետիկայի զարգացման ժամանակակից պայմաններ, ինչը հաշվի առնելով՝ Հայաստանումիտեի կղզեգիայի որոշմամբ Լավանում 1989-ին բացվեց աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց, որի տնօրենը մինչեւ 2004 թվականը Սուրեն Ղազարյանն էր: Վերջինիս որդիները եւս զբաղվում են աթլետիկայով, Դավիթը եւ Վանը ուսանում են Երեւանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտում:

Առանց վերապահության մարզական կարելի է համարել Վաղինիկ Պետրոսյանի ընտանիքը, ակտիվ ֆուտբոլը թողնելուց հետո անցել է մարզական աշխատանքի (ղեկավարում է «Գանձասար» ֆուտբոլային ակումբի մանկապատանեկան բաժինը): Դուստրը՝ Դիանա Պետրոսյանը համաժողովրդական մրցումներում 110մ արգելավազքում գրավել է երրորդ մրցանակային տեղը եւ սահմանել հանրապետության պատանեկան նոր ռեկորդ (մարզիչներ՝ Արկադի եւ Սուրեն Ղազարյաններ), որդին՝ Մանուկ Պետրոսյանը գնացել է հոր հետերը, խաղալու շիկները մեխիկ կախելուց հետո նա դարձյալ «Գանձասարում» է...

Վերջին յոթ-ութ տարում մարզական հաջողություններով աչքի են ընկնում Կապանի քիչ-քոքսիզգի «Գարեգին Նժդեհ» ակումբի սաները: Միջազգային կարգի սպորտի վարպետ, հանրապետության վաստակավոր մարզիչ Արա Սարգսյանի սաները տարբեր փայլի մեդալներով են վերադառնում աշխարհի, Եվրոպայի առաջնություններից, տարբեր միջազգային մրցումներից: Կարելի է վստահորեն արձանագրել, որ մարզչի ջանքերով է ստեղծվել մարզաձևի կապանյան դպրոցը:

Կապանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնին կից գործում է կարստեի խմբակը (մարզիչ՝ Շահեն Բաբայան), որի սաները հանրապետության մրցումներից պարբերաբար վերադառնում են մրցանակներով:

Վերջին տարիներին Կապանի մարզօջախների թիվն ավելացել է մեկով: Կապանի մշակույթի կենտրոնում գործում է շախմատի դպրոցը: Իմաստուն խաղի կապանցի ներկայացուցիչները պարբերաբար հանդես են գալիս հանրապետական եւ մարզային առաջնություններում:

ՎԱՐՍԱ ՕՐԲԵՆՅԱՆ

Վ.Գ. Օգտվելով առիթից՝ խմբագրությունը շնորհավորում է Գրիգոր Համբարձումյանի 75 եւ Նրա սան Վաղինիկ (Իլյա) Պետրոսյանի 60-ամյակը, նրանց մաղթում քաջառողջություն եւ հաջողություններ՝ ի փառս կապանյան ֆուտբոլի:

ԿԱՊԱՆՅԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՅՆԵՐ

Տպագիր լրատվամիջոցների յոթ տասնամյակը

Ղափանի շրջանային թերթը, որպես հանրապետությունում առաջին բանավորական շրջանային թերթ, լույս տեսավ 1930թ. նոյեմբերի 7-ին (օրը, իհարկե, պատահական չէր ընտրված) «Պայքար պղնձի համար» անունով: 30-ականների սկզբին իրականացվում էր Ղափանի պղնձահանքերի վերականգնումը, կառուցվում էր հարստացուցիչ նոր ֆաբրիկան, զգվում էին Միջերկրածովյան ծառայողական-Ղափան երկաթուղու ռելսերը: Յուրաքանչյուր ժամանակ իր պահանջներն է առաջադրում, յուրաքանչյուր սերունդ ունի իր առաքելությունը: Թերթի առաջին տարիների համարներում շրջանի կյանքում տեղի ունեցող մեծ ու փոքր իրադարձությունների տարեգրությունն էր (30-ականների սոցիալիստական մրցությունը, կուլեկտիվացումը): 1937-ին թերթի էջերում պակաս չէր զգացվում «ժողովրդի թշնամիների» հայտնաբերման մասին նյութերի: Նույնիսկ պատերազմի դժվարին

տարիներին, երբ շատ թերթեր փակվել էին, «Պղնձի համարը» կանոնավոր լույս է տեսել: Մեծ հայրենականի տարիներին թերթի էջերից չէին իջնում «Ամեն ինչ ռազմաճակատի համար», «Ամեն ինչ հաղթանակի համար», «Մեկ կիլոգրամ պղինձը մի հարված է թշնամուն» եւ այլ խորագրեր: Մեծ հայրենականի ավարտից հետո երկիրը ձեռնամուխ եղավ պատերազմի վերջերի բուժմանը: Թերթը դարձյալ առաջ էր քաշում պրոլետարիանի հարցեր, իսկ ընդհանրապես ժամանակի գաղափարախոսությունը տպագրվող նյութերում միշտ առկա է եղել:

Շրջանային թերթն իր գոյության ընթացքում մի քանի անգամ անվանափոխվել է՝ «Պայքար պղնձի համար» (1930-1935), «Պղնձի համար» (1935-1979), «Ղափան» (1979-1990) եւ այնուհետեւ՝ «Կապան»: Տարբեր տարիների (ըստ ժամանակագրության) թերթը խմբագրել են Գրայ

Յարգայանը, Ռուբեն Պողոսյանը, Սողոմոն Օրբելյանը, Շավարշ Ավետիսյանը, Գրիշա Գրիգորյանը, Գաբրիել Արեւյանը, կրկին Գրիշա Գեղորգյանը, Էդուարդ Սարգսյանը, Նորիկ Գրիգորյանը, Վաչե Եփրեմյանը:

«Պղնձի համարը» 1967 թվականից լույս է տեսել նաեւ ադրբեջաներեն կրկնօրինակով, առանձին հոբելյանական հոդվածներ լույս են տեսել նաեւ ռուսերեն: Մեկ մամուլ ծավալով շրջանային լրագիրը տպագրվում էր լինոտիպային շարվածով, Կապանի տպարանում: Թերթի տպաքանակն առանձին տարիների հասնում էր յոթ-ութ հազարի, ասել է թե՛ Ղափանում յուրաքանչյուր ընտանիք ստանում էր շրջանային թերթը:

Եկավ 1988 թվականը. արցախյան շարժում, հայ պետականության ստեղծում, հայ-ադրբեջանական հակամարտություն, որ

ծավալվելով վերածվեց չհայտարարված պատերազմի: Դրան գունարվեց էներգետիկ ճգնաժամը, թրթի եւ տպագրական նյութերի օրավոր աճող թանկացումը, ինչը երբեմն անհնարին էր դարձնում տպագիր լրատվամիջոցի հրատարակությունը: Ծանր ժամանակներ էին, բայց թերթը շարունակում էր լույս տեսնել նույնիսկ այն ժամանակ, երբ Կապանի վրա արկեր էին պայթում, թեեւ խորհրդային տարիների համեմատ ցավալիորեն ցածր տպաքանակով՝ 300:

Հանրապետության վարչատարածքային բաժանումից հետո (1996 թվական) «Կապանը»՝ որպես համայնքային թերթ, շարունակել է հրատարակվել մինչեւ 2000 թվականը:

Այուրեքի մարզը ստեղծվելուց հետո Կապանի լրատվական դաշտը նոր տեսք ստացավ: 1996-ի մայիսի 4-ին լույս տեսավ Այուրեքի մարզպետարանի «Այուրեք» պաշտոնաթերթը (խմբագիր՝ Գագիկ Դավթյան), որը գոյություն ունեցավ մինչեւ 1999-ի վերջը: 2000-ի սեպտեմբերի 12-ին Այուրեքի մարզի հասարակական-քաղաքական վերաբացված լրագիրը «Այուրեք աշխարհ» էր կոչվում, որը լույս էր տեսնում տաս-

նօրյա պարբերականությամբ (թերթի հիմնադիրը Կապանի մեքենաչինական գործարանն էր): «Այուրեք աշխարհը» խմբագրել են Սամվել Ալեքսանյանը (երկու անգամ ընդմիջումներով), Նարա Գրիգորյանը, Արմեն Հակոբյանը, որ 2002-ի փետրվարին ավտովթարի զոհ դարձավ:

2003-ի սեպտեմբերին լուծարված «Այուրեք աշխարհի» փոխարեն՝ 2003-ի հոկտեմբերի 1-ից լույս է տեսնում «Այուրեք երկիր» թերթը (զլխավոր խմբագիր՝ Սամվել Ալեքսանյան), որի հիմնադիրը եւ հրատարակիչը «Այուրեք աշխարհ» ՄԴ ընկերությունն է: Այուրեքի մարզի սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքը լուսաբանող թերթն ունի էլեկտրոնային տարբերակ:

Այդ ընթացքում, ավելի ստույգ՝ 2005-ի հունվարին հիմնադրվեց եւ հրատարակվեց Այուրեքի մարզի հասարակական-քաղաքական «Հզոր Այուրեք» լրագիրը (խմբագիր՝ Ժորա Գրիգորյան), որը դարձրեց լույս տեսնել 2007-ի սկզբին: 2002-2007թթ. լույս է տեսել «Կապանցիներ» լրագիրը (խմբագիր՝ Վաչե Եփրեմյան):

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Կապանի հեռուստատեսության նախերգանքը

ՍԱՍՈՒՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
«Խուստուփ» հեռուստաընկերության զլխավոր խմբագիր եւ գործադիր տնօրեն



1992 թվականի ապրիլի 8-ից Կապանում սկսեց գործել տեղական հեռուստատեսություն: Գործը նախաձեռնել էին կապանցիներ Ռոբերտ Առուշայանը, Աշոտ Բարսեղյանը, Արմենակ Դավթյանը, Շմավոն Մովսիսյանը եւ տողերիս հեղինակը: «Եթեր» անունով հեռուստաընկերությունը կարծ պատմություն ունեցավ, բայց դա եղավ այն հիմքը, որի վրա հետագայում ձեւավորվեց կապանյան հեռուստաշխարհը: Զարմանալիորեն այն ժամանակ այնքան էլ մեծ դժվարություններ չեղան եթերում հայտնվելու համար: Առավել դժվար էր եթերում մնալը: Տարիների հեռվից պետք է խոստովանեն, որ պետական համակարգը հեռուստատեսությանը զբաղվում էր այն ժամանակ, երբ իրեն պետք էր: Ավելի ճիշտ, այն խառնակ ու ծանր տարիներին դա եւս միջոց էր, որով հնարավոր էր հրապարակել քաղաքաշտպանության շտաբի հայտարարությունները: Հենց այդքանով էլ սկսվում է վերջանում էր պետության առնչությունը հեռուստատեսության աշխատանքին: Հիմա էլ զարմանում են, որ կապանցիները կամավոր վճարում են ըստ եւրոյան, հանդիսանում

էին հեռուստաօրագրի հիմնական պատվիրատուն: Հենց դա էր պատճառը, որ կարճ ժամանակամիջոցում ընկերությունը որդեգրեց տեղական իշխանություններին ընդդիմադիր կեցվածք: Սակայն միջոցների պակասը հեռուստատեսությանը ստիպեց 1993թ. դադարեցնել աշխատանքը: Այդ ընթացքում փոխվել էին թե՛ ընկերության սեփականատերերը, թե՛ աշխատակազմը: 1994թ., որպես Կապանի քաղաքապետի պատգամավոր՝ դիմեցի քաղաքապետի այն ժամանակվա նախագահ Ռադիկ Սարուխանյանին՝ առաջարկելով ստեղծել տեղական պետական հեռուստատեսություն: Առաջարկն ընդունվեց: Ավելին, հենց Ռադիկ Սարուխանյանի նախաձեռնությամբ հեռուստաընկերությունն ունեցավ երկու հիմնադիր՝ Կապանի շրջանային եւ քաղաքային խորհուրդները: Մի խոսքով, 1994թ. դեկտեմբերի 27-ին Կապանի պետական հեռուստատեսությունը սկսեց գործել: Հեռուստադիտողների առջեղը «Եթերում Կապանի պետական հեռուստատեսությունն է» նախադասությամբ ողջունեց Լուսյա Խաչատրյանը: 1996թ. հեռուստատեսությունը վերակազմավորվեց եւ դարձավ մարզային՝ «Ձագեծոր» անունով: Հանուն արդարության մշտն, որ նորաստեղծ հեռուստատեսության կայացման գործում լուրջ դերակատարում ունեցավ Այուրեքի մարզպետարանի այն ժամանակվա լրատվության եւ հանրության հետ կապերի բաժնի պետ Սամվել Ալեքսանյանը, որը նախաձեռնողորեն արեց ամեն ինչ հեռարձակման տիրույթում Գորիսը եւ Սիսիան ընդգրկելու եւ նոր աշխատակազմ ձեւավորելու համար: Մարզային հեռուստատեսության առաջին տնօրեն նշանակվեց Ավագ Եփրեմյանը, որն իր ներկայությունը կապանցիներին դարձրեց մտավորականների

հավաքատեղի: Ու ինչպես ինքն է նկատում, այդպես էլ չհասկացան իրեն, եւ շուրջ վեց ամիս հետո նրան փոխարինեց Արթուր Իսրայելյանը, որին կարճ ժամանակով հաջորդեց Լուսյա Խաչատրյանը: 2000թ. ես կրկին նշանակվեցի հեռուստատեսության տնօրեն: Պետք է նշեմ, որ այդ ժամանակ հեռուստատեսությունը գործում էր շաբաթական մեկ օր՝ ուրբաթ՝ 30 րոպե տևողությամբ՝ գիշերվա 12-ից հետո: Նորանշանակ մարզպետ Էդիկ Բարսեղյանի աջակցությամբ մեզ հաջողվեց եթեր դուրս գալ շաբաթական երեք անգամ՝ երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ՝ ժամը 20.30-ից մինչեւ 22.00-ը: Մարզային հեռուստատեսությունը լուծարվեց 2001 թվականին: Նրան փոխարինեց «Ձագեծոր» ՄԴԸ-ն, որի հիմնադիրն աշխատակազմի կողմից էր: Այն այսօր գործում է «Սոսի» անվամբ: Ի դեպ, ուզում եմ նշել, որ «Սոսի» 2003թ. կատարեց ամենալուրջ քայլը՝ ձեռք բերեց առանձին եթերային տիրույթ՝ 30 դեցիմետրայինը, եւ նախկինի պես չի օգտագործում մայրաքաղաքային հեռուստաընկերություններից մեկի հաճախականությունը սեփական հաղորդումները հեռարձակելու համար: 2004թ. նախաձեռնեցի եւ գործընկերոջ՝ Արարատ Կարապետյանի հետ հիմնադրեցի Կապանի «Խուստուփ» հեռուստաընկերությունը: Այն մալուխային է եւ ապահովում է 30 հեռուստաալիքի հեռարձակում, այդ թվում եւ սեփական՝ «Խուստուփ» հեռուստաալիքի հեռարձակումը: Թե որքանով են մարզկենտրոնում գործող երկու հեռուստաալիքները՝ «Սոսի» եւ «Խուստուփը» բավարարում են հեռուստադիտողի նախադրությունները, դժվարանում են ասել: Արձանագրեմ, սակայն, որ մարզային հեռուստատեսություն Այուրեքում դեռեւս չկա: ■

Կապանցու բնավորությունը

ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՆ ՄԵԼԻՔՍԱՆՅԱՆ
հոգեբան



Ձեւավորվելով որպես քաղաք՝ Կապանն ընդգրկել է հանրապետության տարբեր շրջանների եւ մեծ մասամբ Այուրեքի գյուղերի բնակիչներին: Սակայն քաղաքի պատմության անցած ժամանակահատվածը բավարար էր, որպեսզի բնավորության ընդհանուր գծեր առաջանային Կապանի բնակիչների մեջ: Ինչպիսին են այսօրվա կապանցու բնորոշ անձնային առանձնահատկությունները եւ ինչպես են դրանք դրսևորվում նրա վարքում՝ մենք փորձեցինք պարզել՝ անցկացնելով հոգեբանական հետազոտություն: Մասնակիցները 18-65 տարեկան կանայք եւ տղամարդիկ էին, որոնք ունեին տարբեր կրթական մակարդակ եւ տարբեր մասնագիտությունների տեր էին: Վերլուծելով 102 հոգու տված պատասխանները՝ մենք կարողացանք բացահայտել տիպիկ կապանցու կերպարը: Նա բավականին շփվող է եւ ընկերասեր: Անվերապահորեն չի ընդունում ամեն մեկին, բայց բարեհոգի է մարդկանց հանդեպ, վստահող, առավել հակված հանդուրժող, համբերատար եւ հարմարվող լինելուն: Մտածում է եւ կոնկրետ, եւ քաղաքակրթական շրջաններում ծայրահեղությունների մեջ, շատ չի հետաքրքրվում տեսական վերլուծություններով, բայց է չի տարվում միայն պրակտիկ խնդիրներով: Թեթեակիորեն ավելի է ուղղված դեպի սեփական ներաշխարհը, եւ կարող է սեփական երեւակայությանը ստեղծել նորը: Միջին կապանցին հուզականորեն բավականին կազմակերպված է եւ չի ենթարկվում պատահականությունների կամ միայն ընդհանրի ազդեցությանը: Վերահսկում է սեփական հույզերն ու վարքը, զնախառում է կարգապահությունը: Հետեւում է հասարակական, բարոյական նորմերին եւ պահպանում վարքագծի ընդունված կանոնները: Հասարակության մեջ ներգրավ-

ված լինելը, շրջապատի խրախուսանքն ու սատարումը բավականին կարեւոր են նրա համար: Միջանձնային հարաբերություններում նախընտրում է հավասարությունը: Որոշ չափով ավելի հակված է կոռեկտ, սիրալիր լինելուն եւ ավելի շուտ կգնա համագործակցության եւ կզիջի, քան իրավիճակը կհասցնի կոնֆլիկտի: Բավականին ազատ է եւ անկաշկանդ վարքում: Սոցիալապես համարձակ է, պատրաստ է գործ ունենալ անձանոթ մարդկանց եւ պայմանների հետ: Միեւնույն ժամանակ խելամուտ է եւ զնախառում է իրադրությունն ու շրջապատող մարդկանց համապատասխանաբար վարքային ցուցանիշներով: Լավ ինֆորմացված լինելը կարեւոր է կապանցու համար: Նա ունի վերլուծող միտք, հակված է փորձարարության եւ համոզված է ընդունում փոփոխություններն ու նորամուտությունները: Բացի ընդհանուր վատ արտահայտված գծերից՝ առանձնանում են նաեւ տարբեր տարիքներին բնորոշ որակները: Օրինակ, երիտասարդների մեջ առավել վատ արտահայտված են անմիջականությունն ու բարեհոգությունը: Միջին տարիքում առաջ են գալիս խորաքափանցությունն ու որոշ չափով անբնական պահվածքը միջավայրում: Հասուն մարդիկ առավել ուղղվում են դեպի սեփական ներաշխարհը, եւ բարձրանում է նրանց ստեղծագործական պոտենցիալը: Միջնեային տարիքայիններում ամենավատ արտահայտված առանձնահատկությունն այն է, որ Կապանի կանայք ավելի խելացի են եւ շուտ կողմնորոշվող, քան տղամարդիկ: Դրան հետեւում է զգայունության, փափկասրտության եւ զիջողականության առավել արտահայտվածությունը կանանց մեջ, ինչպես նաեւ ներքին կազմակերպվածության ավելի բարձր մակարդակը: Տղամարդիկ, ի տարբերություն կանանց, ավելի բնական են վարքում եւ թեթեակիորեն ավելի են հակված դեպի կայուն սկզբունքները, ավանդույթները պահպանելուն: Այսպիսով, մեր քաղաքացիները բավականին ակտիվ են եւ էներգիայով լի: Լռակյացության եւ շատասխուստյան, զգավածության եւ իմպուլսիվության միջին ընտրում են օպտիմալ, միջին էքսպրեսիվության (արտահայտչականության) տարբերակը: Եվ, անկախ տարիքից, սեռից կամ կրթությունից, նախընտրում են հետեւողականությունը, կազմակերպվածությունն ու սոցիալական նորմերը պահպանելը: ■

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱԿԵՅՈՒԹՅՈՒՆ...

Կապանի ռուսական համայնքը



ԳԱԼԻՆԱ ԱՐԱՍՆԱՆՅԱՆ «Россияне» հասարակական կազմակերպության խորհրդի նախագահ

Գրիգորի, Դոնի Ռուստովի լեռնային գործի ինժեներներ պատրաստող բուհերի շրջանավարտներ:

Խորին ակնածանքով են կապանցիները հիշում Ձինաիդա Միխայլովնա Կուկովային, Կիկտոր Վասիլիչ Լուկինին, Մարիա Սուլդատովային, Յուրի եւ Նելլի Ավետիսյաններին, Ավետյանա Քյարունցին, Վասիլի Իվանովիչ Ազիբալովին, Խաղիկովին, Պետրովին: Նրանց թվում կային մարկշեյդերներ, ֆլուտատորներ, քիմիկոսներ: Սկզբում նրանք շարքային ճարտարագետներ էին, հետո դարձան ֆաբրիկաների, հանքերի, կարգադրողների ղեկավարներ: Ստեղծվեցին լեռնագործների ընտանիքներ, Մակարովների ընտանիքի 11 զավակներն աշխատում էին հանքերում: Իվան եւ Նիկոլայ Պոստոլ եղբայրները ողջ կյանքն անցկացրին հանքերում: Հանքագործներ Իվան Խուրդը եւ Դանիլ Ռոդիոնովը իրենց կանանց հետ աշխատում էին ստորգետնյա հորիզոններում, կանայք ազդանշորներ էին, կոռուկավարներ: Շրջանային «ՊՊՆՆ» համար» թերթը հրատարակվում էր երեք լեզուներով՝ հայերեն, արբեջաներեն, ռուսերեն: Ռուսները գորակոչվում էին խորհրդային բանակ եւ զինվորական պարտքը կատարելով՝ վերադառնում էին Ղափան, որ նրանց համար հայրենի տուն էր դարձել:

1941-ին բանակ գորակոչվեցին 300 կապանցի, նրանք առաջինը նետվեցին երկրորդ աշխարհամարտի կրակների մեջ: Հանքագործ Նիկոլայ Տարասովը Բրեստի ամրոցի պաշտպանների շարքերում էր, նրան ավելի քան դառը ճակատագիր բաժին ընկավ, վիրավորվեց, գերեվարվեց, այնուհետև՝ Բուխենվալդի համակենտրոնացման ճամբար: Պատերազմի ավարտից հետո նա վերադարձավ հայրենի Ղափան եւ կնոջ հետ, մինչեւ թռակի անցնելը, աշխատեց երկրաբանահետախուզական արշավախմբում: Հայրենական պատերազմի տարիներին Ղափան էվակուացվեցին Գյուլիստային Կովկասի բնակիչներ, որոնք աշխատում էին կոմբինատում: Մեծ հայրենականի վետերան Յուլյա Դուկայանը վերջերս մի հե-

տաքերական պատմություն պատմեց, թե ինչպես 1942-ին Ղափան հասցվեց մի ողջ մանկատուն՝ 50 սաներ, ուսուցիչներ, դաստիարակներ: Նրանք տեղափոխվեցին գնացքով, այնուհետև հետիոտն հասան Գեղանուշ գյուղը, տարիքով մեծ երեխաներն իրենցից փոքրերին տանում էին ձեռքերի վրա: Ցուլակ Դուկայանի վկայությամբ՝ որբերի մեջ կային նաև երեխաներ շրջափակված Լեհինգրադից: Դա պատերազմի օրերի Ղափանի պատմության տակավին չուսումնասիրված մի էջն է:

Պիտի փաստել, որ Ղափանը ժամանակին ինտերնացիոնալ քաղաք էր, որտեղ ապրում էին աշխատում էին հայրուրավոր ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, թաթարներ, ադրբեջանցիներ: 1949թ. բացվեց ռուսական դպրոցը, որում կրթություն էին ստանում 11 ազգերի ներկայացուցիչներ: Երբեք միջբնիկական հողի վրա ոչ մի բախում կամ խտրականություն չի եղել: Ղափանցիների հոգեկերտվածքի մեջ առանձնանում են բարյացակամությունը եւ հանդուրժողականությունը այլ ազգերի մարդկանց հանդեպ:

1992-ին Կապանի սահմաններում չհայտարարված պատերազմ սկսվեց: Այդ ժամկարին օրերին ծնունդ առավ մեր ռուս-հայկական բարեկամության ընկերությունը: Հիմնադիր ժողովում այն ժամանակվա Կապանի քաղաքի ղեկավար նախագահ Ռադիկ Սարուխանյանը երախտագիտություն հայտնեց ռուս կանանց, որոնք չլքեցին Կապանը, թեև հնարավորություն ունեին մեկնելու հեռավոր, անվտանգ վայրեր, որտեղ պատերազմ չկար: Ռուս կանանց զավակները զենք վերցրին՝ պաշտպանելու Կապանի սահմանները, մարտական գործողությունների ժամանակ ընկան Ալբերտ Գրիգորի-Սյանը, Ալբերտ Պետրոսյանը, Յուրի Առուստամյանը, Նիկոլայ Բարխուդարյանը, Գրիգոր Մնացականյանը: Անփոփ մնացին նրանց մայրերը՝ Վալյա Լիտվինենկոն, Նադյա Մարֆուշկինան, Միլա Առուստամյանը, Գալյա Գրիգորյանը: Աննա Սեմյոնովնա-Կուզմինան կորցրեց Վոլոդյա եւ Վալերի Մանուչարյան որդիներին,

Անուշ Վանյանը՝ երկու որդիներին եւ երկու գարմիկներին: Այդ օրերին «Россияне» ընկերությունն իր առաջնահերթ խնդիրն էր համարում օգնություն ցուցաբերել զոհվածների ընտանիքներին: Քանզի նրանք ընկան, որ խաղաղ բացվեն առավտները Կապանի վրա:

Պատերազմի օրերին կապանցիների հետ ուսի կանգնել էին ռուսները, որոնցից շատերն անդամագրվեցին հայոց ազգային բանակին: Տատյանա Նովիկովան, Նադեժդա Լիտվինենկոն, Ջուլյա Ավետիսյանը եւ այլ ռուս կանայք պատվով ծառայեցին հայկական բանակում: Պատերազմի օրերին մեր ընկերության առաջնահերթ խնդիրներից էր վիրավոր ազատամարտիկներին օգնություն ցույց տալը: Նախածեռնությունն արձագանք գտավ, շատերը վարվեցին մեզ նման: Ինքնագովություն չլինի, դասերից հետո հողվածներ եւ ակնարկներ էի գրում, որոնք տպագրվում էին շրջանային թերթում, հաղորդվում տեղական եւ հանրապետական ռադիոյով: Ականատեսիս տպավորություններն ամբողջացնելով՝ 2005-ին հրատարակեցի մի գրքույկ՝ «Կապան. ինչպես է դա եղել» վերնագրով: Վերջերս փողոցում ինձ հանդիպեց տարեց մի կին եւ հարցրեց. «Դուք եք Գալինա Աղախանյանը, վարուց էի ուզում Ձեզ տեսնել, մենք լսում էինք Ձեր հաղորդումները, սպասում էինք դրանց: Դուք անչափ օգնեցիք մեզ հավատալու եւ հաղթելու»:

Ցանկանում եմ երախտագրտվել ինձ բոլոր նրանց, ովքեր պատերազմի այդ օրերին մեցուկ են եղել «Россияне» հասարակական կազմակերպությանը. նախեւառաջ Դերեմիկ Մարգարյանին, ով ինչով կարող էր, օժանդակել է մեզ, նույնը նաեւ Սյունիքի նախկին մարզպետ Էդիկ Բարսեղյանին: Նույն օժանդակությունն այսօր ցուցաբերում է մարզպետ Սուրեն Խաչատրյանը:

Մեր ընկերության գործունեության մի ուղղությունը բարեկամությունն է մեր ռուս-հայկական շրջակա սպաների եւ մարտիկների հետ: Փոխայցելությունները, համատեղ կազմակերպված միջոցառումներն ավելի ամրապնդեցին մեր բարեկա-

մությունը: Սահմանապահների հետ Քաջարանում մենք բացեցինք երկու ռուս օդաչուների՝ հասանովի եւ Սոկոլովի վերականգնված հուշարձանը: Այդ օդաչուները պետական սահմանը պաշտպանելիս զոհվել են Քաջարանի երկնքում: Ռուսաց լեզվի պրոպագանդանը, մասսայականացմանը միտված միջոցառումներն անցկացնում ենք սահմանապահների հետ: Մասնավորապես նախորդ տարում կազմակերպեցինք կլոր սեղան՝ «Ռուսները, ռուս ժողովուրդը, ռուսաց լեզուն մեր ընտանիքի եւ իմ ժողովրդի կյանքում» թեմայով: Այնուհետև բանավեճի մասնակիցները եղան Լեռնաձորի հիմնական դպրոցում: Դպրոցին նվիրեցինք մեթոդական եւ գեղարվեստական գրականություն: Կուզմինի հիշատակելու ռուս-հայկական ընկերության մեր բարեկամներից մեկի՝ Շմակոն Մովսիսյանի մասին: Նրա հիմնադրած Կապանի պատմության թանգարանում բացվել է ռուս-հայկական բարեկամության սրահ, որի բացմանը ներկա էին Հայաստանում Ռուսաստանի Դաշնության ղեկավարության բարձրատիպ ղեկավարները:

Պիտի նշեմ, որ հենց պատմության թանգարանի այդ սենյակում էինք անցկացնում ընկերության կազմակերպած միջոցառումները, հավաքները, հանդիպումները: Հիմա գրված ենք գլխավորում ծածկ ունենալուց: Հուսով եմ, որ մարդային իշխանությունները մեզ կընդառաջեն մի անկյուն ունենալու համար, քանզի նրանց կողմից Կապանի ռուսական համայնքի հանդեպ բարյացակամության պակաս երբեք չենք զգացել: Մանավանդ որ պատրաստվում ենք մշտել ընկերության հիմնադրման 15-ամյակը:

Ռուսաստանի եւ Հայաստանի միավորում են բարեկամության ամուր կապերը: Պատմական ճակատագրերի, կրոնական եւ մշակութային ընդհանրությունները, ռազմական գործընկերությունը, սերտացող տնտեսական կապերն ամրապնդում են այդ բարեկամությունը: Մենք՝ Կապանում բնակվող ռուսներս, երբեք ազգամիջյան հողի վրա խտրականություն չենք զգացել, այստեղ ապրում ենք ինչպես հավասարը հավասարի հետ եւ հույսով ու լավատեսությամբ մայրու ապագային:

Գլենդել-Կապան. բարեկամության նախապայարմություն




ԳԱՅԱՆԵ ԱՆԱՎԵՐՅԱՆ պատմության ուսուցչուհի

քաղաքապետ Ռաֆֆի Մանուկյանի աջակցությամբ ծրագրող կյանքի կոչելու համար 2002թ. սեպտեմբերին Գլենդել-Կապան քույր քաղաքների ընկերակցությունը Գլենդելի քաղաքային խորհրդին զեկույց ներկայացրեց երկու քաղաքների ունեցած ընդհանրությունների մասին ընդգծելով հատկապես Կապանի պատմական մշակութայինը եւ մշակութային, տնտեսական զարգացման հեռանկարները:

2002թ. դեկտեմբերին Գլենդել քաղաքի քաղաքային խորհուրդը կայացրեց 17023 որոշումը, ըստ որի՝ Կապան քաղաքը եւ Գլենդելը հռչակվեցին քույր քաղաքներ: Հետեւաբար, Կալիֆոռնիա նահանգի բարտուղարությունը «Գլենդել-Կապան քույր քաղաքների ընկերակցությունը» գրանցեց իբրեւ ոչ շահութաբեր կազմակերպություն:

2003թ. հոկտեմբերին Գլենդել քաղաքից մի պատվիրակություն, որի մաս էին կազմում քաղաքային վարչության անդամներ, քաղաքային պաշտոնյաներ, գործարարներ եւ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, պաշտոնական այցով



Գլենդել

Կապանում էր: Պատվիրակությունը հյուրընկալվեց եւ հովանավորվեց «Գլենդել-Կապան քույր քաղաքների (ԳԿՔՔ) ընկերակցության» կողմից: Պատվիրակության հիմնական

նպատակներից մեկը համագործակցության հիմք դնելն էր փոխադարձ օրագրերի մշակման ու գործադրման հնարավորություններին ծանոթանալն էր: Վերջին տարիներին ԳԿՍ-ն

իր գործունեությունը կենտրոնացրել է Կապանի կրթական եւ առողջապահական համակարգը բարելավելու, ինչպես նաեւ շրջակա գյուղերի կարիքներն ուսում-

Գլենդելի Հայ դատի հանձնախմբի գլխավորությամբ եւ Գլենդելի

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱԿԵՅՈՒԹՅՈՒՆ...

Ադրբեջանցիները՝ Կապանում

«Ես մարդկանց չեմ բաժանում հայների և բարբարոսների, ինչպես այդ անուն են որոշ նեոնազիստներ: Ինձ չի հերքալըրդուր թաղաքացիների ծագումը, ոչ էլ նրանց ծնունդը ավանդելը: Նրանք բաժանում են միայն մի չափանիշով՝ առաքինությանը: Ինձ համար յուրաքանչյուր լավ օտար հայն է, և յուրաքանչյուր վատ հայն բարբարոսից էլ վատագույնը: Եթե ձեր մեջ երբևէ փրակարծություններ ծագեն, երբեք զենքի չլինեք, այլ դրանք լուծեք խաղաղ ճանապարհով»:

Ալ. Մակեդոնացու երդումից



գրիչս ստեղծող

Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն

Մակեդոնացի, նրանց հնագույն դիցական անունները թուրքացվեցին, նոր երանգ ստացան, նոր տեղանուններ կնքվեցին: Այսպես ադրբեջանական գյուղերը ծլեցին՝ կապված անսանապահական զբաղմունքի հետ՝ որպես անառանց երևույթ: Չմեռանցներ էին Գեղին, Քիրսը, Քյուրուտը, Գյունարանը, Գեչիկուն, Քյուլուն: Վերջինս կոչվում էր նաև Ղշաղ: Հողագործ բնիկների ազդեցությանը ադրբեջանցիներն անցան նստակեցության, յուրացրին հողատիրոջ, ապա նախալեռնային ու լեռնային շրջանները:

Հայերի ու ադրբեջանցիների միջև փոխըմբռնման են մերձեցման գլխավոր խոչընդոտը նրանց վարած տնտեսական կյանքի արմատական տարբերությունն էր՝ երկրագործ հայեր և անասնապահ ադրբեջանցիներ: Քոչվոր անասնապահությունը չափազանց մեծ վնաս էր հասցնում երկրագործությանը: Քոչի պատճառով ավերի պատճառով բախումներ եղել են, սակայն դրանք համատարած բնույթ չեն կրել, ընդհանուր լեզու գտնվել է, կողմերը գնացել են զինույնների, հանդուրժել են միմյանց իրենց և իրենց գավակների համար ապահովելով խաղաղություն: Ադրբեջանցիները երկար ժամանակ պահպանեցին ցեղային կազմակերպչական օրենքներն ու սովորույթները, արթուն էին ցեղային մտածողությունը ու հիշողությունը:

Չնայած հակասություններին ու տարբերություններին (այդ թվում կրոնական)՝ հայերն ու ադրբեջանցիները սկսեցին մերձենալ, ապրել համատեղ կյանքով, այնպես որ «Վեցդարյա համակեցությանը երկու երկրի շերտերը՝ էնդեմիկ հայկականը և վերջնամուտը՝ թուրքականը, իրար այնչափ մոտեցած էին, որ որոշ դեպքերում նրանց իրարից

տարբերելը դժվարին էր դարձած» (Ստ. Լիսիցյան, «Ջանգեզուրի հայերը», էջ 63):

20-րդ դարակիզը մեզ մոտ նշանավորվեց նախադեպ չունեցող ողբերգական իրադարձությամբ՝ հայ-ադրբեջանական ընդհարումներով: Սա դաժան խաղ էր, ահեղ փորձություն: 1906թ. Կապանում ջարդերի գագաթնակետն էր գոհվում էին իրենց գոյությունը մի կերպ քարշ տվող մարդիկ, հրդեհվում, ավերվում, կողոպտվում էին բնակավայրերը:

Մուկեդոն աբյուրուտ խրախճանքն ավելի մեծ տարածուն կունենար, եթե հանդես չզային այս կողմերում հայտնի, զանգվածների մեջ մեծ հեղինակություն ունեցող, սեր և համակրանք վայելող այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Մեսրոպ Մազիստրոս Տեր-Մովսիսյանը, Սմբատ Մելիք-Ստեփանյանը, վիճակային պրիստավ Հյուսեյին Բեկ Մախմուտբեկովը, Մուսինիկ Սեբաստացի Մուրադը:

Այս ամենի գլխավոր բեմադրիչը ցարիզմն էր, իշխանությունները և ոչ թե ցեղային-էթնիկական թշնամանքը, կրոնական անհանդուրժողականությունը, ինչպես որ հաճախ ներկայացնում են: Ջարդերին հաջորդում էին գյուղերի հրետակոծությունը, խուզարկությունը, էկզեկուցիան, տուգանքները, կաշառքը, և այդ բոլորը՝ խաղաղություն հաստատելու պատրվակով:

Վատը գնաց, վատթարն եկավ: 1918-1921 թվականներ... Այդ տարիներին տեղի ունեցան գաղթականության շրջապակումն ու կոտորածը Գեղվաձորում (Թաբաթիք խալան Գեղվաձորի կոտորածի ակամատեսը, պատմում էր, որ իր աչքի առաջ զինված խուժանք, ուղին կորցրած, երկուհարկի չափ կանանց, երեխաների ու անգեղ մարդկանց հրացանազարկ արեց ու թրատեց ձորում), Ն.Հանդ գյուղի հրկիզումը, Գեղվաձորի կռիվը, Վերին ձորի դեպքերը, Ազարակ-Եղվարդի ծակառնամարտը, դարձաներ, սպանություններ... Ու նաև հանդուրժողականության, փոխադարձ օգնության, ցավի զգացողության դեպքեր գաղթականության ապահով անցումն ադրբեջանական բնակավայրերով (Անդրանիկը Կապանում չի տարհանել որևէ ադրբեջանական գյուղ), Ազարակից առաջ հայ բնակչությանը հարձակման մասին տեղեկացնելը, Ծավ գյուղացիների

կողմից հավաքվու գյուղացիների պաշտպանությունը և տեղափոխությունը, փրկության և օգնության, կարեկցանքի, սատար լինելու անթիվ-անհամար փաստեր, որ հատուկ ուսումնասիրության նյութ կարող են լինել:

Այս ամենը խոր հետք թողեցին երկու ժողովուրդների հոգեբանության վրա. փոխադարձ թշնամանք, մեղադրանքներ, ոխ... Եվ այսքանից հետո ապշել կարելի է, որ կարճ ժամանակում ձեռք բերվեց վստահություն, հաստատվեց համերաշխություն: Անշուշտ վճռական էր խորհրդային իշխանության դերը, սակայն չի կարելի ուրանալ. օգնության էր եկել առողջ բանակամությունը: Լավագույն օրինակ էր քիլվայությունը: Եվ իսկապես, ինչպիսի՞նք կլինեին անհանդուրժողականության հետևանքները, եթե չլինեք բարեկամության ու հավատարմության այդ եզակի կառույցը:

1920-ականներին Կապանի և Ադրբեջանի սահմանամերձ գյուղերի միջև նոր վեճեր էին սահմանների համար: Սահմանագծման հետևանքով Կապանի շրջանը գրկվեց զգալի տարածքներից, սահմանագիծն անցկացվեց քաղաքի մերձակայքով: Անպակաս չէին վեճերն արտոնների և քոչի պատճառով:

Արժեք իմանալ, որ երկու ժողովուրդներին միավորել է համատեղ սոցիալական պայքարը: 19-րդ դարի վերջին քառորդին ծավալված սոցիալական պայքարը Ղաչաղ Նեաբիի գլխավորությամբ վայելում էր կապանցիների համակրանքն ու աջակցությունը: Ավելին՝ Ղաչաղի հայտնի զինակիցներն էին կավարտեցի Կոստին և առաջածորդի Ադան Մելիք-Ստեփանյանը:

Արգելված ու մոռացված թեմա էր երկու ժողովուրդների աշխատավոր, ընթուստ խավերի համագործակցությունը հակակոլտնտեսային շարժման ժամանակ (բանդիտիզմ): Կապանում 569 ծայրահեղականներից 129-ը ադրբեջանցիներ էին:

1937թ. երկուսի համար ծանր փորձություն էր նաև Կապանում: 37-ը միանշանակ ցույց է տալիս. եթե ընկերները, արյունակիցները, ազգակիցները սարսա-

փահար երես են թեթև քեզմից, ապա վրա էին հասնում այլազգի և այլակրոն հարեանները: 37-ի արհավիրքին որքան կառույցներ, հարաբերություններ, կապեր չեն դիմացել, փլուզվել են, ցնդել, իսկ ահա հաղթող է դուրս եկել քիլվայությունը: Բազմաթիվ կապանցիներ, ենկավեղեղի հետապնդումներից խուսափելով, փրկություն են գտել Բաքվում և Ադրբեջանի մյուս շրջաններում, գնդակահարվածի դուստր Ռոզալի փրկության ձեռք են մեկնում ադրբեջանուհիները Ջանգեզուրում: Վերինձորեցի Մուսեիբը համարձակորեն հրաժարվում է կեղծ վկայություն տալ Կարապետ Նարինյանի դեմ, Մոդես գյուղացիներ Արթուր և Մուխան Մաֆայանները փրկվում են Ղիասլու գյուղի բնակիչ, քաղաքական աքսորական Աբդուլալի ունեցվածքը՝ արժանանալով մեկը գնդակահարության, մյուսը՝ սուգանային գուժարտակի: Առաջածորդի հավիթ Ոսկանյանին մեղադրանք է ներկայացվում բեկին որդու հետ ընկերություն անելու համար, արժակահիցի խտրովն այլուր և ցորենի սերմացու է բաժանում սովյալ ադրբեջանցիներին... 1949թ հունիսի 14-ի Ալթայ վեց քաղաքի մերձակայքով: Անպակաս չէին վեճերն արտոնների և քոչի պատճառով:

Արժեք իմանալ, որ երկու ժողովուրդներին միավորել է համատեղ սոցիալական պայքարը:

19-րդ դարի վերջին քառորդին ծավալված սոցիալական պայքարը Ղաչաղ Նեաբիի գլխավորությամբ վայելում էր կապանցիների համակրանքն ու աջակցությունը:

Ավելին՝ Ղաչաղի հայտնի զինակիցներն էին կավարտեցի Կոստին և առաջածորդի Ադան Մելիք-Ստեփանյանը:

Արգելված ու մոռացված թեմա էր երկու ժողովուրդների աշխատավոր, ընթուստ խավերի համագործակցությունը հակակոլտնտեսային շարժման ժամանակ (բանդիտիզմ):

Կապանում 569 ծայրահեղականներից 129-ը ադրբեջանցիներ էին:

1937թ. երկուսի համար ծանր փորձություն էր նաև Կապանում:

37-ը միանշանակ ցույց է տալիս. եթե ընկերները, արյունակիցները, ազգակիցները սարսա-

Շարունակությունը՝ էջ 22

Մասինքնու վրա: 2006թ. հունիսին Կապանի քաղաքապետ Ա.Կարապետյանը փոխադարձ այցելությանը եղավ Գլենդելում խորացնելու և էլ ավելի ամրապնդելու քույր քաղաքների հարաբերությունները: Նա ծանոթացավ Գլենդելին, քաղաքի կառավարման աշխատանքներին: ԳԿՔՔ ընկերակցությունը քաղաքներում է փոխադարձ այցելությունները, որոնք անհայտն կնպաստեն ընկերակցության էլ ավելի արդյունավետ գործունեությանը: ԳԿՔՔ ընկերակցության գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում տեխնիկական միջոցների նվիրատվությունները, բժշկական սարքավորումների և այլ պիտույքների տրամադրումները, կրթական և առողջապահական հիմնարկությունների վերանորոգումները, մի շարք մանկամտերների և դպրոցների աշակերտների հովանավորությունները և այլն: Այս ձեռնարկումների շրջանակներում տրամադրվել են համակարգիչներ, հեռապատճեն (ֆաքս), տպագրական սարքեր, դեղորայք, գրքեր՝ ճարտարագիտական համալսարանի գրադարանին, վերանորոգվել են դպրոցներ, նախադպրոցական հաստատություններ, կատարվել է դրամահավաք, հարյուրավոր երեխաների նվերների առաքում և այլն: 2004թ. մարտին Գլենդելում իրականացվեց «Հայի հույսեր» միջոցա-

ռունը միացյալ դպրոցական շրջանի հայ ուսանողների կողմից: 2004թ. մարտի 12-ի այդ միջոցառմանը պատիվ ունեցա մասնակից ու ակամատես լինել: Կազմակերպիչները մեծագույն խանդավառությամբ իմացան, որ Հայաստանից եկած ուսուցիչների պատվիրակության մեջ է նաև Կապան քաղաքի ներկայացուցիչը: Միջոցառման ժամանակ Գլենդելի հայ սովորողները ներկայացրին երաժշտական ու պարային համույթների ելույթներ, իրենց խոսքն ասացին ԳԿՔՔ ընկերակցության անդամներ, հյուրեր: Նշվեց, որ կարևորը Գլենդելի սովորողների միջոցով Կապանի դպրոցականներին օգնելն է: Միջոցառման կազմակերպիչներից Գրեգ Գրիգորյանը, կարեւորելով դա, շեշտեց. «Այս աջակցությունը ոչ միայն կապում է մեր համայնքները, այլև մեծապես նպաստում է Կապանի դպրոցներին և աշակերտներին»: Նա կարեւորեց այն, որ այդ օգնությունն իրականացնում է սփյուռքի երիտասարդ սերունդը: Գլենդելում լույս տեսնող «THE ARMENIAN OBSERVER» թերթի 2004թ. ապրիլի 7-ի համարում տպագրված հատուկ հոդվածում նշվում էր, որ այդ օրը քաղաքի սովորողները և նրանց ընտանիքի անդամները Կապանի դպրոցների համար հանգանակեցին 9500 դոլար գումար: Թերթը մեջբերում է Գլենդելի ավագ դպրոցներից մեկի տնօրեն Գագիկ Գալֆայանի խոսքը. «Սա մեզ

համար շատ մեծ հնարավորություն է աջակցելու Կապանի դպրոցներին, սովորողներին, ուսուցիչներին, ովքեր իսկապես մեր օգնության կարիքն ունեն»: Միջոցառմանը մասնակցեց ավելի քան 1000 մարդ: 2006թ. սեպտեմբերի 10-16-ը տեղի ունեցավ ԳԿՔՔ ընկերակցության երկրորդ պատվիրակության այցը Կապան: Այդ մասին ընկերակցությունը նախապես մամուլի հաղորդագրություն տարածեց, որի մեջ մասնավորապես նշվում էր. «Գլենդել-Կապան քույր քաղաքների ընկերակցությունը հայտարարում է, որ բժշկական մասնագիտություն ունեցող և արվեստագետներից բաղկացած մի պատվիրակությամբ այս տարած սեպտեմբերին պիտի մեկնի Հայաստան: Ոչ շահութաբեր այս կազմակերպությունը, որը հիմնվել է 2001-ին՝ ամրապնդելու համար մշակութային, տնտեսական և արհեստագիտական գործակցությունը Գլենդելի և Կապանի միջև, համախմբել է պատվիրակության անդամներին բժիշկներ և մասնագետներ, և նրանց պիտի առաջնորդի հայրենիք՝ մոտիկից ծանոթանալու համար Հայաստանին՝ իր պատմությանը, ժողովրդով և մշակույթով: Ցավով, հիվանդանոցի ծննդաբերական բաժանմունքի վերանորոգման և արդիականացման ծրագիրն առայժմ չի հաջողվել իրականացնել:

ԿԱՅՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՐԴԻԿ, ՈՐՈՆՔ ԿԱՆՈՆԱՍ ԵՆ ԱՅՍ ԳՈՐԾԻ ԿՈՂՔԻՆ

Գլենդելի Ավանտիստ բժշկական կենտրոն. 1905թ-ից այս կենտրոնը որակյալ առողջապահական ծառայություններ է մատուցում Գլենդել քաղաքի և շրջակայքի բնակչությանը: Այն ահանգի հիվանդանոցային և ոչ հիվանդանոցային հիվանդների, այդ թվում նաև հետզհետե աճող հայկական, լատինական և կորեական համայնքներին մատակարարում է բարձրորակ բժշկական ծառայություն: Իր առաքելությունը համարում է «Աստուծո սերը բաժնեկցելով մեր համայնքի հետ՝ առողջություն և բարիք մատուցել բոլոր մարդկանց»:

Արթին /Գարու/ Մանուկյան. Գլենդել-Կապան քույր քաղաքների միության նախագահն է և նրա հիմնադիրներից մեկը: Նա նաև Գլենդել քաղաքի համայնքային կյանքի ակտիվ մասնակիցներից է: Ա.Մանուկյանը Գլենդելի Հայ դատի գրասենյակի երկարամյա ղեկավարներից է և այս պաշտոնում մեծապես աջակցել է ամերիկահայ համայնքի դերի և կշռի բարձրացմանը, նրա ակտիվությանը՝ փոխգործակցության կամուրջներ հաստատելով քաղաքում առկա տարբեր հաստատությունների և կազմակերպությունների միջև: Նա Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշարձանի Գլենդելի խորհրդի հիմնադիրների թվում է: Արթին Մանուկյանը տարիներ շարունակ գլխավորել է Համագոյային հայ կրթական և մշակութային միությունը: Նա ճանաչված կուսակցական գործիչ է, ՀՀԳ Գլենդելի «Միարմյան» կոմիտեի անդամ:

Լարի Ջարյան. գործարար և հասարակական գործիչ, 1983-1999թթ. ընտրվել է Գլենդելի քաղաքապետական խորհրդի անդամ և ծառայել այնտեղ: Իր ծառայության տարիներին չորս անգամ ընտրվել է քաղաքապետ: 1986թ. որպես Գլենդելի քաղաքապետ՝ Ջարյանն այցելել է Հայաստան:

Ալբեռ Կարամանուկյան. բժիշկ և գործարար, հիմնադրել է «Հայ բազմապարտիլ բժշկական խումբ» ընկերակցությունը, որն իր տեսակի մեջ առաջինն էր Գլենդելում: Պարոն Կարամանուկյանը նաև բազմաթիվ այլ նախաձեռնությունների հեղինակ է: Նա «Սուրբ Աստվածածին» բժշկական կենտրոնի սեփականատերն է, որտեղ հայ ադրբեջանցի մարդկային ջերմ հոգատարություն և բժշկական խնամք են ստանում կենտրոնի մասնագետ աշխատակիցների կողմից:

Գլենդել-Կապան քույր քաղաքներ միության հիմնադիրները հավատում են իրենց սկսած մեծ գործին և տարեցտարի էլ ավելի վստահ և հաստատուն քայլերով շարունակում իրենց աշխատանքը:

ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Երկաթուղային կայարանի երբեմնի աշխույժ եռուզ եռը

1932թ գործարկվեց Մինջեան-Ղափան երկաթուղին, որին միացվեց Բաքու-Երևան մարդաբար գնացքը: Այդպիսով Ղափանը միացավ աշխարհի անցուդարձին, լեռների մեջ ծվարած բնակավայրը, որ 20-րդ դարասկզբին մի գյուղ էր Կաջազան գետի երկայնքով, փաստորեն կառուցապարվեց երկաթուղու շնորհիվ, դարձավ ժամանակակից քաղաք, ավելորդ չէ նշել, որ ժողովրդապրեռական բեռների 95 փոկոսը Ղափան էր ներկրվում երկաթուղային տրանսպորտով, փարբեր նշանակության բեռներ էին տեղափոխվում նաև հարևան Գորիսի եւ Միսիանի շրջանների համար:



Երկայուն չգործող երկաթուղային կայարանը

Ղափանի երկաթուղային կայարանում բեռնաբարձման եւ բեռնաթափման գործընթացն օր ու գիշեր չէր դադարում, նշեմք նաև, որ քաղաքի հիմնարկ-ձեռնարկությունների (լուսատեխնիկական, ավտոմոբիլային, «Էլեկտրոն», կոնդենսատորների գործարաններ, պղնձահանքային, շինանյութերի եւ իրերի կոմբինատներ, տրիկոտաժի եւ կոշիկի ֆաբրիկաներ եւ այլն) արտադրանքը երկաթուղային տրանսպորտի միջոցով առաքվում էր նախկին Խորհրդային Միության անենատարբեր հասցեներով:

Շրջանային «Ղափան» թերթի 1986 թվականի օգոստոսի 2-ի համարում «Բեռները ժամանակին եւ անկորուստ» վերտառությամբ հրատարակումը նվիրված է երկաթուղային օրվան, որում մասնավորապես գրված է. «Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի, մասնավորապես, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության հստակ ուղիքը չի կարելի պատկերացնել առանց պողպատե ուղիներով սլացող գնացքների ներդրման աշխատանքի: Այս ամենը հստակ

գիտակցում են Ղափանի երկաթուղային կայարանի կուլեկտիվի մարդիկ, որոնք արժանապայել գործով են դիմավորում իրենց տոնը: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում 2463-ի փոխարեն առաքվել է 3041 վազոն, սպառող կազմակերպություններին են ուղարկվել 34680 տոննա ժողովրդատնտեսական բեռներ, լայն սպառման ապրանքներ, որոնք ստեղծվել են մեր շրջանի աշխատավորների ձեռքերով: Իսկ մեզ մոտ բեռնաթափվել է 676 վազոն, այնքան, որքան նախատեսված է

պլանով: Անցած տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ մի վազոնի շրջապտույտը արագացվել է 0,2 ժամով, 1000 մարդով ավելացել է ուղևորափոխադրումների ծավալը: Ընթացիկ հնգամյակում նախատեսվում է ջերմաքարշերտի փոխարինել էլեկտրաքարշերտով, էլեկտրաֆիկացնել երկաթուղին, ինչը հնարավորություն կտա արագացնելու վազոնների շրջապտույտը, զգալիորեն ավելացնելու մեկ բեռնատար վազոնի արտադրողականությունը:

Հրապարակման մեջ նաև քննադատություն կար այն հիմնարկ-ձեռնարկությունների հասցեին (երկաթբեռոցայ կառուցվածքների գործարան, «Հայգյուղտեխնիկա» շրջանային արտադրական միավորում, շինանյութերի կոմբինատ), որոնք ձգձգում են բեռնաթափումը, ժամանակին չեն ազատում իրենց վազոնները, ինչը հանգեցնում է շարժակազմի խցանումների, ավելորդ կուտակումների, խախտվում է աշխատանքի ուղիքը: Միայն մի քանի երթեկության խափանումը խոշոր կորուստների պատճառ է դառնում: Ահա այս էր հրապարակման լեյտմոտիվը:

Բայց ինչպես ասում են, ուրբաթն ավելի շուտ եկավ, քան շաբաթը: Հայ-ադրբեջանական հակամարտության օրերին Կապան-Երևան երկաթուղին հայտնվեց այդ իսկ հակամարտության կիզակետում: Նախիջեանով եւ Ջանգելանով անցնող Կապան-Երևան եւ Երևան-Կապան գնացքները ենթարկվում էին հարձակումների, արարնքատար գնացքները թալանվում էին, մարդատար գնացքները կալանվում էին, 1991-ի սեպտեմբերի կեսերին ադրբեջանցիները, կալանելով Կապան-Երևան գնացքը, պատանդ են վերցրել 14 հոգու, 35 օր պահել գերության մեջ: Նման տխուր դեպք կրկնվել է մի քանի անգամ:

Մոտ վեց տասնամյակ գործելուց հետո 1990-ականների սկզբին դադարեց երկաթուղային երթեկությունը, շրջափակվեց Երևան-Կապան երկաթուղին: Միջին եւ ավագ սերնդի մարդկանց հիշողության մեջ տակավին թարմ է մնացել երկաթուղային կայարանի աշխույժ եռուզեռն առավոտվա (երբ գնացքը ժամերից ժամերից բախումից առաջացած համաչափ զնգոցը:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Օդային տրանսպորտով երթելուց առաջին երազանք

Օդանավով մայրաքաղաք հասնելը քաղցր հուշ է դարձել կապանցիներին համար: Հայ-ադրբեջանական հակամարտությունը մեզ գրկեց օդային փոխադրամիջոցով կարճ ժամանակամիջոցում եւ հարմարավետ երթելու հնարավորությունից: Մինչդեռ փաստանյայտներ ի վեր կապանցիներն օգտվել է ինքնաթիռի ծառայությունից: Առաջին ինքնաթիռի՝ Ղափան վայրէջք կատարելու պարունությունը կապված է անցյալ դարի 20-ական թվականների հետ: Այդ մասին ուշագրավ փոփոխություններ ենք քաղում Վահրամ Հովհաննիսյանի «Գրառումներ հանրաշխարհից» («Հայաստան» հրատարակչություն, 1963թ.) գրքից: Հեղինակը Ղափանի պղնձահանքային կոմբինատի գլխավոր ինժեներն էր 1947-1959 թվականներին:

Բանն այն է, որ 1924թ. փետրվարի վերջերին միութենական պետականը քննարկում է պղնձի արդյունաբերության, այդ թվում Հայաստանի պղնձարդյունաբերության վերականգնման հարցը եւ ընդունում համապատասխան որոշում: 1924-ի հունիսին Անդրերկրյունը Ալ.Սյանիկյանի ջանքերով ստեղծում է հատուկ հանձնաժողով, որի առջև կոնկրետ խնդիր է դրվում զբաղվել Ղափանի հանքերը վերականգնելու հարցով: Հունիսի 8-ին այդ հանձնաժողովը «Յունկեր» ինքնաթիռով Թիֆլիսից մեկնում է Ղափան: Դա առաջին ինքնաթիռն էր, որ վայրէջք կատարեց նախկին «Սյունիք» գործարանի մոտ տարածվող դաշտում: Օդանավակայանի բացակայության պայմաններում այդ թռիչքը կապված էր մեծ վտանգի հետ: Աննպաստ եղանակի պատճառով ինքնաթիռը մոլորվել

էր, պտտվել իրանական Ղարաղաղի լեռների վրա, ապա կողմնորոշվել, հասել Ղափան: Մեկ այլ աղբյուրի՝ «Սովետսկի ավիատոր» թերթի հրատարակումը՝ «Օդանավակայան լեռներում» ռեպորտաժը հայտնում է, որ Ղափանի օդակայանը շահագործման է հանձնվել 40 տարի առաջ: Թերթը թվագրված է 16-ը մայիսի, 1977 թվական, ուրեմն պիտի ենթադրել, որ այն գործարկվել է 1936-1937թթ.: Բայց միայն հետպատերազմյան տարիներից սկսած օդակայանն ակտիվ գործունեություն է ծավալել: Մոտ երկու տասնամյակ՝ 1948-ից մինչև 1967-ը, օդակայանի տնօրենը Շմավոն Մարտիրոսյանն էր՝ կարգային օդաչու, Վորոշիլովգրադի ավիացիոն բարձրաստիճան դպրոցի շրջանավարտ (1940թ.): 1941թ. հուլիսից ռազմաճակատում էր, նախ՝

«Սու-2» ռմբակոծիչով էր մարտական առաջադրանքներ կատարում, այնուհետև՝ կարճատև դաշընթացներում տիրապետեց «Իլ-2» մարտական ինքնաթիռին: Պարզեատրվել է Կարմիր դրոշի եւ Կարմիր աստղի շքանշաններով, «Վիեննայի գրավման համար», «Բուդապեշտի գրավման համար» մեդալներով:



Օդանավակայանի երկարամյա տնօրեն Շմավոն Մարտիրոսյան

Պատերազմի դաշտում ձեռք բերած փորձն ու հմտությունը նպաստեցին, որ հետո կազմակերպի Ղափանի օդակայանի աշխատանքները: Երբեմն էլ, երեւի մտաբերելով մարտական թռիչքները, ինքնաթիռի խցիկ էր մտնում, կարճատև թռիչքներ կատարում: Արդեն խաղաղ պայմաններում արժանացել է «ՍՄՅՍ օդային նավատորմի գերագնացի» կրծքանշանի: Ղափանի օդակայանի աշխատանքները լավագույնս է կազմակերպել (1970 թվականից) Ռադիկ Դանիելյանը, 1979-ին նրա կյանքն ընդհատվեց ավտոաղետից: Ռ.Դանիելյանի ղեկավարման տարում 1972-ի օգոստոսին «ՅՍՎ-40» ռեակտիվ մարդատար ինքնաթիռն առաջին անգամ վայրէջք կատարեց Ղափանում: Մինչ այդ թռիչքներ էին իրականացվում «ԱՍ-2» ինքնաթիռով, որը մեկուկես ժամում էր հասնում Երևան՝ դրան հավելած բազմազան անհարմարությունները:

... 1972թ. օգոստոսի 18: Հիշարժան մի տարեթիվ դափանցիների համար: Օրը պատահականորեն չէր ընտրված: Նախկին Խորհրդային Միությունում օգոստոսի կեսերին նշվում էր քաղաքացիական ավիացիայի օրը: Արագընթաց, հարմարավետ «ՅՍՎ-40»-ը վայրէջք կատարեց Ղափանի օդակայանում: Հանրապետության կառավարությունը եւ քաղաքացիայի վարչությունը հեշտությամբ չընդունեցին Ղափանի ղեկավարության առաջարկը Ղափան-Երևան չվերթում մտցնել «ՅՍՎ-40» ինքնաթիռը՝ պատճառաբանելով, որ թռիչքուղին չի համապատասխանում օդանավի թռիչքային պահանջներին: Ղափանի այն ժամանակվա շրջկոմի առաջին քարտուղար Ռաֆայել Մինասյանն անմիջապես ստանձնեց օդակայանի վերակառուցման աշ-

խատանքները, որոնք կատարվեցին աննախադեպ կարճ ժամանակում՝ երեք ամսում: Առաջին պաշտոնական թռիչքը «ՅՍՎ-40» ինքնաթիռով իրականացրեց հանրապետության այն ժամանակվա քաղաքացիական ավիացիայի վարչության պետ, փորձառու օդաչու Դմիտրի Աղբաշյանը: Օգոստոսի 20-ին արդեն «ՅՍՎ-40»-ն առաջին անգամ ուղևորներ տեղափոխեց Երևանից եւ Ղափանից:

«ՅՍՎ-40»-ը մինչ այդ թռիչքներ իրականացրեց «ԱՍ-2»-ի հետ համեմատելի պարզապես անստույգում է: Հավելենք, որ նոր մարդատարը տեղափոխում էր 27 ուղևոր եւ մայրաքաղաք հասնում 35 րոպեում (իչեցնենք՝ գնացքով Ղափանից Երևան հասնելու համար պահանջվում էր տասը ժամ): Հաջորդ տարիներին հնարավորություն ընձեռվեց մտցնել Ղափան-Սոչի, Ղափան-Ստեփանակերտ չվերթերը: Բայց, ինչպես արդեն նշեցինք, օդային, ինչպես նաև երկաթուղային տրանսպորտի օգտվելու հնարավորությունն ի չիք դարձավ՝ կապված հայ-ադրբեջանական հակամարտության հետ: Ավելորդ չէ նշել, որ օդակայանը ադրբեջանական Ադրբեյդ զյուրդի հարեանության էր, բացի այդ՝ օդում գտնվող ինքնաթիռն ինքնին գնդակոծության թիրախ էր:

1990-ականների կեսերին՝ հանրապետության վարչատարածքային բաժանումից հետո, երբ ստեղծվեց Սյունիքի մարզը, փորձ արվեց «ՄԻ-8» ուղևորափոխ օդային կապ հաստատել մայրաքաղաքի հետ, բայց այդ նախաձեռնությունը չկայացավ: Եվ օդային ճանապարհով մայրաքաղաք հասնելը առայժմ անհասանելի ցանկություն է կապանցիներին համար:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Պարմական Կապան քաղաքի տեղադրության հարցի շուրջ

ՎԱՐԿԱՏ

ՔԱՂԱՔԱՆ ԶԱԿՈՅԱՆ
«Հայաստանի պատմական
աշխարհագրություն»

...Եթե չհաշվենք Նախի-
ջեանը, որը երբեմն կարճ
ժամանակներով մտել է
Մյունխենի մեջ, ապա ամբողջ
Մյունխենում Կապանը միակ
քաղաքն էր:

Կապանը գտնվում էր
այժմյան Ղափան-Քաջարան
խճուղու կիսաճանապարհին՝
Աջըղու գյուղի դիմաց՝ Ողջի
(հիմուն Կապան) գետի բարձրա-
դիր աջ ափին, որը տեղացիներն
անվանում են «Տանձուկենց»:

Կապանի մասին առաջին
հիշատակությունը վերաբերում
է 5-րդ դարի վերջերին: Ըստ
Երեմյայի, այդ ժամանակ Կա-
պանը սովորական մի բնակա-
վայր էր: 10-րդ դարից սկսած՝
մատենագիրների մոտ Կապանն
արդեն հիշատակվում է որպես
քաղաք: Կապանը 10-րդ դա-
րի վերջին (հավանաբար 998-
1001թթ. սահմաններում) դարձել
էր Մյունխենի թագավորության
մայրաքաղաքը:

Կապանն ուներ մի շարք
առավելություններ: Նրա արեւ-
տյան կողմում գտնվող Բաղա-
բերդը եւ Բաղակու քար բերդերը
ապահովում էին քաղաքի անվ-
տանգությունը արեւմտյան եւ
հյուսիս-արեւմտյան կողմերից:
Քաղաքի հյուսիսային կողմով
անցնում էր Կապան գետը, որն
այդ մասում առաջացրել էր խոր
կիրճ՝ խիստ զանդիվեր եւ անտա-
ռապատ լանջով, իսկ դիմացը մի
քանի հարյուր մետրի հասնող
ժայռ էր: Հարավային կողմում
ծճվում էին Արեւիքի բարձրաբերդ

եւ ժայռոտ լեռները, որոնք ան-
մատչելի էին դարձնում քաղա-
քը հարավային կողմից: Այդ է
եղել պատճառը, որ քաղաքը
հարավային եւ հյուսիսային
կողմերից հարկ չի եղել պարս-
պապատելու, իսկ արեւմտյան
կողմից նա ապահովված էր
Բաղաբերդը եւ Բաղակու քար
ամուր բերդերով: Համեմատա-
բար դյուրին էր քաղաք մտնելը
արեւելյան կողմից, այդ պատ-
ճառով էլ քաղաքի այս մա-
սը պարսպապատված է եղել:
1103թ. Կապանն ավերման է
ենթարկվում սելջուկների կող-
մից: Այնուհետեւ Կապանը մի
քանի դար շարունակում է իր
գոյությունը, բայց արդեն իբրեւ
ոչ թե քաղաք, այլ սովորական
բնակավայր: Կապան անունը
հետագայում պահպանվեց Ղա-
փան ձեռով, որն արդեն շրջա-
նի, երկրի անուն է եւ տարբեր
ժամանակներում ունեցել է
տարբեր մեծություններ:

Կապանը եղել է ֆեոդա-
լական ոչ մեծ քաղաք: Նրա
բնակչությունը ըստ Երեմյայի
միատարր չի եղել: Նա ուներ
հրեաների հատուկ թաղ:

Վաղեմի Կապան քաղա-
քից այժմ շատ քիչ բան է պահ-
պանված: Նրա արեւելյան կող-
մի պարսպի հետքերը հազիվ
նշմարվում են, իսկ աշտարակ-
ներից միայն մեկը, որոն-
ցից մնացել են միայն հիմքերը՝
2-2,5 մետր բարձրությամբ: Աշ-
տարակների հետքեր կան նաեւ
քաղաքի արեւմտյան կողմում:
Ավելի անմախաճելի է բուն
քաղաքից պահպանված ավե-
րակների վիճակը: Քաղաքի
բռնած տարածության գրեթե
կեսը, դարերի ընթացքում հերկ-
ման ենթարկվելով, վերածվել է
միապաղաղ դաշտի, իսկ մյուս
կեսը ծածկված է խիտ եւ անամ-
ցանելի անտառով:



Պատմական Կապանի ավերակները

Կապանի շրջանի բարբառային տարբերակը

ՇԱՆՆԱ ՄԻՔԱՅԵՆՅԱՆ

բանասիրական գիտությունների
թեկնածու, ԳԱԱ լեզվաբանության
ինստիտուտ, ԳԱԱ

Մյունխենի աշխարհի մաս կազմող Կապանի
շրջանն իր բնակավայրերով միջին դիրք է
գրավում Արցախի, պատմական Պարս-
պատունիքի միջև, որի հետեւանքով դա-
րեր ի վեր այն շրջապատված է եղել տար-
բեր բարբառային միջավայրերով: Դրանով
իսկ նրա բարբառային բնութագիրն ինք-
նին հետաքրքրություն է ներկայացնում
ոչ միայն հայ բարբառագիտության, այլեւ
պատմական հայրենագիտության համար:
Սակայն Կապանի խոսվածքները, ցավոք,
մինչեւ օրս գիտականորեն ուսումնասիր-
ված եւ նկարագրված չեն:

ՀՀ ԳԱԱ ՀԱճառյանի անվան լեզ-
վաբանության ինստիտուտի բարբա-
ռագիտության բաժնից 1977 թվականից
պարբերաբար գիտարշավներ էր կազ-
մակերպում ՀԽՍՀ տարբեր բնակավայ-
րեր՝ հայրենի խոսվածքները գրի առ-
նելու եւ հավաքված նյութի հիման վրա
բարբառագիտության ատլաս կազմելու
նպատակով: Հիմնական ուշադրությունը
կենտրոնացնելով Արեւմտյան Հայաս-
տանից մագապված նյութի հիման վրա
բարբառագիտության ատլաս կազմելու
նպատակով: Հիմնական ուշադրությունը
կենտրոնացնելով Արեւմտյան Հայաս-
տանից մագապված նյութի հիման վրա
բարբառագիտության ատլաս կազմելու
նպատակով: Հիմնական ուշադրությունը
կենտրոնացնելով Արեւմտյան Հայաս-
տանից մագապված նյութի հիման վրա
բարբառագիտության ատլաս կազմելու
նպատակով:

Ներքին ընդհատվեցին՝ համապատաս-
խան ֆինանսավորման բացակայության
պատճառով: Այդպիսով արեւելյան տա-
րածքի շատ բնակավայրերի, այդ թվում
նաեւ Կապանի շրջանի, խոսվածքները
չուսումնասիրվեցին: Ինստիտուտի բար-
բառագիտության բաժնում առկա է այդ
տարիներին գրի առնված (բարբառային
բոլոր հատկանիշներով) շրջանի ընդա-
մենը երկու միավոր՝ Կապան քաղաքի
(լրացնող Արեւիկ Դավթյան) եւ Վերին
խոտանան գյուղի (լրացնող՝ Ալմարա
Անտոնյան):

2003թ. առաջին Ֆրանսիայի Արեւե-
լյան լեզուների եւ մշակույթների ինս-
տիտուտի հայագիտության ամբիոնի
նախաձեռնությամբ կազմակերպվեց
բարբառագիտական տասնօրյա գիտար-
շավ Կապանի շրջան՝ մասնակցությամբ
հիշյալ ամբիոնի, ԳԱԱ լեզվաբանության
ինստիտուտի եւ Երեւանի պետական
համալսարանի գիտաշխատողների:
Խմբի նպատակն էր շրջանում նախ-
նական բարբառագիտական հետազո-
տական աշխատանքներ կատարելը:
Չայնագրվեցին մի քանի գյուղերի բար-
բառախոսների խոսքը, ինչպես նաեւ գրի
առնվեցին Արծվանիկի ենթախոսվածքը
(լրացնող՝ Սվետլանա Մանուչարյան):

Կապանի շրջանի բնակավայրե-
րի՝ մեր ձեռքի տակ եղած բարբառային
փոքրաթիվ նյութերի ուսումնասիրությու-
նը, այնուամենայնիվ, թույլ է տալիս անել
որոշ եզրակացություններ:

Ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի
առաջարկած քերականական միախա-
տ

կանիշ (ըստ բայի ներկա ժամանակի
կազմության) բնութագրմամբ՝ Կապանի
շրջանի խոսվածքները մտնում են երկու
տարբեր բարբառային ճյուղերի մեջ՝
ուն (օտըն ըմ) եւ (լ) իս (ուտիս ըմ): Հե-
տագայում ակադեմիկոս Գեորգ Ջահու-
կյանը, կիրառելով միջազգային լեզվա-
բանական մեթոդներ, հայ բարբառների
դասակարգման համար առանձնացրեց
հարյուր տարբերակիչ հատկանիշներ,
որոնցով նորովի խմբավորեց մեր բար-
բառային միավորները եւ հստակեցրեց
բարբառ, խոսվածք, ենթախոսվածք
հասկացությունները: Ըստ այդ դասա-
կարգման՝ հայերենն ունի 44 բարբառ-
ներ եւ դրանց մեջ մտնող բազմաթիվ
խոսվածքներ եւ ենթախոսվածքներ:

Ելակետ ընդունելով այդ չափա-
նիշները՝ կարելի է փաստել, որ հիշյալ
տարածքում հիմնականում խոսում են
Ղարաբաղի բարբառի մեջ մտնող խոս-
վածքներով: Կապանի բարբառային
միավորները միջին դիրք են գրավում
Գորիսի եւ Խանազախի (Ղարաբաղի)
խոսվածքների միջև:

Ղարաբաղի բարբառը, որը պատկա-
նում է բարբառների արեւելյան խմբա-
կազմությանը, իր հիմնական հատկանիշնե-
րով, ըստ Գ.Ջահուկյանի, 5-րդ դարում
արդեն կազմավորված ինքնուրույն
միավոր էր: Ավելին, կարելի է ասել, որ
այն պահպանել է գրաբարից տարբեր-
վող այնպիսի հնաբանություններ, որոնք
երբեմն հանգում են հնդեվրոպական մա-
խալեզվին:

Րաֆֆի

ԿԱՊԱՆԻ ԵՎ ԿԱՊԱՆՅԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ



1881-ի առաջին Րաֆֆին
Կապանում էր: Այդ մասին
Արտաշես Ծատուրյանը հե-
տաքրքիր հուշ է գրի առել,
որը ներառվել է «Րաֆֆին
ժամանակակիցների հու-
շերում» ժողովածուի մեջ:
Ստորեւ ներկայացնում ենք
մի հատված այդ հուշերից:

«... Ուխտավորի ջեր-
մեռանդությամբ մտա ներս:
Րաֆֆին քահանայի հետ
մտած սեղանի շուրջը թեյ էր
խմում: Մոտեցա ու ողջունե-
ցի: Րաֆֆին ժպտաց ու ձեռքս
սեղմելով ասաց.

– Ուրախ եմ թեզ նորից
տեսնելու, նստիր:
Տեղավորվեցի դիմացի
բազմոցին:

– Անհամբեր սպասում էի
ձեր վերադարձին, լսելու ձեր
տպավորությունները, – սկսե-
ցի ես:

– Իմ տեսածն ու լսա-
ծը պատմելով չի վերջանա,
կասեմ համառոտը. ինչպես
գիտեք, ձեր գյուղից գնացի
Բեխ, այնտեղից՝ Հալիձոր,
Ահաբաղ, մինչեւ Քաջարան:
Վերադարձիս այցելեցի Վա-
ստիկյանի այցելեցի Վա-
ստիկյանի գյուղերը: Ամեն տեղ էլ
ջերմ ընդունելության հան-
դիպեցի: Չէր ժողովուրդը
շատ հյուրասեր է: Գլխավոր-
րը, որ իսկական հայ մարդիկ
են, չեն մոռացել առաջինի
ճանաչման թողած ավան-
դությունները, պահպանել են
այդ սրբազան դամբարանը:
Տեսա Ղափանի յոթն ահռե-
լի բերդերը, որոնք արթուն
պահպանման նման իրենց
վաղեմի վեհությանը ասես թե
հսկում են շրջակայքի վրա:
Իսկ Կապանը դրանց ամենա-
տաքրքիր կողմերն է: Բնության այդ
հրաշակներտ ամրությունները
պարսպածե վեր են սլանում
դեպի երկինք:

Լեռների կատարներին
աճել է անտառը, ասես քարից
է ծել: Ժայռերի կրծքին ար-
ծիվների հետ բույս են դրել եւ
մարդիկ, որոնք գառների պես
բարի են խաղաղ մարդկանց
նկատմամբ եւ վագրի պես
չար՝ դեպի թշնամին: Բաղախ
հզոր բերդի տասներկու աշ-
տարակները դեռ կանգուն են,
պարիսպները՝ խարխված:
Կատեի եկեղեցին կիսավեր:
Ինձ թվաց, թե իրենց քարե
լեզվով նրանք ասում էին.
«Կենց դարերով պաշտպանե-
ցինք ձեզ թշնամիներից, բայց
դուք չեք պահպանում մեզ
կործանումից»:

Բաղաբերդի
այդ պարիսպները յոթը դար
իրենց գրկի մեջ պահպանել
են Հայաստանի հոգեւոր մշա-
կույթի տասը հազար ձեռա-
գիր մատյանները: Մյունխեն
Անդրվի իշխանը 4-րդ դարում
այդ պարիսպների տակ ջախ-
ջախել է պարսից Շապուհ
արքայի զորությունը: Այդ
մեծ գործարանը ոչնչացվել
է 11-րդ դարում սելջուկների
ավերիչ ձեռքով. նրա անունը
պահպանվել է բերդի դիմա-
քի սարալանջի մի ավերակ
բնակավայրում, որը կոչվել է
Գրաթաղ:

Ես, ներողություն խնդրե-
լով, ընդհատեցի վիպասա-

նի գրույցը, բացատրելով, թե
Գրաթաղ անունով գյուղ կա
այժմ եւ հարցրի, թե ինչ է նշա-
նակում խոյակերպ քարե ար-
ձանը, ավելացնելով, որ նման
արձաններ տեսել եմ Քիրս,
Աջիբաջ, Փխուրուտ եւ Ավ-
սարլու գյուղերի հին գերեզ-
մանոցներում, եկեղեցիների
մոտ:

Րաֆֆին բացատրեց, թե
Մյունխենում շատ կան այդ ար-
ձաններից եւ դա զինվորա-
կան խորհրդանիշ է. խոյ նշա-
նակում է ռազմիկ, ճակատ առ
ճակատ կռվող, հետեւապես
դրանք պատերազմում ընկած
հերոսների հուշարձաններ են:

– Հետո, այդ լավ հիշեց-
րիք, – շարունակեց Րաֆֆին,
– ես շատ փնտրեցի Ղափան
Բեկի գերեզմանը, բայց ցա-
վոք սրտի, ինձ չհաջողվեց
այդ սրբազան դամբարա-
նը տեսնել: Հալիձորի բեր-
դի դարբասի առաջ միտքս
գրավեց մի խոշոր դամբա-
րանաքար, սիրտս բարակեց
հուզմունքից, բայց երբ վեր-
ծանցի արձանագրությունը,
տեսա, որ կալերցի Մահտեսի
Հայրապետի գերեզմանն է,
վախճանված 1651 թվակա-
նին: Գտա եւ Մելիք-Փարսա-
դանյանի կողակցի՝ Ռեհանի
դամբարանը, վախճանված
1741 թվականին: Շատ հե-
տախուզեցի բերդի եկեղեցու
ներսն ու գավիթը, նույնպես
Հալիձոր գյուղի հին եկեղեցու
շուրջը, դարձյալ ապարդյուն:
Հետո Վահանավանքում շատ
ման եկա, տեսա Մյունխեն իշ-
խանների հոգեւոր հայրերի
չիրիմները, – բայց փնտրածս
չկա ու չկա: Մտածեցի, թե
այստեղ մի առեղծված կա.
այդպիսի կարծիք հայտնե-
ցին եւ Բեխի ծերունիները, թե
տապանաքարը թաքցված է
կամ շրջված հակառակ երեսի
վրա՝ գերեզմանը թաքցնելու նպա-
տակով: Ո՞վ էր շահագործված
այդ բան անելու. իմ կարծիքով
կամ հարազատներն են թաքց-
նել Ղափան Բեկի աճյունը՝
թշնամիների պղծումից փրկե-
լու համար, կամ թշնամիները՝
նրա հիշատակը ջնջելու հա-
մար, որի հուշարձանը, որպես
ազատամարտի դրոշ, կարող
էր միշտ խանդավառել այուճե-
ցիների ըմբոստ ոգին:

Առանց մարգարեության,
համոզված եմ, որ մեզանից
հետո էլ մեր հայրենասեր սե-
րունդը կհայտնագործե այդ
մեծ սրբությունը: Ես տեսա
Թորոս իշխանի գերեզմանը
Եղվարդում, Մխիթար Սպա-
րակետի՝ խնձորեսկի բեր-
դում: Մելիք-Փարսադանի
աճյունը մնաց Արուսիյի Թով-
մա Առաքյալի վանքում: Տեղ
Ավետիսյան գնաց Երուսաղեմ
մեղքերի թողության համար
պաշտպանվել եւ չվերադար-
ձավ: Իսկ Ղափան Բեկի եւ մյուս
հերոսների գերեզմանները
այդպես էլ մնացին անհայտ»:

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԿՋԲԱՆԱԴՐՅՈՒՐՆԵՐ

Այոնիքի թագավորները

Հարված Սպեկանոս Օրբելյանի «Այոնիքի պատմությունից»

Այսպես. մեր Սիսական աշխարհում առաջինը թագավորեց քաջարի, հզոր եւ բարեպաշտ արքա Սմբատը՝ Սմբատի եղբայր Սահակի որդին: Վերջիններս Իշխանիկ կոչված մեծ Վասակի եղբայր բարեպաշտ Աշոտի որդիներն էին: Իսկ Վասակ-Իշխանիկն ու Աշոտը երանելի Փիլիպեի որդիներն էին: Փիլիպեն էլ եղբայրն էր Սահակի, որն սպանվեց Դվինում Գուրգենի ղեկավարությամբ: Իսկ այս Փիլիպեն ու Սահակ եղբայրները Այոնյաց մեծ նահապետ Վասակի որդիներն էին:



Այոնյաց Գրիգոր Ա թագավոր (1051-1072թթ.) դեմքի վերականգնումը՝ պրոֆեսոր Ճաղարյանի

վանից տնից, նրանց թագավորագն մեծ իշխան Սեւադայի դստերը: Նրանք անզավակ էին, եւ թագավորությունը մնալու էր առանց ժառանգորդի: Ապա իշխանների հետ խորհուրդ անելով՝ Աղվանքից բերում են նույն Շահանդուխտի եղբայր, թագավորագն մանուկ Սեմեթերիին՝ խիստ գեղեցիկ տեսքով, առողջ կազմվածքով, իմաստուն ու հանճարեղ, այլեւ՝ աստուծոյ երկուսի: Այսպես իրենց թագավորությունը իրենց թագավորության ժառանգորդը: Որոշ տարիներ մնալով՝ մեռնում է նաեւ (Գրիգոր) թագավորը:

Սեմեթերինը երեք որդի ուներ՝ Գրիգորը, Սմբատը, Սեւադան եւ մի դուստր: Նրա մահին էլ այսպիսի պատճառով եղավ: – Մելիքշահից հետո յուրաքանչյուր ոք, գլուխը վեր պահած, ինքնիշխան դարձավ. եւ մեկը մյուսի դեմ ելանելով՝ ով որ կարողանում էր, ավերում էր երկիրը, թալա-

Սմբատից հետո թագավորում է նրա որդի Վասակը՝ հաճելի, աստվածասեր եւ բոլոր գործերի մեջ հաջողակ մի մարդ, որը քրոջը կնության էր տվել Աշոտին՝ նույն Սիսական տոհմից: Վերջինս այս ամբողջ թագավորության իշխանաց իշխանն էր. ուներ երկու որդի՝ Սմբատ եւ Գրիգոր: Ապա վախճանվում է Վասակ թագավորը եւ թաղվում իր հայր Սմբատի կողքին: Իսկ քանի որ նա իր իշխանության համար ժառանգ չուներ, ուստի թագավոր են դարձնում Աշոտի որդի Սմբատին. հոր փոխարեն էլ արա Գրիգոր եղբորը կարգում են մեր Սիսական աշխարհի իշխանաց իշխան: Այս Սմբատը, որ առավել հաճելի էր ու հեզախամբույր, սակայն ահարկու՝ շրջակա բոլոր ժողովուրդների համար, որոշ տարիներ թագավորելով, վախճանվում են թաղվում է Գուրգենու վանքում, տաճարի դռանը: Թագավորությունը ստանձնում է նրա եղբայր Գրիգորը: Սրանք երկուսով մեծ Աշոտի որդիներն էին, որտեղից էլ կոչվում են Ավագ Աշոտյանք:

Այն ժամանակ բարձրացել ու զորացել էր տաճիկների իշխանությունը, եւ ամբողջ աշխարհը ենթարկված ու հարկատու էր նրանց: Այդ պատճառով էլ մեր Սիսական աշխարհի շատ գավառներ խլեցին իրենց բնիկ տեղերի ձեռքից: Սուլթանության արժեքն

նրանց հարկադրանքները, որից թագավորական պատվով մեծարվում էր Սեմեթերինը, որը եւ երեւելի փառքով թագավորեց Բաղաստանը, ընդարձակեց իր տերության սահմանները. իր թագավորությունը հաճելի ու խաղաղ կյանքով վարեց բազում տարիներ, մինչեւ Մելիք սուլթանի մահը, որը տեղի ունեցավ հինգ հարյուր քառասունմեկ թվականին: Այնուհետեւ սկսեց խախտվել խաղաղությունը եւ խափանվել աշխարհիս ողջ նորոգությունը, որի մասին իր տեղում կայատմեմ:

Մելիքութիւններ

Հարված Երվանդ Լալայանի «Ջանգելուրի գավառ» ուսումնասիրությունից՝ տպագրված 1904թ. «Ազգագրական հանդեսում»

...Այժմեան Ղափանի ոստիկանական շրջանում նահանգեալ դարում իշխել են երկու նշանավոր մելիքական սերունդներ. մինը Մելիք-Փարսադանի, մյուսը Թորոս իշխանի: Մելիք-Փարսադանեան սերունդը բաժանուել է երկու տան՝ բուն Մելիք-Փարսադանեան եւ Մելիք-Ստեփանեան: Բացի սրանից Մելիք-Փարսադանի մի դստեր սերունդը կազմել է մի ուրիշ, փոքրիկ մելիքութիւն՝ Մելիք Նուբարեան անունով:

Թորոս իշխանի սերունդը համարում է այժմեան Մելիք-Քարապետեանները, որոնք, ոմանց կարծիքով, սերել են Թորոս իշխանի Ծաղիկ դստեր եւ վրացի Քարան իշխանից, իսկ իրենց, Մելիք Քարապետեանների ասելով, Թորոս իշխանի թոռ՝ Գեորգի որդի Քարամից, որ քաջ մարդ է եղել եւ լեզգիների դեմ վարած պատերազմների ժամանակ ցոյց տուած արտակարգ քաջութիւնների շնորհիւ Մուստաֆա-փաշից Քիւփարա գաւառակի վրայ մելիք կարգուել:

Բացի այս երկու տոհմից այստեղ եղել է նաեւ մի ուրիշ մելիքական տուն, Մելիք-Փրանգիլի, որ թուրքացել է:

Մելիք Փարսադանեանները բնակուել են գլխաւորապէս Գալիձոր եւ Բեխ գիւղերում, Մելիք-Ստեփանեաններն Առաջաձորում, իսկ Մելիք-Նուբարեանները՝ Ծիկախողում. Թորոս իշխանը՝ Նուարաւում, Մելիք Քարապետեանները՝ Ազարակում, իսկ այժմ Տանձթափ կամ Ղարաթափ գիւղում, Մելիք-Փրանգիլն էլ Արծուանիկում:

Այս մելիքական տոհմերից ամենանշանավորը Մելիք-Փարսադանեանն է, որ սերել է ոմանց ասելով, Սիւնեաց Չագիկ իշխանից, իսկ Բեխի ծերունիների ասելով՝ Ծատիկ (Աստուածատուր) իշխանից, որ Վրաստանի կողմերից եկել վերաբնակուել է Ղափանում:

ՂՈՒԿԱՍ ՍԵՔԱՍՏԱՅԻ

«Դավիթ Բեկի պատմությունը»

(հարված)

...Ապա տիրոջ 1726 եւ հայոց 1175 թվականին անթիվ-անհամար զորքով Այոնյաց աշխարհը մտան եւ հասան բոլոր կողմերից շրջապատեցին Դավթի երկիրը՝ Կապանի յոթնաբերդ գավառը:

հետեւակները լցրին դաշտերն ու լեռները: Եվ եկան բանակեցին Գալիձորի գետի մյուս կողմում, քառասորդաց պահքի տասներեքերորդ օրը: Իսկ Դավթի զորականներից շատ-շատերը, զնալով փաշաների մոտ, անճանառու եղան: Բայց ովքեր քաջ էին ու արի, խիզախուսն էին եւ պատրաստվում մարտի:

Եվ Դավթին իջավ բերդից ու ամրացավ գյուղում, որ գետի այս կողմն էր՝ նրանց բանակի դիմաց եւ թշնամուն ընդառաջ ուղարկեց մի զորագունդ, հարյուր վաթսուս հոգուց, գետանցները փակելու համար, եւ եկան փակեցին եւ երկու օր նրանց թույլ չէին տալիս գետն անցնել: Բայց երրորդ օրը հայ հրացանակիրները, որ օսմանցիների զորքերի հետ էին, գետն անցան այլ տեղից եւ եկան մտան, գրավեցին գյուղի մի կողմը եւ մեկուսացրին Դավթի զորքերը:

Այնժամ գավառի բոլոր բնակիչները խառնվեցին, խուճապի մատնվեցին, լքեցին Դավթին եւ գնացին մտան օսմանցիների լծի տակ: Եվ Դավթը մնաց մենակ, տասնյոթ սպառազեն այրերով՝ Գալիձորի անապատում, ուր կառուցել էր անառիկ բերդը: Նրա հետ էին նաեւ երեք եպիսկոպոս, տասներեք քահանա, տեր-Ավետիսն ու մելիք-Փարսադանը՝ սակավաթիվ մարդկանցով, որովհետեւ ամբողջ զորքը փախավ նրանցից: Սակայն Դավթը այս պայմաններում չհուսալքվեց, չհրաժարվեց իր ծրագրերից, չվախեցավ բարբարոսների բազմությունից, չդադարեց սխարմբներ գործելուց, այլ արիասբար շարունակեց ամրացնել բերդը, պատրաստել պահեստները, զորականներ հավաքել շուրջը:

Դավթին ու իր զորականները երեք հարյուր հիսուն հոգի, մտան անապատի բերդը: Օսմանցիների ամբողջ բանակը գետն անցավ, եւ մոտեցան, բերդի շուրջը պահպանություն կարգեցին: Այնտեղից թնդանոթների ու հրացանների զնդակներ էին ներս թափում: Եվ սրանք ներսից նույնը նրանց էին անում, վեց օր միմյանց դեմ կռվում էին. հակառակորդի կողմից օրական հարյուր կամ երկու հարյուր, երբեմն երեք կամ չորս հարյուր զոհ էր լինում, իսկ սրանցից դիրքի ամրության շնորհիվ, հազիվ մեկ կամ երկու հոգի:

Դիտելու բան էր կատաղի զորքի աղմուկ-աղաղակի այդ ահավոր տեսարանը, որովհետեւ երբ մեքենաները դրեցին, հարյուրավոր ու հազարավոր դրոշակակիրներն առաջ շարժվեցին, ապա ամբողջ զորքը հորդահոս գետի հորձանքի մոտ ահագին զոչումով թափվում էր, կամ հողմերի ուժգնությունից փոթորկած ծովի ամեհի ալիքների պես հորձանքով գալիս, իրարից առաջ էին անցնում, եւ այն մեքենաներից դեպի պարիսպներն էին դիմում: Եւ առհասարակ երկու կողմից փողոլ ու թմբուկի ձայները, զորքերի զոչումները, հրալից գնդակների շայշումը, հրազենների ծայթոյթով վառվեցին թշնամու դեմ:

Օսմանցիների Կապան գալու իններորդ ամսին, որ Դավթի գալստյան հինգերորդ տարին էր, եկան Կապան հասան Դեքիր եւ Արաս-Ալի փաշաները, բազմաթիվ զորքով, իրենց հետ առած նաեւ Պարկուշատի Փաթալի խանին: Եվ նրանց հրամանով եկան բոլոր կողմերից հավաքվեցին թուրքերը, իրենց հետ բերելով նաեւ հայկական զորքեր Գողթն գավառից, Ագուլիս քաղաքից, Օրդուվարից, Փիսիանից, Պարկուշատից, Կապանից, Մեղրիից, այլեւ դարաչորլու կոչված թուրքերին ու Սեւ լեռան բնակիչներին: Ինչեւէլ, շատերից քիչը կասեմք, եղան մոտ վաթսուս կամ յոթանասուն հազար եւ առավել եւս շատ, այնքան, որ նրանց հեծյալներն ու

Բայց յոթերորդ օրը, լուսադեմին, ամրոցը պաշարողները պատրաստվեցին վճռական գրոհի եւ մոտեցան պարսպին, ոչ թե երեկվա նախորդ օրվա մտան, այլ՝ ահագին մեծ մեքենաներով: Հսկայական սանդուղքների մտնվող քանակեց մեքենա ուսաբարձ բերում էին, հեռուն պարսպին, եւ խուճանի բազմությունը երեք խմբի բաժանված, երեք կողմից գրոհելով, մեքե-

նում էին այդ ահեղ տեսարանը, թշնամու բազմաթիվ զնդերի ու դրոշակների պատրաստությունը, նշանների փողփողեղը եւ զինվորների գեներների շողումը, մահն աչքն էին առել: Եվ օրվա ութերորդ ժամին, երբ տեսան, որ այնուհետեւ ապրելու հույս չի մնում, Միսիթար սպարապետն ու տեր-Ավետիսը խրախույս կարողացին եւ գեների դիմեցին: Այնժամ զորքերը նրանց շուրջը խմբվեցին (բացի պարիսպների պահապաններից), զինվեցին, պատրաստվեցին, զենք կապեցին, բոլորը գայրույթով վառվեցին թշնամու դեմ:

Սկսեցին խոսել Միսիթարն ու Տեր-Ավետիսը եւ ասացին. «Արիացեք, չէրկնչեք, հետեւեցեք մեզ, եթե հասել է մեր վախճանը՝ քաջաբար մեռնեմք, որովհետեւ մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից դուրս մեռնել, քան այստեղ, մեր աչքերի առաջ տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը եւ այլ դժոխա-

կություններ»: Այս խոսքերն ասացին եւ իրենք ամենից առաջ շտապ դուրս եկան պարսպի գաղտնի դռնով, եւ երեք հարյուր զինվածներ հետեւեցին նրանց:

Ով սքանչելիք, երեք հարյուր զինյալներ օրվա ութերորդ ժամին ձայնեցին, հորդոր կարդացին, հարձակվեցին յոթանասուն հազարի վրա: Նախ գրոհեցին աջակողմյան զնդին, աջ ու ձախ կտորեղելով:

Իսկ թշնամիները, երբ հանկարծ տեսան իրենց վրա հասած այդ ահեղ հարձակումը եւ կտորաժող, զուլվները կորցրած, խուճապահար դիմեցին երկրորդ եւ երրորդ խմբերի մոտ, աղաղակելով, թե հարձակվեցին, կտորեցին մեզ քրիստոնյաները: Եվ լսելով բոլորը զարմացան, ապշեցին, տկարացան, հուսալքվեցին, կազմալուծվեցին, եւ ահ ընկավ նրանց վրա, որովհետեւ մինչդեռ հույս ունեին մեծ հաղթանակի, ամրոցն իրենց ձեռքը գցելու, հանկարծակի վրա հասավ մի անողորմ կտորաժող:

Ուստի բոլորը զարհուրած եւ սասանած ասում էին մեկը մյուսին ով ուզում է կյանքը փրկել՝ թող փախչի: Որովհետեւ նրանցից շատերը բազմիցս տեսել էին Դավթի ու նրա մարդկանց քաջությունները, եւ քանի որ սարսափը, աղաղակը, նրանց բանակի անասելի կտորաժող զնալով սաստկանում էին, ուստի այնուհետեւ ոչ ոք չէր համարձակվում շրջվել Դավթի դեմ, այլ բոլորը շփոթված ու խուճապահար փախչում էին:

Իսկ սրանք եւ բերդում մնացածները համարձակ վրա հասան, խլեցին, շատերին տեղ-նուտեղ սպանեցին, ուրիշներին խոցելով ու վիրավորելով հալածեցին, մինչեւ որ նրանցից չջողին երկու հոգի իրար մոտ: Եվ այն օրը օսմանցիների բանակից ընկավ տասներեք հազար զինվոր, իսկ սրանցից՝ շատ քչերը: Օսմանցիներից խլեցին հարյուր քառասունութ դրոշակ եւ նրանց բանակից ամբողջ կապարտ-կողոպտուղ:

Դավթին այնուհետեւ ցանկանում էր ճակատամարտ տալ օսմանցիներին եւ վտարել նրանց Կապանից:

ՎԱՐԿԱԾ

«Կապան» տեղանվան սպուլգաբանություն

Խորհրդավոր, անծայրածիր այս աշխարհը մարդուն զարմացրել, հմայել է դեռ վաղընթացյալ ժամանակներից...

ստուգաբանությամբ ուղղակի կապվում են պատմական դեմքերին ու իրադարձություններին...

Կապան գավառը Սյունիքի ամենալեռնոտ շրջանն է, ամրոցախոր, բարձրաբերձ լեռների մի աշխարհ:

«Անշուշտ, դարերի ընթացքում անհրաժեշտությունը դրդած պիտի լինի այդ պաշտպանական կառուցումների մեջ ընդհանուր նպատակներով շաղկապված սիստեմ հաստատելու և այդպիսով փոխադարձ օգնությունը դուրսացնելու:

Կապանը վերջանալով մրազավազ, փրփրալի գահավիժող գետի կտրած ափին:

Անշուշտ, տեղանունները սերտորեն կապված են նաեւ ժողովրդի պատմական անցյալի՝ նրա էթնոգենեզի, այս կամ այն իրադարձության, ավանդությունների հետ:

«Չայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանում» հանդիպում ենք մի քանի տասնյակ «Կապան» տեղանունների (բերդեր, գյուղեր, լեռներ, քաղաքներ եւ այլն):

Սեֆեանուց գիտնական Ստեփան Լիսիցյանը «Ձանգեզուրի հայերը» արժեքավոր աշխատության մեջ, անդրադարձնում է ժողովրդական տոներից մեկին՝ Վարդավառին, որը նվիրված էր լեռների գագաթների պաշտամունքին:

Լիսիցյանը «Ձանգեզուրի հայերը» արժեքավոր աշխատության մեջ, անդրադարձնում է ժողովրդական տոներից մեկին՝ Վարդավառին, որը նվիրված էր լեռների գագաթների պաշտամունքին:

Լիսիցյանը «Ձանգեզուրի հայերը» արժեքավոր աշխատության մեջ, անդրադարձնում է ժողովրդական տոներից մեկին՝ Վարդավառին, որը նվիրված էր լեռների գագաթների պաշտամունքին:

«Չայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանում» առաջաբանում հեղինակները գրում են. «...սխալված չենք լինի, եթե պատմափայլ Մովսես Խորենացուն համարենք նաեւ հայկական տեղանվանաբանության (տոպոնիմիկա) հիմնադիրը»:

Կապան անունը հայ մատենագրության մեջ հիշատակվում է 5-րդ դարի վերջին քառորդի վերաբերող մի պատմության մեջ, որ Ստ. Օրբելյանը վերցրել է Դավիթանես եկեղեցականից:

Անշուշտ, լեռների պաշտամունքը ինչպես Չայկական լեռնաշխարհում առիտարակ, մասնավորապես Սիսական երկրում, կապվում էր վտանգի ժամանակ պաշտպանվելու մարտավարության հետ:

Անշուշտ, լեռների պաշտամունքը ինչպես Չայկական լեռնաշխարհում առիտարակ, մասնավորապես Սիսական երկրում, կապվում էր վտանգի ժամանակ պաշտպանվելու մարտավարության հետ:

Թե տեղանունները ինչպես կարգաձևան այս տեսակետները, կամ թե ինչ նոր վարկածներ առաջ կբաշխվեն, թողնենք գիտնականներին: Մի բան ակնհայտ է. կապանցի պատմական-աշխարհագրական, ազգագրական, մշակութային ու մեծագույն սիրո կապերով կապված է իր հայրենի եզերքին Կապանը համարելով Աստուծո շնորհ, մեծ աշխարհի իր անկյունը:

Կապանի համառոտ ֆիզիկաաշխարհագրական բնութագիր



ՀԱՅԿ ՀԱՎՈՐՅԱՆ Գրագավորություններ մարզի Ձանգեզուրի ենթամարզում: Դա Ողջի գոգավորության այն հատվածն է, որտեղ Ողջի գետին են միախառնվում նրա վտակներ Վաչագանը, Կավարտը, իսկ արեւելյան եզրում էլ՝ Աջանանը:

գոգավորություններ մարզի Ձանգեզուրի ենթամարզում: Դա Ողջի գոգավորության այն հատվածն է, որտեղ Ողջի գետին են միախառնվում նրա վտակներ Վաչագանը, Կավարտը, իսկ արեւելյան եզրում էլ՝ Աջանանը:

Ողջի գոգավորության միջնամասն է սա, որը նաեւ Կապանի գոգավորություն է կոչվում: Կապանի գոգավորությունը եզրավորված է Խուստուփ-Կատարի լեռնաշղթայից անջատված թմբաշարերով: Գոգավորության հարավային մասը կազմում են Գեղանուշի, Բաղաբուրջի, Վաչագանի եւ Բեխի հյուսիսահայաց հողմակողմ եւ խոնավ, անտառառափաստանային բուսականությանը ծածկված միջին բարձրություն լեռնաշղթաները՝ իրենց թիկունքում ունենալով Խուստուփ լեռան (3208) վեհաշունչ տեսարանը:

Ըստ երկրաշարժավտանգության՝ Կապան քաղաքը ընկած է չափավոր 7-8 բալ ուժգնության սեյսմիկ գոտում:

Կապանն ունի չափավոր շոգ վերընթաց տիպի կլիմա: Դա պայմանավորված է նրա՝ մերձարեւադարձային գոտում գտնվելով, ոչ մեծ բացարձակ բարձրություններով (700-800) եւ ծովափերից ունեցած զգալի հեռավորություններով: Արեգակի բարձրությունը հորիզոնական հարթության նկատմամբ տատանվում է 24,5 աստիճանից (դեկտեմբերի 22-ի կեսօրից) մինչեւ 74,5 աստիճան (հունիսի 22-ի կեսօրին): Դա ձմեռվա համար ցածր չէ, իսկ ամառվա համար զգալի է: Արեւի ճառագայթների անկման անկյան փոփոխման հետ կապված՝ տարվա ընթացքում փոփոխվում է նաեւ գիշեր-ցերեկվա տեղողությունը: Ամենաերկար ցերեկը հունիսի 22-ին է՝ տեւելով 15 ժամ 30 րոպե, որը նաեւ ամենակարճ գիշերն է՝ 8 ժամ 30 րոպե: Կապանում ամենակարճ ցերեկը դեկտեմբերի 22-ին է՝ 9 ժամ 30 րոպե: Սա նաեւ ամենաերկար գիշերն է՝ 14 ժամ 30 րոպե տեղողությամբ:

րեկան մոտ 60 օր) Գրաբանները զիջում է միայն Իջեւանին: Այդ պատճառով արեւափայլի միջին տարեկան մեծությունը բարձր չէ (2450 ժամ/ տարի): Տարվա եղանակները Կապանում լավ են արտահայտված: Դրանք իրենց օրացուցային պահից 10-15 օրով ետ են ընկնում: Միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է +12 աստիճան C:

Ամառը Կապանում համեմատաբար երկարատեւ է, չափավոր չոր ու շոգ, հատկապես հուլիս-օգոստոս ամիսներին: Առանձին տարիների տեսակետով շոգ եւ չոր երաշտային եղանակները կարող են ընդմիջվել որոտով ու կայծակով, տեղատարափ անձրեւներով, երբեմն էլ կարկտահարությամբ: Տարվա ամենատաք պահերը Կապանում հուլիս եւ օգոստոս ամիսներն են, երբ օդի օրական միջին ջերմաստիճանը բարձրանում է +23 աստիճան C-ից, իսկ երբեմն գիտարկված առավելագույն ջերմաստիճանը 39 աստիճան C է: Ամառային չոր, շոգ ու փոշոտ եղանակները պայմանավորված են հարավից՝ Իրանական բարձրավանդակից ներթափանցող արեւադարձային ցամաքային օդային զանգվածներով:

Ֆիզիկաաշխարհագրական դիրքի առումով Կապան քաղաքը գտնվում է Գրաբան արեւելյան մասում՝ ուղիղ գծով մայրաքաղաք Երեւանից 190 կմ հեռավորության վրա: Կապանի աշխարհագրական կոորդինատներն են հս-լ 39 աստիճան 10 րոպե, հար-լ 46 աստիճան 15 րոպե: Դա հյուսիսային մերձարեւադարձային աշխարհագրական գոտու տարածքն է: Կապանը հասարակածից հյուսիս է մոտ 4300կմ, իսկ հյուսիսային բեւեռից հարավ՝ 5700կմ: Նրա հեռավորությունը մոտակա արեւադարձից 1700կմ է, իսկ սկզբնական միջօրեականից՝ 3700կմ: Դա երրորդ ժամային գոտու տարածքն է:

Կապանի գոգավորության հյուսիսային ծախսիմյա մասը կազմում են Կավարտի եւ Բարաբաթունի հարավահայաց (գյուղն) լեռնաշղթաներ (Ֆրիզանոիդ) բուսականությանը ծածկված միջին բարձրությամբ լեռնաշղթաները:

Մյսպիսով Կապան քաղաքը տեղադրված է Ողջի գետի միջին հոսանքներում, նրա Վաչագան եւ Կավարտ վտակների աջափնյա ու ձախափնյա մեղ դասավորությունում, դրանց հարակից 30-40 աստիճան թեքության լեռնալանջերին, 700-1000մ բացարձակ բարձրությունների վրա: Տարածքի ընդհանուր թեքվածությունը արեւմուտքից արեւելք է:

Ըստ երկրաշարժավտանգության՝ Կապան քաղաքը ընկած է չափավոր 7-8 բալ ուժգնության սեյսմիկ գոտում:

Կապանն ունի չափավոր շոգ վերընթաց տիպի կլիմա: Դա պայմանավորված է նրա՝ մերձարեւադարձային գոտում գտնվելով, ոչ մեծ բացարձակ բարձրություններով (700-800) եւ ծովափերից ունեցած զգալի հեռավորություններով: Արեգակի բարձրությունը հորիզոնական հարթության նկատմամբ տատանվում է 24,5 աստիճանից (դեկտեմբերի 22-ի կեսօրից) մինչեւ 74,5 աստիճան (հունիսի 22-ի կեսօրին): Դա ձմեռվա համար ցածր չէ, իսկ ամառվա համար զգալի է: Արեւի ճառագայթների անկման անկյան փոփոխման հետ կապված՝ տարվա ընթացքում փոփոխվում է նաեւ գիշեր-ցերեկվա տեղողությունը: Ամենաերկար ցերեկը հունիսի 22-ին է՝ տեւելով 15 ժամ 30 րոպե, որը նաեւ ամենակարճ գիշերն է՝ 8 ժամ 30 րոպե: Կապանում ամենակարճ ցերեկը դեկտեմբերի 22-ին է՝ 9 ժամ 30 րոպե: Սա նաեւ ամենաերկար գիշերն է՝ 14 ժամ 30 րոպե տեղողությամբ:

Կապան քաղաքը ջրավազաններից զգալի հեռավորության վրա է: Նրանից դեպի արեւելք՝ մինչեւ Կապանից ծով, հեռավորությունը մոտ 200կմ է, դեպի հյուսիս-արեւմուտք՝ մինչեւ Սեւ ծով՝ մոտ 500կմ, դեպի հարավ-արեւմուտք՝ մինչեւ Միջերկրական ծով, 1000կմ են դեպի հարավ՝ մինչեւ Պարսից ծոց՝ 900կմ:

Երկրաբանական տեսանկյունից Կապանի գոգավորությունը, որի ցածրադիր մասերում Կապան քաղաքն է, Յուրայի դարաշրջանի (մոտ 170 մլն տարի առաջվա) իրաբխային-

Ըստ երկրաշարժավտանգության՝ Կապան քաղաքը ընկած է չափավոր 7-8 բալ ուժգնության սեյսմիկ գոտում:

Կապանն ունի չափավոր շոգ վերընթաց տիպի կլիմա: Դա պայմանավորված է նրա՝ մերձարեւադարձային գոտում գտնվելով, ոչ մեծ բացարձակ բարձրություններով (700-800) եւ ծովափերից ունեցած զգալի հեռավորություններով: Արեգակի բարձրությունը հորիզոնական հարթության նկատմամբ տատանվում է 24,5 աստիճանից (դեկտեմբերի 22-ի կեսօրից) մինչեւ 74,5 աստիճան (հունիսի 22-ի կեսօրին): Դա ձմեռվա համար ցածր չէ, իսկ ամառվա համար զգալի է: Արեւի ճառագայթների անկման անկյան փոփոխման հետ կապված՝ տարվա ընթացքում փոփոխվում է նաեւ գիշեր-ցերեկվա տեղողությունը: Ամենաերկար ցերեկը հունիսի 22-ին է՝ տեւելով 15 ժամ 30 րոպե, որը նաեւ ամենակարճ գիշերն է՝ 8 ժամ 30 րոպե: Կապանում ամենակարճ ցերեկը դեկտեմբերի 22-ին է՝ 9 ժամ 30 րոպե: Սա նաեւ ամենաերկար գիշերն է՝ 14 ժամ 30 րոպե տեղողությամբ:

Կապանն ունի չափավոր շոգ վերընթաց տիպի կլիմա: Դա պայմանավորված է նրա՝ մերձարեւադարձային գոտում գտնվելով, ոչ մեծ բացարձակ բարձրություններով (700-800) եւ ծովափերից ունեցած զգալի հեռավորություններով: Արեգակի բարձրությունը հորիզոնական հարթության նկատմամբ տատանվում է 24,5 աստիճանից (դեկտեմբերի 22-ի կեսօրից) մինչեւ 74,5 աստիճան (հունիսի 22-ի կեսօրին): Դա ձմեռվա համար ցածր չէ, իսկ ամառվա համար զգալի է: Արեւի ճառագայթների անկման անկյան փոփոխման հետ կապված՝ տարվա ընթացքում փոփոխվում է նաեւ գիշեր-ցերեկվա տեղողությունը: Ամենաերկար ցերեկը հունիսի 22-ին է՝ տեւելով 15 ժամ 30 րոպե, որը նաեւ ամենակարճ գիշերն է՝ 8 ժամ 30 րոպե: Կապանում ամենակարճ ցերեկը դեկտեմբերի 22-ին է՝ 9 ժամ 30 րոպե: Սա նաեւ ամենաերկար գիշերն է՝ 14 ժամ 30 րոպե տեղողությամբ:

Կապանն ունի չափավոր շոգ վերընթաց տիպի կլիմա: Դա պայմանավորված է նրա՝ մերձարեւադարձային գոտում գտնվելով, ոչ մեծ բացարձակ բարձրություններով (700-800) եւ ծովափերից ունեցած զգալի հեռավորություններով: Արեգակի բարձրությունը հորիզոնական հարթության նկատմամբ տատանվում է 24,5 աստիճանից (դեկտեմբերի 22-ի կեսօրից) մինչեւ 74,5 աստիճան (հունիսի 22-ի կեսօրին): Դա ձմեռվա համար ցածր չէ, իսկ ամառվա համար զգալի է: Արեւի ճառագայթների անկման անկյան փոփոխման հետ կապված՝ տարվա ընթացքում փոփոխվում է նաեւ գիշեր-ցերեկվա տեղողությունը: Ամենաերկար ցերեկը հունիսի 22-ին է՝ տեւելով 15 ժամ 30 րոպե, որը նաեւ ամենակարճ գիշերն է՝ 8 ժամ 30 րոպե: Կապանում ամենակարճ ցերեկը դեկտեմբերի 22-ին է՝ 9 ժամ 30 րոպե: Սա նաեւ ամենաերկար գիշերն է՝ 14 ժամ 30 րոպե տեղողությամբ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԻԼԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ.

«Քաղաքի դեմքին բնորոշ առանձնահատկությունը, նախեւառաջ, սոսիներն են»

Սկիզբը՝ էջ 10

քաղաքապետարանը ծրագիր էր ներկայացնում կառավարություն, կառավարությունը ծրագիրը հաստատում էր եւ ինչ-որ չափով ֆինանսավորում: Մի քանի տարի է՝ ծրագիր ենք կազմում, ներկայացնում, բայց կառավարությունը չի հաստատում: Թե՛ տեղական բյուջեի, թե՛ միջազգային կազմակերպությունների միջոցներով վաչագան գետը մաքրել ենք, բայց Ողջի գետը մոտ 20 տարի չենք մաքրել, իսկ նախկինում մաքրել են մինչեւ Կարեն Դեմիրճյանի անվան հրապարակի մերձակա կամրջի հատվածը: Այդտեղից մինչեւ քաղաքի ծայրամասը ոչ մի անգամ չի մաքրվել:

– Մի քանի խոսք, խնդրեմ, բնակչինարարության հեռանկարների մասին:

– Նախ ասեմ, որ քաղաքը ըստ թաղամասերի պետք է գոտիավորենք: Ունենք Կապանի կենտրոնական հատվածի եւ Ծինարարների թաղամասի գոտիավորումները: Մանրամասնեմ. գոտիավորումը ցույց է տալիս, թե տվյալ թաղամասում քանի հարկանի շենքեր պետք է կառուցել, նաեւ դպրոց, մանկապարտեզ եւ այլն: Մոտակա մի քանի տարվա ընթացքում համայնքի բյուջեի միջոցների հաշվին «Հայնախագիծ» ԲԲ ընկերությանը կպատվիրենք նաեւ մնացած թաղամասերի գոտիավորման նախագծերը: Մաս-

նագետները կզան եւ այստեղ կաշխատեն: Ինչ վերաբերում է բնակչի ծրագրի գարգացման հեռանկարներին, ասեմ՝ այսօր բնակչության թվաքանակը հորիզոնական Միության տարիների համեմատ նվազել է: Այդ ժամանակ բնակելի շենքերի կառուցում էր նախատեսվում Նժդեհի փողոցի անհատական տների տեղում: Բայց այսօր դրա կարիքը չկա. եղածը պահպանելու խնդիր կա:

– Այդուհանդերձ Կապանում անհատական բնակարանային շինարարական աշխատանքներ են ընթանում, ինչն ուրախալի է:

– Մոտ 10-12 տուն է կառուցվում, բայց թույլտվություն տվել ենք ավելի շատ մարդկանց: Մենք, առհասարակ, ողջունում ենք անհատական բնակչինությունը:

– Այսպիսի մի հարց եւս. իսկ բազմաբնակարան շենքերի կառավարումն այսօր ինչպե՞ս է իրականացվում:

– Համատիրությունները պարտավոր են բազմաբնակարան շենքերի հարցերով զբաղվել՝ քաղաքացիներին հավաքված վարձավճարի հաշվին: Բայց նորություն ասած չեմ լինի, եթե նշեմ, որ համատիրությունները արդյունավետ չեն գործում: Իսկ առկա խնդիրներն էլ համայնքի շնորհիվ են լուծվում: Օրինակ՝ այսօր Կապանի 252 բազմաբնակարան բարձրահարկ շենքերից 104-ը հարթ տանիք ունի, 148-ը՝ լանջավոր:

19 հարթ տանիք է մնում նորոգելու, մնացածները նորոգվել են 33 կառավարության, «Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության, տեղական բյուջեի միջոցների հաշվին՝ համաֆինանսավորմամբ: Այս տարի եւս պետք է շինվեն հատկացումներով մոտ 150 մլն դրամի տանիքների նորոգման աշխատանք կկատարվի: Այսօր բազմաբնակարան շենքերի բնակիչները չեն ընկալում, որ տանիքը, վերելակը, մուտքն իրենց սեփականությունն են:

– Կապանի կենտրոնական հատվածում ընթացող կամրջաշինության աշխատանքների մասին ի՞նչ կասեք:

– Կամրջաշինությունն այն հարցերից է, որ պիտի լուծվի գործարար-բարերարների միջոցով: Մարզկենտրոնի կամուրջը կայսրվա պահանջներին չեն համապատասխանում: Ծնունդով կապանցի ռուսաստանաբնակ Լեւոն Ստեփանյանը ցանկություն է հայտնեց քաղաքի կենտրոնական հատվածի կամրջի տեղում նոր կառուցել (Արամ Մանուկյան-Հունան Ավետիսյան): Ժամանակակից, գեղեցիկ հետիոտն անցում կլինի՝ 12մ լայնությամբ. հողի մակերեսը մի քանիսի հարյուր մետր կլինի, հատուկ անցումներ կլինեն նաեւ հաշմանդամների համար: Կամուրջը կլինի քաղաքապետարանի հաշվեկշռում, իսկ սեփականատերն իր ցանկությամբ կարող է կամրջի աջ եւ ձախ կողմերի հատվածներում առեւտրի կարիքները:

րում առեւտրի սրահներ բացել: Ցանկություն ունենք եկեղեցու տարածքի բարեկարգման հետ մեկտեղ եւս կամուրջ կառուցել (մշակույթի կենտրոն-Սուրբ Մ.Մաշտոց եկեղեցի): Ըստ նախագծի՝ կամրջի լայնությունը մոտ 12մ կլինի:

– Մեր գրույցի վերջին հարցը. ըստ Ձեզ՝ Կապանի դեմքին բնորոշ ճարտարապետական առանձնահատկությունները որո՞նք են:

– Կարծում եմ՝ մեր քաղաքի դեմքին բնորոշ առանձնահատկությունը նախեւառաջ սոսիներն են: Այսօր Կապան այցելած գրեսալոգիկները հիանում են սոսիներով: Ասում են, որ կարծես անտառում լինեն: Կապանի շենքերը ճարտարապետական առումով ընդամենը տիպային կառույցներ են: Նույնիսկ Դավիթ-Բեկ թաղամասի փոփոխական հարկերով շենքերը, որպես շինարար ասեմ, սեյսմիկ տեսանկյունից ապահով չեն, թույլ կառույցներ են: Հիմքից պետք է ամրապնդվեն: Իսկ տուֆը լավ է շինության ներսից պատ շարելու համար, բայց այսպես քաղաքին մի տեսակ փոշոտ տեսք է տալիս: Այդ տարիներին ոչ մեկին չէր հետաքրքրում շենքերի արտաքին տեսքը, քանակն էր կարեւոր: Այդպես է կառուցվել Կապանը, եւ անհատական կառուցապատումը չի խրախուսվել:

ՍԱԹԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԿԿ Կապանի շրջկոմի առաջին քարտուղարները

Table with 2 columns: Name and Term (Year-Range). Includes names like Սուրեն Թովմասյան, Վանյա Ղազարյան, Հակոբ Թոխունց, Աշոտ Սարգսյան, Երվանդ Մելքոնյան, Վլադիմիր Այդինյան, Ասատուր Մանասարյան, Մուշեղ Համբարձումյան, Արշավիր Գասպարյան, Վազգեն Հարությունյան, Ռաֆիկ Մինասյան, Ալյոշա Հակոբյան, Ռուանդ Ղոնյան, Կարեն Մկրտչյան.

Կապանի քաղաքապետի գործկոմի նախագահները եւ քաղաքապետերը

Table with 2 columns: Name and Term (Year-Range). Includes names like Սուրբան Սահակյան, Մակիչ Սարգսյան, Սեդրակ Սիմոնյան, Կատյա Դավթյան, Մակար Աղաբաբյան, Խուրշուդ Գեւորգյան, Արտաշես Հարությունյան, Դավիթ Պետրոսյան, Հարություն Գրիգորյան, Կարապետ Ալմազյան, Սուրեն Սարգսյան, Հարություն Հարությունյան, Լեւոն Պողոսյան, Աշոտ Հովհաննիսյան, Վարոս Միրզոյան, Բորիս Հարությունյան, Ասատուր Ավետիսյան, Կիմ Խաչատրյան, Ալյոշա Գասպարյան, Համլետ Մինասյան, Արարատ Գեւորգյան, Ռադիկ Սարգսյան, Գագիկ Աբաջանյան, Արմեն Կարապետյան.

փոխում են մառախլապատ, ցուրտ եւ ձնառատ օրերը: Դա պայմանավորված է Կենտրոնական Ասիական օդի բարձր ճնշման մարզի (անտիցիկլոն) եւ միջերկրածովյան ու արեւմտաեվրոպական օդի ցածր ճնշման մարզի (ցիկլոն) փոփոխական ազդեցություններով:

Գարունը տեւական է, ամպամած, հաճախ մառախլապատ ու խոնավ: Գարնան սկիզբը ցուրտ է: Վերջին գարնանային ցրտահարությունները լինում են մարտի վերջից ապրիլի վերջը ընկած ժամանակահատվածում: Առավել խոնավ են մայիս-հունիս ամիսները: Անձրեւներն այդ ժամանակ տեւական են ու հորդառատ:

Կապանի աշունը հաճելիորեն տեւական է ու տաք: Առաջին աշնանային ցրտահարությունները կարող են լինել հոկտեմբերի 10-ից դեկտեմբերի սկիզբը ընկած ժամանակահատվածում:

Ամառնամանից օրերի թիվը տարվա մեջ տատանվում է 164-238-ի միջեւ: Ուշ գարնանային եւ վաղ աշնանային ցրտահարությունները զգալի վնասներ կարող են հասցնել գյուղացիական տնտեսություններին:

Տեղումների միջին տարեկան քանակը Կապանում 550-600մմ է: Դրանք առավելապես անձրեւային տեսք ունեն, որոնք լինում են գարնանը եւ աշնանը, իսկ նվազագույնը ձմռանը է՝ ոչ մեծաքանակ եւ ոչ էլ տեւական ձնածածկույթով: Ողջիի ծախսվելու հատվածում տեղացած ձյունը 1-2 օրից հալվում է, բայց աջափնյա մասում այն կարող է ավելի տեւական լինել: Գարնան վերջին եւ ամռանը թափվող տեղումները հաճախ տեղատարափ բնույթ են կրում, ինչը հանգեցնում է ուժեղ հեղեղումների եւ սելավների առաջացմանը: Դրանք մեկ անգամ չէ, որ ավերածություններ

են պատճառել Կապանի ճանապարհներին, շինություններին եւ շրջակա հողատարածքներին: Այդ պատճառով հիշարժան են 1960թ., 1968թ., 2006թ. սելավային ցեխաջրահոսքերը Ողջի, Կավարտ, Վաչագան եւ Աջանան գետավազաններում:

Կապանում տեղումների զգալի մասը պայմանավորված են մի կողմից ամբողջ տարին տիրապետող օդային զանգվածների արեւմտյան հոսքով, իսկ մյուս կողմից գարնանն ու աշնանը դրանց գունարկով Կասպից ծովից փչող օդային հոսանքներով: Վերջիններիս խոնավաբեր ազդեցությունը զգալի է միայն 3-7 հյուսիսային եւ հարավ արեւելյան մասերի հողմահայաց լեռնալանջերին:

Ձրագրական տեսակետից Կապան քաղաքը տեղադրված է Արաքսի ծախսկողմյան առաջին կարգի վտակ Ողջի եւ Նրա վտակներ Վաչագան, Կավարտ ու Աջանան գետերի գետախառնուրդի շրջակայքում: Այս գետերն ունեն խառը սնում՝ ձնհալք անձրեւային սնման գերազանցությամբ: Հոսքի ռեժիմն այլ գետերում անկայուն է, հորդացումները պարբերաբար կրկնվում են ապրիլ-հունիս ժամանակահատվածում, իսկ սակավաջրությունը՝ ամռանն ու ձմռանը: Քանի որ արագահոս են այս գետերը (ուսեն հունի մեծ թեքություն), ակտիվ է նրանց էրոզիոն գործունեությունը: Հատկապես հորդացումների ժամանակ նրանց տղմուտությունը բարձր է, հասնելով 200-250զ/մ-ի, իսկ Ողջիի տարեկան կարծր հոսքը հասնում է մոտ 70 հազ.տ:

Ըստ ջրառատության՝ Ողջին 2,5 անգամ գիջում է Որոտանին եւ մոտ 4 անգամ 33 անձնաջրառատ գետ Դեբեդին: Կապան քաղաքի տարածքում Ողջի գետի միջին տարեկան ծախսը կազմում է 9,6 խոր.մ/վրկ: Գետը ոռոգիչ, էներգետիկ եւ տեխնիկական ջրամատ-

կարարման դեր ունի:

Ստորգետնյա ներծծումը զգալիորեն զիջում է մակերեսային հոսքին: Դրա պատճառը մի կողմից մեծ թեքություններն են, իսկ մյուս կողմից՝ ծալքաբեկորավոր լեռնաշղթաները: Վերջին փաստը նպաստում է քաղաքի հարավային մասում սողանքային երեւույթների ակտիվացմանը:

Ողջի գետահովտի մաս կազմող ափամերձ դարավանդներում գետնաջրերի մակարդակը հատկապես գարնանն ու աշնանը զգալիորեն բարձրանում է: Դա հանգեցնում է այդտեղ կառուցված շինությունների նկուղային հարկերի ողողմանը:

Քաղաքի մերձակա տարածքներում քիչ թե շատ նշանակալից աղբյուրային էլեբեր բացառությամբ մնում են, իսկ որոշ սակավաջրու աղբյուրներ էլ ժամանակի ընթացքում մնացել են ճանապարհների եւ շինությունների տակ, մասնավորապես Կապանի կենտրոնում գտնվող հին աղբյուրը:

Լանդշաֆտային տեսանկյունից Կապանի տարածքը չոր լեռնատափաստանային եւ լեռնանտառային վերընթաց գոտիների սահմանն է: Քաղաքի մերձակայքի հողերը հիմնականում լեռնանտառային գորշ եւ դարչնագույն հողեր են, իսկ ավելի ցածրադիր մասերում նաեւ լեռնաշագանակագույն հողեր կան: Մրանք զգալի հումուս պարունակում են ոռոգման դեպքում բարձր բերք ապահովող հողեր են, որոնց վրա մշակվում են հացահատիկ, բանջարաբոստանային մշակաբույսեր, անասնաբեր, խոտաբույսեր, նաեւ խաղող ու ջերմասեր պտղատուներ՝ թթենի, ընկուզենի, թզենի եւ այլն:

Կապանի հարավային մասում ձգվող լեռների լանջերն անտառածածկ են: Ավելի ցածրադիր մասերում անտառը վերափոխված է

վարելահողերի, խոտհարքների եւ արոտավայրերի: Գետահովտների ամենացածրադիր մասերը զբաղեցված են բանջարանոցներով, այգիներով, մոշուտներով:

Համեմատաբար ավելի աղքատ է Ողջի գետի ծախսվելու մասի բուսածածկը: Այն ներկայացված է լեռնաջրասեր (ֆրիգանդի) բուսականությամբ, որը տեղ-տեղ վերածվում է փշոտ մացառուտների՝ կազմված մասրենու, մոշի, գաշի, սզուկ եւ այլ թփերից: Գարնանը ժողովրդի կողմից «գյունե» կոչվող այդ լեռնալանջերին տարածվում են կարծակյաց խոտաբույսեր, բազմատեսակ ծաղիկներ, որոնց մեծ մասը շոգից ամառվա սկզբին չորանում է:

Լեռնային լանդշաֆտներին բնորոշ նյութի միզրացիայի եւ կուտակման բնույթի տեսանկյունից Կապան քաղաքի տարածքը ընդգրկում է տարանցիկ գոտու ցածրադիր մասը: Այն մի կողմից կրում է ավելի վեր տարածվող ինքնավար լանդշաֆտների ազդեցությունը, որովհետեւ հոսող ջրերի, օդային զանգվածների ծանրության ուժերի ազդեցությամբ անընդհատ վերից վար նյութի տեղաշարժ է կատարվում: Բայց մյուս կողմից էլ այս տարածքն իր ազդեցության տակ է պահում ավելի ցածրադիր ենթակա գոտու լանդշաֆտներին, որովհետեւ տեղափոխվող նյութերի մի մասը ժամանակի ընթացքում շարունակվում է իր շարժը՝ իրեն միացնելով նաեւ տեղում առաջացած նյութերը:

Կապանի՝ նման տարանցիկ գոտում գտնվելը պայմանավորում է քաղաքի մի շարք տնտեսական եւ բնապահպանական խնդիրներ, որոնց լուծման համար կարեւոր է նաեւ վերոհիշյալ առանձնահատկությունների հաշվի առնելը:

ՅՈՒՆԵՍԿՈՒ ԿԱՊԱՆ

Հալիձոր

Հալիձորի բերդ

Այուրեղյակի 17-18-րդ դարերի ճարտարապետական անսամբլների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղում Հալիձորի բերդը (Հալիձորի Ա.Աստվածածնի Կուսանոց անապատը) կրոնական համալիրի եւ ամրոցի հորինվածքների հետաքրքիր զուգակցման շնորհիվ:

Կառուցված լինելով 17-րդ դարի առաջին կեսին Աստվածածնի կենտրոնում՝ Հալիձորի անապատը նշանավոր դարձավ 18-րդ դարում՝ որպես Դավիթ-Բեկի ազատագրական պայքարի գլխավոր ամրոցը եւ Դավիթի անկախ իշխանության կենտրոնը: Այս է պատճառը, որ գրականության մեջ հաճախ շփոթում են նրա կառուցման ժամանակաշրջանը եւ նշանակությունը. ընդունված է այն կարծիքը, որ Հալիձորի համալիրը կառուցել է Դավիթ-Բեկը 1720-ական թվականներին որպես բերդ: Սակայն դա ճիշտ չէ: Հալիձորի Կուսանոց անապատը հիշատակվում է դեռ 1653թ., երբ «... Անապատիս մայրապետ Չոփիսիմեն... ընդօրինակել գիտարկվու մեկնութիւն ժամագրոց...»:

1668թ. անապատ այցելել է Ջաքարիա Ազուլեցին՝ «...գնացինք Յալիձորում Կուսանոց անապատը: Սորայ հայրն է Տեր Սիբայել: Այս անապատում կեր Յ կուսանք ապաշխարող»:

Հալիձորը նորից հիշատակվում է 1711 թվականին՝ Տաթևի վանքի առաջնորդ Առաքել վարդապետի եղբունական սպանության առթիվ:

1723թ. Դավիթ-Բեկը Հալիձորի անապատը դարձնում է ազատագրված Դավիթի կենտրոն՝ վերակառուցելով այն անառիկ ամրոցի: Սակայն այդ տարիներին Հալիձորը մտնում է եւ որպես մենաստան: 1727թ. թուրքական բանակի կողմից Հալիձորի պաշարման ժամանակ պաշտպանությանը մասնակցել են «... ամենայն ժողովրդականին եւ կուսանք (զի էր անդ նաեւ Սեմարան ինչ կուսանաց...)»:

Դավիթի իշխանության անկումից հետո Հալիձորը դառնում է Սելիք-Փարսադանյանների «տոհմային բոսն» մինչև նրանց Բեյս գյուղ տեղափոխվելը: Այժմ երբեմնի հզոր բերդից շատ քիչ բան է պահպանվել, եւ Դավիթի անկախ իշխանության կենտրոնի բազմաթիվ կա-

ռուցվածքներից ավերակներ են մնացել՝ կիսով չափ կամ լրիվ հողածածկ:

Համակառույցը հատակագծում ունի անկյունոտ քառակույտ ձև, որը բխում է տեղանքի պայմաններից: Ունի երկու մուտք հարավային եւ հյուսիսային պարիսպներում: Անսամբլում գերիշխողը թե տեղադրությամբ եւ թե չափերով եկեղեցին է, որն անմշակ բազալտի խոշոր քարերից շարված բարձր պատերով, լուսամուտների մեղ ճեղքերով ավելի ամրոցի է նման, քան պաշտամունքային կառուցվածքի: Այդ տպավորությունն ուժեղանում է երկհարկ շինությունների ծավալներով, որոնք հյուսիսից ու հարավից կից են եկեղեցուն եւ վերջինիս հետ միասնական հորինվածք են կազմում: Այս առումով Հալիձորի բերդը տարբերվում է 17-18-րդ դարի մյուս մենաստաններից, որոնց եկեղեցիները համակառույցի մեջտեղում են եւ առանձին:

Հալիձորի եկեղեցին ուղղանկյուն, արեւելյան մասում արտիդով եւ վերջինիս երկու կողմերում ավանդապատերով կառուցվածք է՝ ծածկված կիսաշրջանաձև թաղով, առանց թաղակիր կամարների:

Եկեղեցին չունի գավիթ կամ սրահ՝ նման այդ տիպի կառուցվածքների՝ միջնադարում տարածված հորինվածքներին: Այստեղ եկեղեցու հյուսիսային եւ հարավային կողմերին կից երկհարկ շինությունների առաջին հարկերը, փաստորեն, գավիթների դերն են կատարում, եւ եկեղեցու երկու մուտքերը բացվում են նրանց մեջ: Եկեղեցուց հյուսիս կանգուն է ուղղանկյուն հատակագծով չորս մույթերով զմբեթածածկ մի շինություն, որը հավանաբար կառուցվել է որպես դամբարան: Նման հորինվածքով դամբարաններ կան Աշտարակում եւ Սպիտակում, որոնք, սակայն, ավելի ուշ են կառուցված (19-րդ դար): Ամրոցն ունի շրջանաձև հատակագծով (արտաքին տրամագիծը՝ 5մ) մեկ բուրգ հարավ-արեւմտյան անկյունում:

Հարավային պարսպին դրսից կից կա ուղղանկյուն հատակագծով ոչ մեծ մի շինություն: Սա որպես աշտարակ չէր կարող ծառայել, որովհետեւ պարսպապատից էլ ցածր է (երկրորդ հարկի հետքեր չկան) եւ չի հաղորդակցվում բերդի հետ: Պետք է կարծել, որ սենյակը կառուցված է ոչ թե 18-րդ դարի նորագույնների ընթացքում, այլ ավելի վաղ եւ մենաստանի պահակատունն է եղել:

ՄՈՒՐԱԳ ԶԱՍՐԱՌՅԱՆ



Լուսանկար՝ Ա.Ազուլեցի



Լուսանկար՝ Ա.Ազուլեցի



Լուսանկար՝ Ա.Ազուլեցի

Վերականգնվում է Հալիձորի բերդը

Մինչեւ վերջերս Հալիձորի բերդը զրեթե անբողջությամբ հողածածկ էր, անառիկ բերդի տարածքում գտնվող եկեղեցիների միայն տանիքներն էին հազիվ նկատելի, այն էլ՝ ամբողջությամբ խտածածակ: Բայց արդեն երկու տարի է, ինչ պետություն միջոցներով Հալիձորի բերդում իրականացվում են վերականգնողական եւ ամրակայման աշխատանքներ: Պատմական միջավայրի պահպանության Այուրեղյակ մարզային ծառայության պետ Աստղիկ Հակոբյանի տեղեկատվությամբ բերդի երկու եկեղեցիների՝ Սուրբ Աստվածածին եւ մենավոր եկեղեցու մասնակի վերականգնումն արդեն ավարտվել է: Հալիձորի բերդի վերականգնողական աշխատանքները ղեկավարող Աշոտ Հարությունյանը ասում է, որ իրենց համընդարձակ է վերականգնողական աշխատանքներ տանել միայն բերդի այն հատվածներում, որտեղ պեղումներ են արվել: «Հազարավոր խորանարդ մետրերով հող ենք հանել: Այս կացարաններն ամբողջությամբ հողի տակ էին: Նույնիսկ եկեղեցու տանիքում վերականգնման աշխատանքներ տանելիս մի քանի սրահ հանդիպեցինք՝ իրենց թունրատեղերով: Հետաքրքիր լուծումներ ունեն այստեղի սրահները, մի քանի կացարանների միջով անցնելիս զարմանալիորեն հայտնվում են ներքնահարկում»: Ճարտարապետական այս հրաշալի կառույցի մասին իր տպավորությունը ներկայացնելուց հետո շինարար Աշոտը այցելուներին ծանոթացրեց իրենց կատարած աշխատանքներին, վերականգնված սրահների միջով ուղեկցեց եկեղեցիներ, ցույց տվեց բերդի երկու՝ հյուսիսային եւ հարավային դարպասները, դիտակետը: Մի խոսքով, իրենց համընդարձակ աշխատանքներն ավարտին են հասցրել եւ պատրաստական են հետազայում էլ շարունակել վերականգնողական աշխատանքները, բայց դա էլ՝ միայն պեղումներ անելուց հետո: Հալիձորի բերդի նախկին տեսքը վերականգնելու համար դեռ անելիքներ շատ կան: Իսկ այցելուների հոսքը պատմական այս վայր արդեն նկատվում է: Բերդի երկու եկեղեցիների զմբեթների խաչերի տեղադրման եւ օծման արարողությանը, որը կատարել է Կապանի եւ Քաջարանի հոգեւոր հովիվ Գալուստ վարդապետ Դարբինյանը, ներկա են եղել «Երկիր եւ մշակույթ» կազմակերպության կամավորները՝ Անգլիայից, Ֆրանսիայից եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից:

Հուսանք՝ պատմական Հալիձորն ամբողջությամբ կվերականգնվի, ինչպես դարեր շարունակ, այնպես էլ այսօր, իր հպարտ ու անառիկ տեսքով բոլորիս աչքի առաջ կհառնի՝ աշխարհի բոլոր ծայրերից իր մոտ իրավիճակով բազմաազարգրասաշրջիկների:

ՄԵՐԻ ՄՈՐՈՍՈՆՅԱՆ

Դիվան Բաղաբերդի

Քանի որ Բաղաբերդի Կրեդոյան վերաբերյալ պատմագրության մեջ կան իրարամերժ եւ ոչ համոզիչ տեղեկություններ, գգուշավոր քննության են հրավիրում գիտականերին, հայրենի երկրամասի պատմության սիրահարներին, պատմիկ հայրենագետներին: Այդ նպատակով ի մի բերեցի եւ թերթին եւ փրամադրում սկզբնաղբյուրների, հետազոտողների հիմնական փաստարկներն ու եզրահանգումները: Թերթի սիրույն՝ շահագրգիռ ընթերցողը կարող է օգտվել մեր դպրոցի հայրենագիտական աշխատարանի հնարավորություններից եւ կապի մեջ լինել 091-513-514 հեռախոսահամարով: Հուսամ, որ այս լրագրային «նորահնար ժանրը» ի հայտ կբերի թերթի նոր բարեկամներ: Բննարկման արդյունքները կընդհանրացնենք մի հրատարակմամբ:

Մովսես Կաղանկարվազի, 7-րդ դար

Ի սկզբնեւ Շապուհի թագավորը պատերազմը վերջացնելուց հետո եկավ ու տեսավ պատահած աղետը, ցասունակից հրաման տվեց, որ իր բոլոր զորքերը մտնեն Այունիք եւ գերեն ասուն ու անասուն... Ճակատամարտ են տալիս Բաղաբերդի դեմ, որտեղից քարեր էին գլորում զառիվայրով եւ բոլորին ոչնչացնում: Կրկին, երրորդ անգամ ավելի ուժեղ ճակատամարտ տվեցին, բայց ոչինչ չկարողացան անել. ընդհակառակը, շատերը կոտորվեցին: Թագավորը զայրանալով կամեցավ մարտը էլ ավելի սաստկացնել: Այդ ժամանակ բոլոր մեծամեծներն ընկան նրա ոտքերն ու աղաչեցին, որ այլեւս ճակատամարտ չտան, այլ ամրոցի շուրջը քանդեն: Այդ ժամանակ Անդրկը, հարմար պահ ընտրելով, թողնում է բերդը ու մեծ հարստությամբ անցնում Բյուզանդիա:

Սպեփանոս Օրբելյան, 1297թ.

1. Տասներորդը՝ Չորք գավառը, որ ունի Բաղաբերդ ամառանային ամրոցը, եւ այժմ կոչվում է Կապան:
2. Այունիքի անառիկ ամրոցները, որ անհասանելի են մարդկանց մուտքին, եւ միայն տերը կարող է մատչելի դարձնել՝ Բաղաբերդ. դա այն է, որ Սիսակի սերունդներից մի մարդ՝ Բաղակ անունով, այս գավառը ստանալով ժառանգության բաժին, Բաղակի ապառաջը շինում է ամրոց, որը կոչվում է Բաղակի քար, բերդն ամրացնում է եւ անվանում Բաղաբերդ. գավառն էլ իր անունով կոչվեց Բաղաց գավառ:
3. Եվ բերելով անհաշիվ ավարը՝ ամբողջը հավաքեցին Բաղաբերդում: Եվ բոլոր գավառների հացի, խոտի, հարդի պաշարները, ամբողջ գինին, յուղը, մսացուները, մեղրը, տեսակ-տեսակ մրգերը՝ անհամար կենսապաշար, ինչպես նաեւ հեծե-լազորի սարքերն ու զենքերը կենտրոնացրին բերդում:
4. Ապա Շապուհ արքան հրամայեց, որ դրանից ավելի շատ, կրկնապատիկ զորքեր գան Պարսկաստանից: ... Եվ ինչպես առաջին, նույնպես եւ այս երկրորդ անգամ պարսաքարերով ու վեճերի գլորումով պարսկական զորքի անհամար բազմությանն ամբողջովին դիպարավալ արեցին: Շապուհը նորից ուրիշ զորք գումարեց՝ դրանից եռապատիկ ավելի ու հրամայեց սաստկացնել պատերազմը: Կարգադրեց վերջապահներ թողնել եւ սասց. «Եթե մեկը ետ դառնա, սպանեցեք»: Սրանք էլ նույն ձևով, ինչպես առաջին, երկրորդ, այնպես եւ այս երրորդ անգամ, վեճերով ու պարսաքարերով ջախջախվելով առհասարակ ոչնչացան:
5. Ոմն Վահան՝ Չազիկ իշխանի որդին եւ Ջեւանշերի եղբայրը... շատ ու խիստ ճգնություններից հետո գալով այն բարձր լեռան ստորոտը, որի վրա է Բաղաբերդի անառիկ ամրոցը, Աճանանի դիմաց՝ գտնում է մի հարթ տեղ, շատ հարմար... սկսում է եկեղեցու շինարարությունը: ... Վա-

Ռոբերտ Էջմուցյանի «Վեճերը Եւայրվանից»-ում Եւայրվանիցի գավառին է:

Վարդան Արեւելցի, 13-րդ դար

1166-1169թթ. Ելտկուզի զորքերը գրավեցին թագավորության նշանավոր բերդերից Գրհամը, Գեղին եւ Կաթավաբերդը:

Հայ ժողովրդի պատմություն, հ.3, 1976


1170թ. սելջուկները պաշարեցին թագավորության վերջին հենակետը՝ Բաղաբերդը, որտեղ գտնվում էր Յասան թագավորը: Որոշ ժամանակ անց Բաղաբերդի վիճակը դարձավ օրհասական: Յասան Գեռաբարեցին բերդապահներ կարգելուց հետո իր ընտանիքի հետ գիշերով հեռանում է հաչեն՝ դեպի իր հայրենական կավածքը:

Յ.Ութմազյան, Սյունիքը 9-10-րդ դարերում, 1958

ցիք Դավիթ Բեկի բերդ անունն են տալիս... գտնվում է գրեթե Ջրախորի հանդեպ, հազիվ մի կես-երեք քառորդ կիլոմետր հեռավորության վրա, գետի հոսանքով վեր, դեռ չհասած Գեղվա գետի բերանին... Այստեղ երկրակեղեւի հուժկու մատվածների շերտերը շրջված են եւ կանգնեցրած են գրեթե ուղղաձիգ հյուսիսից հարավ ուղղությամբ Ներքին Գիրաթաղ գյուղի արեւմուտքով... Այս ժայռերն է, որ պատմագիրը հիշում է որպես Բաղակի քար:

ՅՍՅ, հ. 2, 1976

Բաղաբերդը գտնվում է Դավիթ Բաղաբերդի դեպի արեւմուտք՝ Քաջարան տանող մայրուղու վրա, Ողջի գետի ձախ ափին, Դավիթ-բեկ բանավանի մոտ: ... Բաղաբերդի հյուսիսարեւելյան միակ մուտքին թշնամին կարող էր մոտենալ միայն անկյան տակ:



6. 1103 թվականին, մի օր, երբ քաղաքացիներն անհոգ դրության մեջ էին... անիծյալ Չորքմանն իր վրեժը լուծելու համար անսպասելիորեն հարձակվեց Կապան քաղաքի վրա: Նախ՝ բազմաթիվ հետեսակ ծեղրամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժու լեռան գլուխը եւ հեղեղատի մեծ հունով իջան քաղաք. քանի որ այդ տեղը պարսպափակված չէր... Սկսեցին կոտորել Ջիտաթաղի կողմից: Նրանք բացեցին քաղաքի դարպասը, որ նայում էր խնձորոզլիկին: Բոլոր զորքերը մտան ու ջարդեցին, կոտորեցին ամբողջ բնակչությանն առհասարակ: Սակայն բերդի նկատմամբ ոչինչ չկարողացան ձեռնարկել եւ ետ դարձան իրենց տեղը:
7. Չորք գավառի՝ Տաթեւի վանքին հարկատու գյուղերը. Բաղաբերդ-12, Տիմիր-12, Ծաղթանու-6, Գեղովանք-20, Բեխորոտ-8 եւ այլն:
8. 1126թ. եկավ ամիր Չարունը եւ բնաջնջեց Կապանի տունն ու Արեւիք գավառը, գրավեց Կաթավաբերդն ու Բաղակաքարը:

9. Իսկ երբ լրացավ 1151 թվականը, եւ սկսվեց առաջին տարին, Շիրուտ բերդը կողոպտեց թուրքերի ճարպիկ ցեղը, 1157 թվականին էլ Մեղրին հափշտակեցին:
10. 1170թ. ... բազմաքանակ զորքերով եկավ, բայց չկարողացավ ոչինչ անել: Այնուհետեւ խաբեական խոսքերով խաբեց աչաղվացի պարզամիտ քրիստոնյա մարդկանց ու նրանց միջոցով նախ գրավեց Կկոց քարը, ապա գիշերը նույն մարդկանց միջոցով հափշտակեց եւ Բաղաբերդը, որը գրավելով սաստիկ կոտորած արեց: Եվ քանի որ այն անհաղթահարելի ամրություն ուներ, բոլոր վանքերից այնտեղ էին կուտակել սրբությունները, գրքերը, եկեղեցական սպասքները, առավելապես Տաթեւի փարթան ու հարուստ աթոռի անհամար եւ անմահ սրբություններն ու եկեղեցական սպասքները, ոսկե եւ արծաթե խաչերը, հիշատակային իրերը՝ զարդարված անգին ակներդներով, անհամար մարգարիտներով: Այնտեղ ամբարված էին շատ Կուտակարաններ՝ թվով ավելի քան 10 հազար: Դրանք բոլորն էլ գերի տարվեցին եւ ցիրուցան եղան երկրի երեսին:

Վահանը... Բաղաբերդի հանդեպ մի հարթության վրա կառուցում է մի վանք եւ իր անունով կոչում Վահանավանք:

Ղեւոնդ Ալիշան, 1893

... ուրանօր յախելէ գետոյն Կապանայ խնդրելի են երկրքին զլխաւոր տեղիք սորին, որք ըստ ոչ բաղդի ոչ նշանակին ի տեղացոյց տախտակի. յայտ է զի աւերակք իցեն, այսինքն Բաղաբերդն կամ Բերդն Բաղայ եւ Կապան քաղաք, երկրքին եւս անուանատուք ողջոյն զաւառաց...

Ռաֆֆի, Դավիթ Բեկ, 1980

Նա տեսավ Հալիժորի բերդը, իսկ նրա հանդեպ՝ Աչաղու բերդը: ... Հիշյալ երկու բերդերի միջով անցնելով, նա մտավ Բաղաբերդ քաղաքի ավերակների մեջ: ... Բաղաբերդը իսկապես դրած էր մի քարեղեն սնդուկի մեջ:

Սպեփանոս Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, 1969

Բաղաբերդը, որին այժմ տեղա-

... 1126-ին սելջուկները Ամիր-Յասանի առաջնորդությամբ գրավել են Բաղակու քարը:

Տեղանունների բառարան, հ.1, 1986

Բաղաբերդի ավերակներն այժմ կարելի է տեսնել Ողջի գետի եւ նրա ձախակողմյան Գիրաթաղ վտակի անկյունում, Դավիթ Բեկ բանավանի մոտ... Ողջի գետի հունից 200մ բարձրություն ունեցող ձախակոյնյա լեռան վրա:

Պրոֆ. Թ.Յակոբյան, Սյունիքի թագավորությունը, 1966

1. Ալիշանի աշխատությանը կցված քարտեզում Բաղաբերդը, Բաղակի քարը եւ Կապան քաղաքը ընկնում են ոչ թե Չորքի կամ Կապան գավառի մեջ, ինչպես իրականում կար, այլ՝ Բաղքի:
2. Բաղակի քարը գտնվում է Բաղաբերդի մոտ (700-800 մետր հեռու), այժմյան Վերին Ջրախոր գյուղի տեղում, Ողջագետի աջ ափին:

ՌՈՒԲԵՐՏ ԷՋՄԱՆՅԱՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կապանը՝ հնագույն մշակույթի բնօրրան



ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կապանի երկրագիտական թանգարանի ֆունդապահ

Բարեխառն կլիմա, հարուստ ընդերք, ջրեր, անտառներ, վարելահողեր, հրաշալի արտավայրեր, պաշտպանական բնական միջոցներ ունեցող Կապանում մարդը բնակություն է հաստատել վաղմիջադարյան ժամանակներից: Կապանը հնագիտական տեսակետից ուսումնասիրված չէ (բացառություն են կազմում հնագետ Օնիկ ԽՆԼԻ-Կյանի կողմից կատարված պեղումները), նյութական արժեքների մեծ մասը հայտնաբերվել է հողային, շինարարական աշխատանքների ժամանակ: Բազմազան են հայտնաբերված նյութերը՝ քարեդարյան աշխատանքային գործիքներ, կավե կենցաղային եւ ծիրանաձև անոթներ, բրոնզե արձանիկներ, զենքեր, զարդեր, կենդանակերպ անոթներ, տիեզերքի նախնական պատկերացումն արտացոլող իրեր:

Մեզ հայտնի հնագույն բնակատեղին Շիկահողի Քրկատոր կոչվող վայրն է, ուր հայտնաբերված քարե կացնիկը հնագետները (Պավել Ավետիսյան) վերագրում են մ.թ.ա. 7-6-րդ հազարամյակներին, այսինքն նորքարեդարյան (նեոլիթ) ժամանակաշրջանին:

Հայկական լեռնաշխարհը պղնձի արդյունահանման վաղ կենտրոններից էր, եւ նման խոշոր կենտրոններ են գտնվել Կապանում: Որ Կապանը վաղ մետաղագործության կենտրոն է, վկայում են հայտնաբերված վաղ աստիճանի ծուլման կաղապարները: Պղնձի ու քարի դարի (էնեոլիթ) բնակատեղիներ են ճակատենը (Իրիզիս) եւ Լեռնածորը (Գեղեցուն արտ, Հարսնաջուր):

Մեր լեռնաշխարհում մ.թ.ա.4-րդ հազարամյակից սկսվում է բրոնզի դարը: Բրոնզեդարյան մշակույթի կենտրոններ են Թեղուտը (Չերյու-նուշկա), Շիկահողը, Շրվենաճը, Տանձավերը, Դավիթբեկը, Սյունիքը, Սիզակը, Ներքին Հանը:

Ուշագրավ են Շիկահողում, Քաջարանում եւ Դավիթբեկում հայտնաբերված բրոնզե սակրերը (մ.թ.ա. 2-րդ հազ.ի վերջ-1-ին հազ.): Հետաքրքրական այն է, որ դրանցից առաջինը հայտնաբերվել է հնագույն պղնձահանքի տարածքում, իսկ երկրորդը՝ Քաջարանի բաց հանքում: Տեղական պղնձից դրանց ծուլված լինելը կասկած չի հարուցում, որոշ առումներով նմանվում են լեռնաշխարհի տարբեր անկյուններում հայտնաբերված սակրերին, սակայն մնում են որպես տեղական՝ կապանյան տարբերակ:

Կապանը սյունիքյան տեղական մշակութային օջախի մի մասն է, որը հնագույն ժամանակներից փոխհարաբերությունների մեջ է գտնվել Անդրկովկասի, Արցախի, իսկ մ.թ.ա. 8-7-րդ. նաեւ Թալիշյան եւ Իրանական մշակույթների հետ:

Հնագիտությունը վկայում է Կապանում մետաղամշակության, խեցեգործության, արհեստների զարգացման մասին, ցույց տալիս, որ

տարածաշրջանում եղել է հողագործություն, անասնապահություն, այգեգործություն, մույնիսկ գինեգործություն: Իսկ բրուտագործությունն այստեղ այնպիսի զարգացման է հասել, որ արհեստի արտադրանքը վերածվել է արվեստի նմուշների:

Կապանի տարածքում հայտնաբերված բրոնզե արձանիկները, զարդերը, կավե կենդանակերպ եւ մարդակերպ խեցանոթներն արվեստի յուրահատուկ նմուշներ են վկայում են այն մասին, որ մեր տարածքը եղել է չափից դուրս ծիսականացված: Տարածված է եղել արեգակի, ցուլի, առյուծի, կյանքի ծառի (սոսի), մայր հողի, այծի, օձի, եղջերուի պաշտամունքը:

Մեր նախնիները բնության հետ ապրել են ներդաշնակ կյանքով, պաշտել են բնությունը, արեւը, երկինքը, կյանքը, որոնք իրենց արտացոլում են գտել հայտնաբերված գտածոների մեջ: Դրանք կենդանակերպ անոթներն են՝ ցուլի, խոյի, եղջերուի, թռչունի տեսքով եւ անոթներ՝ զարդարված արեւի, ջրի, կայծակի, օձի, լեռների, կենցաղ ծառի զարդանախշերով, պատկերված են ռեալիստորեն, սնամեջ իրան ունեն: Ի դեպ, շրջակա տարածքների համեմատ Կապանում ավելի շատ են հայտնաբերվել կենդանակերպ անոթներ, որոնք, ինչպես եւ Հայաստանում է, ի հայտ են գալիս ուշ բրոնզե դարի սկզբնափուլերից եւ լայն տարածում են ստանում՝ մ.թ.ա. 8-րդ դարից սկսած:

Յուրահատուկ է դիպվածով Թեղուտ հնավայրից հայտնաբերված մարդակերպ խեցանոթը (մ.թ.ա.7-6րդ): Այն տոնածիսական սպասքի եզակի նմուշ է, օգտագործվել է ծիսական արարողությունների ժամանակ հեղման նպատակով: Նրա աչքերն ու շուրթերն ազուցված են, ունի նուրբ կզակ, բարակ պարանոց, որն իրանի վրա առնված է հնգաթեւ աստղի զարդանախշի մեջ: Խեցանոթի գլխի վրա նույնպես գծագրված է հնգաթեւ աստղ: Հնգաթեւ աստղն արեւելյան հավատալիքներում տարբեր կերպ է մեկնաբանվում: Այն երկնքի աստվածության խորհրդանիշն է, ինչպես նաեւ՝ ուրախության եւ երջանկության:

Ուրախություն եւ երջանկություն, աշխարհիկ կյանքի հաճույք է արտահայտում անգնահատելի մի նմուշ եւս: Դա գինու թասը ձեռքին տղամարդու կավե արձանիկն է: Պարզ երեսուն է, թե ինչպիսի բավականություն է նա տարածել ձեռքերը: Սովորաբար արձանիկները կապված են պտղաբերության եւ բեղմնավորման պաշտամունքի հետ, բայց այս դեպքում այն վկայում է նաեւ մեր տարածքում գինեգործության գոյության մասին:

Հարուստ է Կապանի ուշբրոնզեդարյան մշակույթը: Այդ ժամանակաշրջանում վերջնական կատարելության են հասցվում նախնադարյան մարդու կրոնական եւ գաղափարական պատկերացումները: Բազմաթիվ նյութեր՝ ցուլի, եղջերուի, թռչունի, խոյի, օձի տեսքով խեցանոթները, կապվում են երկրագործական-անասնապահական հավատալիքների հետ: Դատելով հայտնաբերված նյութերից՝ մեզ մոտ տարածված է եղել ցուլի եւ եղջերուի պաշտամունքը: Եղջերուների արձանիկները վկայում են լուսատուների պաշտամունքը (դրանց հիանալի նմուշներ հայտնաբերված են Բաղաբուրջում եւ Շիկահողում): Եղջերուն հավանաբար նաեւ մայրության, պտղաբերության, առատության խորհրդանիշ է: Կարծիք կա, որ արուն՝ որսորդու-



Տղամարդու արձանիկ գինու թասով
Թեղուտ | մ.թ.ա. VIII-VI դար



Կոշկանե անոթ
Տանձավեր | մ.թ.ա. XII-XI դար



Սանձ
Թեղուտ | մ.թ.ա. VIII-VI դար



Կախազարդ
մ.թ.ա. II հազ. վերջ | հազ. սկիզբ

Խեցանոթ ցուլի գլխով
Շիկահող | մ.թ.ա. VII-VI դար

թյան, եղը՝ գեղեցկության խորհրդանիշ է:

Ցուլը կապվում է լուսնի պաշտամունքի հետ՝ միաժամանակ դրսեւորելով բեղմնավորման, ուժի, քաջող կենդանու խորհուրդը: Արվեստի գլուխգործոց է Շիկահողում հայտնաբերված ցուլի գլխով խեցանոթը (Շիկահող, մ.թ.ա. 7-6րդ), որն օգտագործվել է ծիսական արարողությունների ժամանակ: Այն պատրաստված է խնամքով մշակված կավից, սնամեջ օղակով անոթ է, ունի երեք ոտք, երեք բերան, որոնցից մեկը ոճավորված է ցուլի գլխով: Իրանն ամբողջությամբ զարդանախշված է: Սակավաջուր Հայաստանում ջրի պաշտամունքն ունեցել է հսկայական մշակույթ: Տվյալ դեպքում ցուլը խորհրդանշում է ջրի պաշտամունքը: Իգուր չէ, որ որպես ծրուակ ընտրվել է ցուլի գլուխը, որի բերա-

նից երկնային ջուրը պետք է հոսեր երկրի վրա: Ցուլի եւ նյուս ծրուակների առաջամասերը զարդարված են կենցաղ ծառի պատկերով:

Կենցաղ ծառի մասին. հայոց հեթանոսական մշակույթում կարեւոր դեր ուներ կյանքի ծառը՝ սոսիս, որը սուրբ ծառ է համարվել: Այս ծառի օգնությամբ քրմերը գուշակություններ են արել: Սոսիս, որի հնագույն անտառներից մեկը մեր կողմերում է, բազմիցս ներկայացվել է Կապանյան բրոնզեդարյան մշակույթում:

Արեգակի պաշտամունքը եղել է հնագույն եւ կարեւորագույն պաշտամունքներից մեկը, որի հիմքում ընկած է կյանքի հավերժության, հարություն առնելու գաղափարը: Արեգակը պատկերված է տարբեր խեցանոթների վրա, բրոնզազարդերին, ճակատակալներին եւ այլն:

Մթանշելի գործեր են զույգ արե-

գակի սկավառակով կախազարդերը (մ.թ.ա. 2-րդ հազ.-ի վերջ, 1-ին հազ. սկիզբ), որոնք կապված են արեւի պաշտամունքի հետ: Սկավառակների միջեւ արված է գեղեցիկ հասկանախշ, որը կապված է բնության զարթոնքի, բերրի ամռան գաղափարի հետ:

Կապանում գտնված որոշ նյութեր ցույց են տալիս, որ մեր նախնիները որոշակի պատկերացումներ ունեին երկնային մարմինների մասին: Դրա վառ օրինակն է կետագարդ եռանկյունիներով նախազարդված բրոնզե թիթեղյա սկավառակը՝ քունքազարդը (մ.թ.ա.14-13րդ): Թվում է, թե մեր նախնիները տիրապետել են տիեզերքի արեակենտրոն գաղափարին, եթե հաշվի առնենք, որ քունքազարդի կենտրոնում պատկերված է արեգակը՝ շրջապատված մոլորակներով եւ լուսատուներով:

Քանդակագործական արվեստի եզակի նմուշ է Կապանի Սիզակ գյուղում 1944թ. հայտնաբերված, Գորիսի երկրագիտական թանգարանում պահպանվող առյուծի բրոնզե արձանիկը: Առյուծի թաթը վնասված է, կշռում է 5 կիլոգրամ, ունի 20,5սմ երկարություն, 7,5 սմ լայնություն, 13սմ բարձրություն: Որպես հուճկ՝ անկասկած օգտագործվել է կապանյան պղինձը: Վայրություն կա այն մասին, որ Սիզակից ոչ թե մեկ, այլ առյուծի երկու արձանիկ է հայտնաբերվել: Մյուսը, լուրերի համաձայն, տարվել է Ռուսաստան: Արձանիկները թվագրվում են մ.թ.ա 8-7 դդ, այսինքն վերաբերում են Վանի թագավորության ժամանակաշրջանին եւ մի վաղ վկայություն են, որ Կապանը ընդգրկված է եղել Վանի թագավորության տնտեսական եւ մշակութային կյանքի ոլորտում:

Առյուծի պաշտամունքը պատահական լինել չէր կարող. «Որպես ուղեկից կենդանի՝ շատ հաճախ արեւի հետ հանդես է գալիս նաեւ առյուծը: Հայտնաբերված հնագիտական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արեւ-առյուծ կապը շատ ուժեղ է արտահայտված» (Անժելա Տերյան, «Ար աստծո պաշտամունքը Հայաստանում», Երեւան 1995, էջ 9):

Իսկ Ռ.Իշխանյանը նկատել է. «Առյուծը, առհասարակ, կարեւոր տեղ է ունեցել Արարատի թագավորության արվեստում: Առյուծը Հայկ աստծո խորհրդանիշներից մեկն էր: Պալատների պատերին հաճախ առյուծ էին նկարված» («Պատկերազարդ պատմություն հայոց», էջ 110):

Պաշտամունքային նյութերից բացի արժե ներկայացնել մի հետաքրքիր գտածո, որը ցույց է տալիս, որ մեր նախնիները զբաղվել են ձիաբուծությամբ, գործ են ունեցել ձիու հետ: Դա երկաթի տարածման շրջանում պատրաստված բրոնզե սանձն է (Թեղուտ, մ.թ.ա.8-6րդ), որի նմանները հայտնաբերված են նաեւ Արցախում ու Վրաստանում եւ նմանվում են իրն արեւելյան սանձերին: Սանձը պատրաստված է մեծ վարպետությամբ, կազմված է երկմաս երախճաններից, որոնցից մեկի ծայրը կրտրված է:

Կապանում բազմազան են հայտնաբերված նյութերը՝ զենքեր (դաշույն, թուր, կրծքազրահ, նետասլաք, տեգի ծայրակալ), մոզական մշակութային իրեր (հնայիլ, գանգուլակ, կախիկ), զարդեր (ճակատակալ (դիադեմա), կախազարդ, ճարմանդ, ուլունքներ, ապարանջան, մատանի, ականջօղեր, մանյակ), գոտիներ, կրճակներ, ասեղներ, գամեր, կոշկանձե անոթներ եւ այլն, որոնք ցույց են տալիս մշակույթի բարձր զարգացումը մեր տարածքում:

Կապանը հնագիտական առումով ուսումնասիրված չէ, եւ կուսակված շատ արդյունքի պատասխաններ կարող են տալ միայն հնագիտական պեղումները:

ՆԱԳՂՈՒԻՒՎՅԱԼՆԵՐ



**Նայրենական մեծ դա-
ստերազմում զոհված կա-
դանցիների հիշատակը
հավերժացնող կոթող**
1941-45թթ. Նայրենա-
կան մեծ դաստերազմին
մասնակցել է շուրջ 7 հա-
զար կադանցի: Նրանցից
3036-ը զոհվել է ռազմա-
նակասում: Երեք հոգի ար-
ժանացել է Խորհրդային
Միության հերոսի բարձր
կոչման՝ Նունան Ավետի-
սյան, Մուշեղ (Միխայել)
Նարությունյան (Նարու-
թյունով), Գոգա Աղամի-
րով (Աղամիրյան):



**Մեծ եղեռնի հուշակոթո-
ղը Բաղաբուրջի հուշա-
համալիրում**



**Փարեզին
Նժդեհի
հուշահամալիր**




**Անհայտ կորած զինվորի հուշաբառ՝ Բաղաբուրջի
հուշահամալիրում**
Արցախյան դաստերազմում զոհվեցին 177 կադան-
ցի ազատամարտիկ եւ 100-ից ավելի խաղաղ բնա-
կիչ:



Դավիթ Բեկի արձանը

...Եվ պահենք այս հողը մի բուռ, Անունը Հայաստան պահենք

Համո Սահյան



Կաղան ֆաղափ «հովանավոր» լեռն է Խուսուփե

Հները նրա լանջերին կազմակերպել են Վարդավառի եւ այլ փոնախմբություններ:

Ըստ մի ավանդագրության՝ Խուսուփուփի սրբաբերդից բերված ջուրը հրաշագործ է եւ կասեցնում է դաշտերը համակած մորեխի պարսերը:

Ըստ մի այլ գրության՝ Խուսուփուփի վրա երկնքից կրակներ են ընկնում եւ այդ ժամանակ փեսանոցների լեզուն կապ է ընկնում:

Դիցական լեռ է: Անվանումը ստուգաբանված է որպես աղոթարան:


Արեւելյան եւ հյուսիսային կողմերը կործանված են անդունդներով եւ վիհերով:

Լեռան ամբողջ վեհությունը երևում է Շիշբար գագաթից: Բուսածածկույթն ունի շուրջ 150 տեսակ:

Լեռան փեջին ամփոփված է Քարեգին Նժդեհի աճյունը:

ՈՐԲԵՐՑ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՎԱԳ ԵՓՐԵՄՅԱՆ



Պարունակներ

Քաղաքներից մեկն է սա -
Հորիզոն, ծառեր՝
Զարմանալի քերչություն, զարմանալի
ցավ,
Տոնին, սիրուն մասնակից թիկնոցներն
առեք,
Ապրենք մահը նախորդած, կյանքը
մնացրալ...

Քաղաքներից մեկն է սա -
Անձրուներ բերող,
- Հիշարկներ կզան դեռ, որ փարվեն
ֆոնին,
Մեզ անարվեստ կներեն փխտո աքերով
Անցորդները անցողիկ՝ անդաքեր
փոնին...

Քաղաքներից մեկն է սա -
Ու չի նահանջի,
Քանի ճշում է խորքից սերը՝ բախտ առ
բախտ,
Թիկնոցների մեջ մարած անձրուներ
անջիդ,
Անցորդների դեմքերում՝ ասուպներ
առկալս...

Քաղաքներից մեկն է սա -
Կրկնվող ասուպ,
Եվ թիկնոցները սրբում շողողում են
սեւ,
Եվ անցորդը երկնքի ձայներն է լսում,
Եվ զնգում է երկնային խրախճանքը՝
սեր...

Քաղաքներից մեկն է սա -
Անանցնող բախտի -
Ջղածգված դեմքերի աքերում խաղաղ, -
Կամ անցորդը կզնա, սերը կհաղթի,
Եվ կամ փոռը... - մեր ուսից կախված մի
մախաղ...

Քաղաքներից մեկն է սա -
Ընթացքից հեռու,
Լեռը մառախուղի մեջ՝ կույր
պայծառաբեւ,
Անցորդներին անցողիկ լեռն է ներելու -
Վերջին փոնին - լքելով մեր դեմքերն ու
մեզ...

Քաղաքներից մեկն է սա -
Պարսքը՝ մեղեդի -
Մի թե հանկարծ կցնդի ընկալումը չինջ,
Անցորդների սրբերով հեռացող գեպի
Ջղջում - ափերը թողած մեզ, նրան ու
ինձ...

**«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»
շնորհակալություն է
հայցնում Կաղանի
երկրագիտական
թանգարանի կոլեկցիվին
(ՏՆՕՐԵՆ՝ Գրիշա Սմբասյան)՝
թերթի սույն թողարկման
աջակցելու համար:**

Սյունյաց Երկիր
տ ա ս ո ճ օ Ր յ ա թ Ե Ր Ր
գլխավոր խմբագիր՝
ՍԱՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Ծախումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Գրումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
© նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր

Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 8 տպագրական մամուլ: Տպարանակը՝ 3300, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 06.09.2008թ.: